

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ԴԻԼԻՉԱՆ» ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿ
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ

2007-2011 թթ.

ՄՇԱԿՎԵԼ Է «ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ
ՉՔԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ» ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

Ե Ր Ե Վ Ա Ն 2 0 0 6

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ն Ե Ր Ա Ծ ՈՒ Թ Յ ՈՒ Ն	5
Բ Ա Ժ Ի Ն 1. «Դիլիջան» ազգային պարկի ստեղծումը և տեղադրությունը.....	8
Բ Ա Ժ Ի Ն 2. «Դիլիջան» ազգային պարկի բնական պայմանները.....	9
2.1. ԿԼԻՄԱՆ	9
2.2. ՌԵԼԻԵՖԸ	9
2.3. ԶՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ.....	10
2.4. ՀՈՂԵՐԸ	10
2.5. ԲՈՒՄԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ.....	11
2.5.1. Ֆլորան	11
2.5.2. Բուսականությունը.....	11
2.6. ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ.....	13
2.6.1. Անողնաշարավորներ	13
2.6.2. Ողնաշարավորներ	13
Բ Ա Ժ Ի Ն 3. «Դիլիջան» ազգային պարկի սահմանները.....	15
3.1. «Դիլիջան» ազգային պարկի սահմանների որոշման սկզբունքները	15
3.2. «Դիլիջան» ազգային պարկի սահմանների նկարագրությունը	15
3.3. «Դիլիջան» ազգային պարկի պահպանական գոտու նկարագրությունը	18
3.4. Համայնքների վարչական սահմաններում պետական սեփականության անտառային տարածքների սահմանների և կատեգորիայի ճշգրտում	19
Բ Ա Ժ Ի Ն 4. «Դիլիջան» ազգային պարկի տարածքա-գործառնական գոտիները.....	20
4.1. «Դիլիջան» ազգային պարկի արգելոցային գոտիների սահմանների և տեղանքների նկարագրությունը	20
4.1.1. «Աղավնավանքի կենու» արգելոց.....	20
4.1.2. «Խաչարձանի կաղնուտներ» արգելոց	21
4.1.3. «Հաղարծնի հաճարկուտներ» արգելոց	21
4.1.4. «Բնական սոճուտների» արգելոց.....	22
4.2. «Դիլիջան» ազգային պարկի արգելավայրային գոտիների սահմանների և տեղանքների նկարագրությունը	22
4.2.1. «Դիլիջանի ջրաբանական» արգելավայր	22
4.2.2. «Ֆրոլովո Բալկա» արգելավայր.....	23
4.3. «Դիլիջան» ազգային պարկի ռեկրեացիոն գոտիների սահմանների և տեղանքների նկարագրությունը	24
4.3.1. Շամախյան-Ֆիոլետովոյի ռեկրեացիոն գոտի	24
4.3.2. Բլրանի ռեկրեացիոն գոտի	24
4.3.3. Դիլիջանի ռեկրեացիոն գոտի.....	25
4.3.4. Գոշի ռեկրեացիոն գոտի	25
4.3.5. Հաղարծնի ռեկրեացիոն գոտի.....	26
4.3.6. Գոշ-Աղավնավանքի ռեկրեացիոն գոտի	26
4.3.7. Աղստև-Գեոկի ռեկրեացիոն գոտի	26
4.4. «Դիլիջան» ազգային պարկի տնտեսական գոտու սահմանների և տեղանքների նկարագրությունը	27
4.5. «Դիլիջան» ազգային պարկի տարածքա-գործառնական գոտիների արդյունավետ կառավարմանն ուղղված գործողություններ	27
Բ Ա Ժ Ի Ն 5. «Դիլիջան» ազգային պարկի կառավարման ներկա առանձնահատկությունները և դրա բարելավմանն ուղղված գործողությունների պլանը.....	28
5.1. «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կառավարման բարելավման գործողություններ	33

Բ Ա Ժ Ի Ն 6. «Դիլիջան» ազգային պարկին հարակից համայնքների սոցիալ-տնտեսական բնութագիրը և շահագրգիռ կողմերի հետ պարկի մասնակցային կառավարման գործողությունների պլանը	34
6.1. Համայնքների սոցիալ-տնտեսական ընդհանուր վիճակը	34
6.2. Համայնքների կողմից «Դիլիջան» ազգային պարկի բնական պաշարների օգտագործումը	35
6.2.1. Ջրային ռեսուրսների օգտագործումը	35
6.2.2. Ռեկրեացիոն նպատակներով տարածքների օգտագործումը	35
6.2.3. Արածեցումը	35
6.2.4. Բուսական պաշարների օգտագործումը	36
6.2.5. Կենդանական պաշարների օգտագործումը	37
6.3. Բնական պաշարների օգտագործման բնագավառում բնակչության իրազեկությունը, «Սևան» ազգային պարկի և շահագրգիռ կողմերի միջև փոխհարաբերությունների բնույթը	37
6.4. «Դիլիջան» ազգային պարկի և դրա պահպանման գոտու տարածքներում բնական պաշարների օգտագործումից ստացված շահույթի արդարացի բաշխման առանձնահատկությունները	38
6.5. «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կողմից բնական պաշարների պահպանումը և օգտագործման կարգավորումը	39
6.6. «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի և շահագրգիռ կողմերի մասնակցային կառավարման գործողություններ	40

Բ Ա Ժ Ի Ն 7. «Դիլիջան» ազգային պարկի բնական էկոհամակարգերի ներկա վիճակը և դրանց բարելավմանն ուղղված գործողությունների պլանը	42
7.1. ՋՐԱՅԻՆ ԷԿՈՂԱՍՏԱԿԱՐԳԵՐ	42
7.1.1. Պարզ և Գոշ լճերի էկոլոգիական վիճակը	42
7.1.2. Գետերի էկոլոգիական վիճակը	42
7.1.3. «Դիլիջան» ազգային պարկի ջրային պաշարների կառավարման բարելավման գործողություններ	44
7.2. ՋՐԱՅԻՆ ԿԵՆՍԱԲԱԶՍԱԶՆՆՈՒԹՅՈՒՆ	44
7.2.1. Ձկներ	44
7.2.2. «Դիլիջան» ազգային պարկի ձկնային պոպուլյացիաներին սպառնացող վտանգները	46
7.2.3. Խեցգետին	47
7.2.4. «Դիլիջան» ազգային պարկի ջրային կենսաբազմազանության կառավարման բարելավման գործողություններ	48
7.3. ՑԱՄԱՔԱՅԻՆ ԷԿՈՂԱՍՏԱԿԱՐԳԵՐ	48
7.3.1. Բուսական աշխարհի հաշվառումը, վիճակը և կառավարման բարելավման գործողություններ	48
7.3.2. «Դիլիջան» ազգային պարկի բուսական կենսաբազմազանության կառավարման բարելավման գործողություններ	56
7.3.3. Կենդանական աշխարհի հաշվառումը, վիճակը և գործողությունների պլանը	56
7.3.4. «Դիլիջան» ազգային պարկի կենդանական կենսաբազմազանության կառավարման բարելավման գործողություններ	60
7.4. «Դիլիջան» ազգային պարկի անտառույթագրում	60
7.4.1. Անտառային տարածքների դինամիկան ըստ հողատեսքերի	60
7.4.2. Ազգային պարկի անտառների գնահատում	62
7.4.3. «Դիլիջան» ազգային պարկի անտառային տարածքների կառավարման բարելավման գործողություններ	73

Բ Ա Ժ Ի Ն 8. «Դիլիջան» ազգային պարկում տուրիզմի և ռեկրեացիայի առանձնահատկությունները և դրանց կարգավորմանն ուղիներն ու գործողությունների պլանը	77
8.1. «Դիլիջան» ազգային պարկի և դրա պահպանական գոտու բնական ու մշակութային առանձնահատկությունները	77
8.1.1. Առողջարարական պաշարներ	77
8.1.2. Բնական և մշակութային ժառանգություն	77
8.2. «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի գործունեությունը տուրիզմի և ռեկրեացիայի կազմակերպման բնագավառում	78
8.3. Տուրիզմի և ռեկրեացիոն գործունեության գնահատականը «Դիլիջան» ազգային պարկի տարածքում	78
8.4. «Դիլիջան» ազգային պարկի և դրա պահպանական գոտու տարածքներում տուրիզմի զարգացման ձևերը և երթուղիները	79
8.4.1. Տուրիզմի զարգացման ձևերը	79
8.4.2. Էկոտուրիզմ	80
8.4.3. Տուրիստական երթուղիներ	80
8.5. Տուրիստական և ռեկրեացիոն նշանակության տարածքներին սպառնացող վտանգները	81

8.6. «Դիլիջան» ազգային պարկի և դրա պահպանական գոտու տարածքներում տուրիզմի և ռեկրեացիոն գործունեության կանոնակարգման գործողությունները	81
---	----

Բ Ա Ժ Ի Ն 9. «Դիլիջան» ազգային պարկում կենսաբազմազանության մոնիտորինգի համակարգի ներդրման և իրականացման գործողությունների պլանը	84
--	-----------

Հ Ա Վ Ե Լ Վ Ա Ճ Ն Ե Բ.....	87
-----------------------------------	-----------

ՀԱՎԵԼՎԱԾ 1. «Դիլիջան» ազգային պարկի և «Դիլիջան» ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպության կառավարման բարելավման գործողությունների պլան	88
ՀԱՎԵԼՎԱԾ 2. Գույքագրում անցած բնական և մշակութային հուշարձանները, դրանց կարգավիճակը և տուրիզմի զարգացման առաջարկությունները	92
ՀԱՎԵԼՎԱԾ 3. Կենսաբազմազանության մոնիտորինգի համակարգը և դրա ներդրումը «Դիլիջան» ազգային պարկում.....	95
Քարտեզ 1. Ռելյեֆը	97
Քարտեզ 2. Ջրագրությունը	98
Քարտեզ 3. Կարմիր գրքում գրանցված առավել ուշադրության արժանի և էնդեմիկ բուսատեսակների բաշխվածությունը.....	99
Քարտեզ 4. Դեղաբույսերի բաշխվածությունը	100
Քարտեզ 5. Ուտելի բույսերի բաշխվածությունը	101
Քարտեզ 6. Կարմիր գրքում գրանցված կենդանիների տեսակների բաշխվածությունը	102
Քարտեզ 7. Ազգային պարկի և դրա պահպանական գոտու սահմանները	103
Քարտեզ 8. Ազգային պարկի տարածքա-գործառնական գոտիները	104
Քարտեզ 9. Դեպի ամառային արոտավայրեր գյուղատնտեսական կենդանիների տարանցիկ տեղափոխման երթուղիներ	105
Քարտեզ 10. Անտառների բաշխվածությունն ըստ գերակշռող ծառատեսակների և հասակային փուլերի	106
Քարտեզ 11. Անտառների բաշխվածությունն ըստ բոնիտետային դասերի	107
Քարտեզ 12. Անտառների բաշխվածությունն ըստ լրիվության	108
Քարտեզ 13. Բնական և մշակութային հուշարձանների բաշխվածությունը.....	109
Քարտեզ 14. Տուրիստական հիմնական երթուղիները	110

Ն Ե Ր Ա Ծ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

«Դիլիջան» ազգային պարկի կառավարման պլանը մշակվել է 2004-2006 թվականների ընթացքում Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության Բնական պաշարների կառավարման և չքավորության նվազեցման ծրագրի շրջանակներում՝ Գլոբալ էկոլոգիական հիմնադրամի տրամադրած դրամաշնորհային միջոցներով:

«Դիլիջան» ազգային պարկի կառավարման պլանի մշակման համար հիմք են հանդիսացել ռազմավարական նշանակության այնպիսի փաստաթղթեր, ինչպիսիք են՝

- Բնական պաշարների կառավարման և չքավորության նվազեցման ծրագրի իրականացման վերաբերյալ Հայաստանի Ազգային Ժողովի կողմից վավերացված Գլոբալ էկոլոգիական խնամառու դրամաշնորհային հիմնադրամի Համաձայնագիրը՝ Հայաստանի Հանրապետության և Միջազգային Չարզացման Ընկերակցության միջև, որպես Գլոբալ էկոլոգիական հիմնադրամի իրականացնող գործակալության (2002 թվ.):
- Բնական պաշարների կառավարման և չքավորության նվազեցման ծրագրի գնահատման փաստաթուղթը (2001 թվ.):

Բացի այդ, հաշվի են առնված Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնած մի շարք միջազգային պարտավորություններ, որոնք արտահայտված են Հայաստանի Ազգային Ժողովի կողմից վավերացված այնպիսի միջազգային կոնվենցիաներում, ինչպիսիք են՝

- Կենսաբանական բազմազանության մասին – 1993 թվ.
- Համաշխարհային բնական և մշակութային ժառանգության պահպանության մասին – 1994 թվ.
- Անապատացման դեմ պայքարի կոնվենցիա այն երկրներում, որոնք ենթարկվում են լուրջ երաշտի և/կամ անապատացման, հատկապես Աֆրիկայում - 1997 թվ.
- Տեղեկատվության հասանելիության, շրջակա միջավայրին առնչվող որոշումների ընդունմանը հասարակայնության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին – 1998 թվ.:

«Դիլիջան» ազգային պարկի կառավարման պլանի մշակման ընթացքում մեծ ուշադրություն է հատկացվել Հայաստանի Հանրապետության այնպիսի օրենքների և օրենսգրքերի պահանջներին, ինչպիսիք են՝

- Բնության պահպանության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության հիմունքները – 1991 թվ.
- Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին – 1991 թվ., ինչպես նաև սույն օրենքի նոր նախագծին.
- Բուսական աշխարհի մասին – 1999 թվ.
- Կենդանական աշխարհի մասին – 2000 թվ.
- Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին – 2001 թվ.
- Ազգաբնակչության էկոլոգիական կրթության և դաստիարակության մասին – 2001 թվ.
- Հողային օրենսգիրքը – 2001 թվ.
- Ջրային օրենսգիրքը – 2002 թվ.:

Բացի այդ, «Դիլիջան» ազգային պարկի կառավարման պլանի մշակման ընթացքում հաշվի են առնվել նաև Հայաստանի կառավարության կողմից հավանության արժանացած այնպիսի ծրագրեր, ինչպիսիք են՝

- Հայաստանի շրջակա միջավայրի պահպանության գործողությունների ազգային ծրագիրը – 1998 թվ.
- Հայաստանում անապատացման դեմ պայքարի գործողությունների ազգային ծրագիրը – 2001 թվ.

- Հայաստանի բնության հատուկ պահպանվող տարածքների զարգացման պետական ռազմավարություն և գործողությունների ազգային ծրագիրը – 2002 թվ.:

Հարկ է նշել, որ «Դիլիջան» ազգային պարկի կառավարման պլանի մշակումը Հայաստանի կառավարության 2006 թվ. գործունեության միջոցառումների ծրագրում ընդգրկված է որպես գերակա խնդիր:

Կառավարման պլանի մշակման ընթացքում ուսումնասիրվել և գնահատվել են «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կառավարման առանձնահատկությունները: Ընդ որում՝ գնահատումն իրականացվել է 2005 և 2006 թվականներին՝ Վայրի բնության պահպանության հիմնադրամի (WWF) և Համաշխարհային բանկի մշակած մեթոդիկայով: Գնահատման արդյունքում մշակվել են ազգային պարկի կառավարման բարելավման գործողություններ, որոնք ուղղված են ինչպես «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կառուցվածքային բարեփոխումներին, այնպես էլ կադրերի մասնագիտական պատրաստվածությանն ու ծառայողական պարտականությունների սահմանմանը:

Մեծ ուշադրություն է հատկացվել «Դիլիջան» ազգային պարկին հարակից համայնքների սոցիալ-տնտեսական բնութագրին և շահագրգիռ կողմերի հետ պարկի մասնակցային կառավարման հնարավորություններին: Ընդ որում՝ մասնակցային կառավարման գործողությունները ուղղված են «Դիլիջան» ազգային պարկի և դրա պահպանական գոտու բնական էկոհամակարգերի բարելավմանը, ազգային պարկին հարակից համայնքների վարչական սահմաններում պետական սեփականության անտառային տարածքների կառավարմանը, ինչպես նաև տուրիզմի և ռեկրեացիայի կարգավորմանը:

Կառավարման պլանի մշակման ընթացքում գնահատվել է «Դիլիջան» ազգային պարկի և դրա պահպանական գոտու տարածքներում տնտեսական գործունեության, բնական պաշարների օգտագործման բնագավառում շահագրգիռ կողմերի միջև փոխհարաբերությունների բնույթը, բացահայտվել են պարկին հարակից համայնքների բնակչության կողմից կենսաբանական ռեսուրսների (անտառ, անտառային կողմնարդյունք, արոտավայրեր, ջրային կենսաբազմազանություն) օգտագործման հասանելիության և օգտագործումից ստացված շահույթի արդարացի բաշխման առանձնահատկությունները: Իրականացվել է կենսաբանական և գենետիկական ռեսուրսների (բնափայտ, անտառային պտուղներ և հատապտուղներ, ուտելու բույսեր, կերաբույսեր, դեղաբույսեր, սնկեր, խեցգետիններ, ձկներ, թռչուններ, կաթնասուններ) գույքագրում, բացահայտվել են էկոհամակարգերի հավասարակշռությունը խախտող հիմնական գործոնները, որոշվել են շրջակա միջավայրի վրա տնտեսական գործունեության տարբեր ձևերի ազդեցության չափանիշները և մշակվել են էկոհամակարգերի վիճակի զարգացման միտումների կանխագուշակման մեթոդները: Բացի այդ, դիտարկվել են նաև «Դիլիջան» ազգային պարկի տարածքում տուրիզմի և ռեկրեացիայի զարգացման ուղիները, գույքագրվել են բնական և մշակութային ժառանգության օբյեկտները:

Մեծ ծավալի աշխատանքներ են իրականացվել «Դիլիջան» ազգային պարկի և դրա պահպանական գոտու քարտեզագրման ուղղությամբ: Կենսաբազմազանության և անտառային տարածքների գույքագրման արդյունքների հիման վրա որոշվել և քարտեզագրվել են «Դիլիջան» ազգային պարկի տարածքա-գործառնական գոտիները: Քարտեզագրվել են նաև Կարմիր գրքում գրանցված, էնդեմիկ, հազվագյուտ բուսական ու կենդանական տեսակների տեղաբաշխումը, անտառային տարածքների բաշխվածությունը ըստ ծառուտների լրիվության, բոնիտետի դասերի, տարիքային խմբերի: Տրվել են հիմնական տուրիստական երթուղիների քարտեզը և ազգային պարկի տարածքով դեպի ամառային արոտավայրեր գյուղատնտեսական կենդանիների տարանցիկ տեղափոխման երթուղիների քարտեզը:

«Դիլիջան» ազգային պարկի կառավարման պլանը կապահովի բնապահպանական և տնտեսական ոլորտների ինտեգրացման ուղղությամբ նախատեսված գործողությունների իրականացումը: Այդ տեսակետից կարևոր

նշանակություն ունի ազգային պարկի և կենսաբանական բազմազանության մոնիտորինգի իրականացումը, որը կարող է հիմք հանդիսանալ ընկալելու ազդեցության էությունը և միջոցներ ձեռնարկել պահպանության համար: Մոնիտորինգի իրականացման գործողությունները կնպաստեն ազգաբնակչության համար ազգային պարկի տնտեսական արժեքների հասանելիությանը, ինչպես նաև տեղական համայնքներին շահույթի մասնահանման արդյունավետ քաղաքականության և մեխանիզմների մշակմանը, որը հնարավորություն կտա ազգային պարկի լիարժեք գործունեության համար ապահովել կայուն ֆինանսավորում:

«Դիլիջան» ազգային պարկի կառավարման պլանը կնպաստի գործող իրավական ակտերի առավել արդյունավետ և հավասարակշռված կիրարկմանը, որի հետևանքով զգալիորեն կկանխարգելվեն գլոբալ կարևորության կենսաբազմազանության կորուստը, կբարելավվի տնտեսական գործունեության հավասարաչափ իրականացումը: Կառավարման պլանի կարևորագույն նպատակն է ապահովել, որպեսզի կենսաբազմազանության պահպանության պահանջները հավասարակշռվեն տեղական բնակչության կենսամակարդակի բարելավմանն ուղղված օժանդակության հետ:

Բ Ա Ժ Ի Ն 1. «Դիլիջան» ազգային պարկի ստեղծումը և տեղադրությունը

«Դիլիջան» ազգային պարկը, որպես պետական արգելոց, հիմնադրվել է 1958 թվականին: Հայաստանում Խորհրդային կարգերի հաստատումից հետո Դիլիջան քաղաքի մերձակայքում կազմավորվում են Դիլիջանի և Կույբիշևի անտառապետությունները: 1931 թվականին դրանք հանձնվում են հանրապետության Առողջապահության ժողկոմի կուրորտային վարչությանը: Այդ անտառապետությունների բազայի հիման վրա 1937 թվականին կազմավորվում է անտառարդյունաբերական տնտեսություն, որն էլ 1958 թվականի սեպտեմբերին Հայական ՍՍՀ Մինիստրների Խորհրդի թիվ 341 որոշմամբ վերակազմավորվում է պետական արգելոցի: «Դիլիջան» պետական արգելոցի հիմնադրման նպատակն էր պահպանել կաղնու և հաճարենու խոնավասեր (մեզոֆիլ) անտառները, երրորդական դարաշրջանի այնպիսի ռեիկտային տեսակները, ինչպիսիք են հատապտղային կենին և կովկասյան մրտավարդը: Սակայն, ինչպես ցույց տվեց անցած տասնամյակների փորձը, արգելոցն ի վիճակի չէր կատարելու իր առջև դրված խնդիրները: Արգելոցի կազմակերպման ժամանակ հաշվի չի առնվել Դիլիջան քաղաքի և դրա վարչական սահմաններում գտնվող 5 բնակավայրերի, ինչպես նաև դրանց օգտագործման տրված գյուղատնտեսական և այլ հողահանդակների տարածական տեղաբախշվածությունը: Վերջինիս արդյունքում արգելոցի տարածքում հետագայում ի հայտ եկան տնտեսական ակտիվ օգտագործման հողահանդակներ, որոնց շահագործումը խիստ հակասում էր արգելոցային ռեժիմին:

Արգելոցն իր հիմնադրման օրվանից ընդգրկված էր անտառտնտեսվարումն իրականացնող գերատեսչության (Հայաստանի անտառային պետական Կոմիտե, հետագայում՝ «Հայանտառ» անտառտնտեսական արտադրական միավորում, իսկ 1995 թվականից «Հայանտառ» Պետական Փակ Բաժնետիրական Ընկերություն) կազմում: 1995 թվականի օգոստոսին «Դիլիջան» պետական արգելոց» բյուջետային հիմնարկը անցավ ՀՀ Բնապահպանության և ընդերքի նախարարության ենթակայությանը:

ՀՀ Կառավարության 2002 թ. փետրվարի 21-ի թիվ 165 որոշմամբ «Դիլիջան» պետական արգելոցի և դրան հարակից տարածքներում կազմակերպվում է «Դիլիջան» ազգային պարկը: Նույն որոշմամբ «Դիլիջան» պետական արգելոց» բյուջետային հիմնարկը վերակազմավորվում է «Դիլիջան» ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպության: ՀՀ Կառավարության 2002 թվ. մայիսի 11-ի թիվ 920-Ն որոշմամբ հաստատվում են «Դիլիջան» ազգային պարկի և «Դիլիջան» ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունները:

«Դիլիջան» ազգային պարկը տեղադրված է Փոքր Կովկասում՝ Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևելքում: Պարկը տարածվում է Փամբակի, Արեգունու, Միափորի, Իջևանի և Հալաբի հովտահայաց լանջերին՝ 1070-2900 մ բարձրությունների վրա: Պարկի տարածքի մեծ մասը տեղադրված է Արեգունու լեռնաշղթայի հյուսիսային լանջերին: Պարկի արևելյան հատվածները ընդգրկում են Միափորի լեռնաշղթայի հարավային լանջերը, որոնք խոշոր ժայռային մերկացումներով և սանդղաձև տեռասներով իջնում են Գետիկ գետի հովիտը: Հյուսիսից և հյուսիս-արևելքից պարկին հարում է Իջևանի լեռնաշղթան, որի լանջերը հարթ են և միայն վերին մասում դառնում են զառիթափ: Իջևանի լեռնաշղթայի հյուսիս-արևելյան ուղղությամբ շարունակվում է Հալաբի լեռնաշղթան, որի լանջերը աչքի են ընկնում մեծ թեքությամբ՝ հատկապես արևմտյան հատվածում: Արևմուտքից և հարավ-արևմուտքից պարկը շրջափակվում է Փամբակի լեռնաշղթայի ճյուղավորություններով, որոնք Սևանի լեռնանցքում միանում են Արեգունու լեռնաշղթային: Պարկի ցածրադիր հատվածը Աղստև գետի հովիտն է, որի արևմտյան, աջակողմյան, լանջերը հիմնականում ունեն հրաբխային ծագում, իսկ ձախակողմյանը կազմված է նստվածքային ապարներից:

Բ Ա Ժ Ի Ն 2. «Դիլիջան» ազգային պարկի բնական պայմանները

2.1. ԿԼԻՄԱՆ

«Դիլիջան» ազգային պարկի տարածքին բնորոշ է բարեխառն տաք և խոնավ կլիման: Տարեկան միջին ջերմաստիճանի տատանումը չի գերազանցում 24 աստիճանը: Պարկի ցածրալեռնային հատվածում օդի տարեկան միջին ջերմաստիճանը 9.2-10.5 աստիճան է. հունվարին՝ -0.6-1.3, հուլիսին՝ 19.9-21.1 աստիճան: Բացարձակ առավելագույն ջերմաստիճանը՝ 37, բացարձակ նվազագույնը՝ -26 աստիճան: Ծովի մակարդակից 2000 մ բարձրության վրա հունվարին միջին ջերմաստիճանը կազմում է -10-13, իսկ օգոստոսին՝ 13-15 աստիճան: Անսառնամանիք ժամանակահատվածը տատանվում է 200-ից 210 օր: Պարկի տարածքում ձնածածկույթն առաջանում է ոչ ամեն տարի: Չնաշերտի հաստությունը տատանվում է 5-ից 50 սմ, իսկ հյուսիսային լանջերին այն հաճախ գերազանցում է 70 սմ-ը: Տեղումների տարեկան միջին քանակությունը տատանվում է՝ ստորին լեռնային գոտում 537 մմ-ից մինչև 850-860 մմ բարձրալեռնային գոտում: Տեղումների առավել քանակությունը նկատվում է գարնանը (տարեկան նորմայի մոտ 35 տոկոսը), իսկ նվազագույն քանակությունը՝ ձմռանը (մոտ 12 տոկոսը):

2.2. ՌԵԼԻԵՖԸ

Բացարձակ բարձրության մեծ տատանումները, լանջերի տարբեր դիրքադրությունները և խիստ կտրտված ռելիեֆը «Դիլիջան» ազգային պարկի համեմատաբար փոքր տարածքում ստեղծում են բնական պայմանների բացառիկ բազմազանություն: Լավ արտահայտված են ուղղաձիգ գոտիականության լանդշաֆտները՝ բացի նախալեռնային և ալպիական գոտուց: Հատկապես լավ է արտահայտված միջին լեռնային գոտին՝ 1200-1800 մ բարձրություններում: Այստեղ տարածված են կաղնու և հաճարենու սաղարթավոր անտառները, որոնք հանդիսանում են արգելոցի բուսականության հիմնական տիպը: 1900 մ-ից բարձր՝ բարձրալեռնային գոտին է, որին բնորոշ են նոսրանտառները և ենթալպյան բարձրախոտերը: Պարկի տարածքը հատում են բազմաթիվ մեծ և փոքր ձորեր, որոնցից յուրաքանչյուրում ձևավորվում է յուրահատուկ միկրոկլիմա: «Դիլիջան» ազգային պարկի ռելիեֆն իրենից ներկայացնում է տարբեր ուղղություններով ձգվող լեռնաշղթաների ու դրանք միմյանցից բաժանող խորը հովիտների համակարգ (Քարտեզ 1): Պարկի հյուսիս-արևմտյան սահմանից սկսած դեպի արևելք ձգվում է Հալաբի լեռնաշղթան, որն իր այս հատվածում հասնում է մինչև 2778 մ բարձրության: Լեռնաշղթայի լանջերը զառիթափ են, կատարային մասը աչքի է ընկնում սանրակերպ դասավորված ժայռային ելուստներով: Այն Այրի Քար լեռնագագաթի մոտ միանում է նույն ուղղությամբ ձգվող Իջևանի լեռնաշղթային: Վերջինիս բարձրությունն այս հատվածում հասնում է 2787 մ (Այրի Քար): Իջևանի լեռնաշղթայի լանջերը նույնպես զառիթափ են: Բարձրադիր հատվածներում տարածված են աստիճանակերպ, 50-200 մ բարձրությամբ կրաքարային ժայռային կտրվածքներ: Գագաթային մասերում պահպանված են հին հարթեցման մակերևույթները: Լայն տարածում ունեն ռելիեֆի կարստային ձևերը (քարանձավներ, հորեր, կառեր, ձագարներ և այլն): Միջին բարձրություններում (1500-1800 մ) շատ են կարստային աղբյուրները: Ազգային պարկի հարավ-արևմտյան մասը զբաղեցնում է Փամբակի լեռնաշղթայի արևելյան հատվածը, որը Սևանի լեռնանցքում հանգուցվում է Արեգունու և Դիլիջանի լեռնաշղթաներին: Այս հատվածում այն հասնում է մինչև 2732 մ բարձրության: Փամբակի լեռնաշղթայի լանջերը համեմատաբար մեղմաթեք են, քիչ են մասնատված, իսկ գագաթները գմբեթաձև են: Դիլիջանի լեռնաշղթան զբաղեցնում է Աղստև գետի Շամլուղ և գետիկ վտակների միջակայքը: Այն Մեծ Մայմեխ գագաթում հասնում է 2642 մ բարձրության: Լեռնաշղթայի լանջերը համեմատաբար մեղմաթեք են: Լանջերում զարգացած են ակտիվ սողանքային պրոցեսները: Սկսած Սևանի լեռնանցքից, դեպի հարավ-արևելք ձգվում է Արեգունու լեռնաշղթան, որը Մարալիջա գագաթում ունի 2599 մ բարձրություն: Լեռնաշղթան

ազգային պարկի տարածքում հանդես է գալիս ռելիեֆի մեղմ ձևերով: Արևելյան հատվածում՝ Գետիկի աջափնյա հատվածը զբաղեցնում են Միափորի լեռնաշղթայի համակարգի ճյուղավորությունները, որոնց լանջերը, ունենալով արևմտյան դիրքադրություն, բավականաչափ մասնատված են և տեղ-տեղ աչքի են ընկնում մայրական ապարների մերկացումներով: Լեռնագրական խոշոր միավորներից են Աղստևի ու դրա վտակների կողմից ստեղծված էրոզիոն խորը հովիտները: Դրանք նեղ, հիմնականում V-աձև հովիտներ են, որոնք տեղ-տեղ ընդարձակվում են և ստեղծում փոքրիկ միջլեռնային գոգավորություններ: Հովիտների ձևավորման վրա մեծ ազդեցություն ունեն տեկտոնական շարժումները: Գետահովիտներում պահպանված են կառուցվացքային և կուտակումային դարավանդները: Ազգային պարկի տարածքում բավական ակտիվ են լանջային պրոցեսները: Շատ են ակտիվ սողանքները: Խոշոր սողանքներից են՝ Դիլիջանի, Հաղարծնի, Պարզ լճի, Ֆիլլետովոյի և այլն: Լանջային պրոցեսներից լայն տարածում ունեն դեֆլուկցիոն (անտառածածկ տարածքներում), քարաթափվածքային և այլ երևույթները:

2.3. ՋՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

«Դիլիջան» ազգային պարկի տարածքը հարուստ է մակերեսային ջրերով (Քարտեզ 2): Գրեթե բոլոր մեծ կամ փոքր ձորերով հոսում են գետեր և գետակներ: Բազմաթիվ աղբյուրներ սնում են այդ հոսքերին, որոնք լցվում են պարկի հիմնական ջրային արտերիան՝ Աղստև գետը, որը սկիզբ է առնում Փամբակի լեռնաշղթայի հյուսիսային լանջերից՝ 3000 մ բարձրությունից: Վերին հոսանքում հոսում է Մարգահովիտի գոգավորությունով, այնուհետև նեղ կիրճով, ապա ընդարձակվում Դիլիջան և Իջևան քաղաքների մոտ: Գետի երկարությունը 121 կմ է, ջրհավաք ավազանի մակերեսը 2500 կմ²: Գետի տարեկան հոսքը կազմում է 256 մլն. խոր.մ: Աղստևի հիմնական վտակներն են՝ Հովվաջուրը, Շտողանաջուրը, Հաղարծինը, Բլրանը և Գետիկը: Նշված բոլոր գետերն ու գետակները տիպիկ լեռնային են, անձրևներից և ձնհալքից վարարում են գարնան վերջին և ամռան առաջին կեսին: Վարարման ընդհանուր տևողությունը 10-15 օր է և, կախված վարարման ինտենսիվությունից, հնարավոր են սողանքների ակտիվացում և ավիամերձ փլուզումներ: Պարկի տարածքը հարուստ է նաև հանքային աղբյուրներով, որոնցից, իր արդյունաբերական նշանակությամբ, աչքի է ընկնում Բլրանի աղբյուրը, որը հայտնի է «Դիլիջան» անվանմամբ: Այն հիդրոկարբոնատ-մատրիումային կազմի հանքային ջուր է, որում կան նաև սուլֆատներ և մագնեզիում, ինչպես նաև երկաթի, ստրոնցիումի, լիթիումի, ցինկի, բրոմի և պղնձի միկրոտարրեր: Օգտագործվում է աղեստամոքսային հիվանդությունների բուժման համար: Պարկը հայտնի է նաև իր գեղատեսիլ լճերով, որոնցից ամենախոշորը Պարզ լիճն է: Այն գտնվում է Արեգունու լեռնաշղթայի հյուսիսային լանջում՝ 1400 մ բարձրության վրա՝ Դիլիջան քաղաքից 8 կմ հյուսիս-արևելք: Լիճն ունի սողանքային ծագում: Մակերեսը շուրջ 2 հա է, երկարությունը՝ 250 մ, լայնությունը՝ 70 մ, միջին խորությունը՝ 3 մ, ջրի ծավալը՝ 83.8 հազար մ³, ջրհավաք ավազանի մակերեսը՝ 1.52 կմ²: Պարկի մյուս հայտնի լիճը Գոշալիճն է (Տգրկա), որը գտնվում է Պարզ լճից դեպի արևելք՝ ծովի մակարդակից 1500 մ բարձրության վրա: Ունի 56 մ երկարություն, 27 մ լայնություն, հայելու մակերեսը՝ 1.53 հա, ջրհավաք ավազանի մակերեսը՝ 1.34 կմ²: Միջին խորությունը 6 մ է: Պարկի տարածքում հայտնի են նաև Բաչնիլիճը, Բախտիարիլիճը, Ժանգոտլիճը և այլն:

2.4. ՀՈՂԵՐԸ

«Դիլիջան» ազգային պարկի հողային ծածկույթը ներկայացված է հիմնականում երկու հողատիպերով՝ անտառային և լեռնամարգագետնային: Անտառային գոտում գերակշռում են անտառային շագանակագույն հողերը, որոնք աչքի են ընկնում հզորությամբ և հորիզոնների լավ դիֆերենցվածությամբ: Կարբոնատներով հարուստ մայր ապարների վրա զարգացած են կարբոնատա-հումուսային հողերը, որոնք տափաստանացված շագանակագույն հողերի հետ միասին մոզաիկ ձևով հանդիպում են

ողջ անտառային գոտում: Ենթալայան գոտում զարգացած են լեռնա-մարգագետնային սևահողերը: Այնտեղ, որտեղ տարածքը էրոզացված չէ այդ հողերը աչքի են ընկնում հզոր հումուսային շերտով՝ մինչև 40 սմ: Հովիտների համեմատաբար ընդարձակ տեղամասերում տարածվում են ալյուվիալ բերրի հողերը, որոնք հիմնականում վերածված են մշակովի հողերի:

2.5. ԲՈՒՍԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ

2.5.1. Ֆլորան

Դաշտային հետազոտությունների արդյունքում, ինչպես նաև գրական և հերքարիումային տվյալների համաձայն պարզվել է, որ «Դիլիջան» ազգային պարկի և դրա պահպանական գոտու տարածքներում ֆլորան ընդգրկում է անոթավոր բույսերի 1200 տեսակ, որից 977 տեսակը աճում է պարկի տարածքում: Դրանցից 51-ը ծառատեսակներ են, 47-ը՝ թփեր, 696-ը՝ բազմամյա խոտաբույսեր, 176-ը միամյա և երկամյա բույսեր, 7-ը մակաբույծներ (բուսատեսակների ցանկի էլեկտրոնային տարբերակը տրամադրվել է «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ին): Նշված տեսակներից 5-ը հանդիսանում են Հայաստանի էնդեմիկներ: Պարկի պահպանական գոտում հանդիպում են անոթավոր բույսերի 958 տեսակներ (դրանցից 225-ը չեն հանդիպում ազգային պարկի տարածքում): Պարկի տարածքում հանդիպող էնդեմիկ տեսակները աճում են նաև այստեղ (Քարտեզ 3): Բացի այդ, պահպանական գոտում (Աղստև գետի ձորի լանջերի բաց տեղանքներում) աճում է ևս մեկ էնդեմիկ տեսակ՝ Պսեֆելուս Փամբակի (*Psephellus pambakensis*), որը բավականին լայն տարածում ունի Լոռիում և Իջևանում: Ազգային պարկի ֆլորայի 27 տեսակներ ընդգրկված են Հայաստանի Կարմիր գրքում, (պահպանական գոտում դրանք 22-ն են): Ազգային պարկի ֆլորայի 54 տեսակներ հանդես են գալիս որպես դեղաբույսեր (Քարտեզ 4): Դրանց մի մասը չեն կազմում խիտ պոպուլյացիաներ, այլ ցրված հանդիպում են ազգային պարկի տարածքում և այդ պատճառով ներկայումս տնտեսական հետաքրքրություն չեն ներկայացնում, իսկ 41 տեսակներ ուտելի են (Քարտեզ 5):

Բացի այդ, «Դիլիջան» ազգային պարկի տարածքից և դրա պահպանական գոտուց հայտնաբերվել են 480 տեսակի և ենթատեսակի սնկեր, որոնցից 320-ը պատկանում են ազարիկալ սնկերին, 124-ը՝ աֆիլոֆորայիններին և 36-ը՝ գաստերոմիցետներին: Առավել տարածված են դառնամատիտեղ (*Russula*), կաթնասունկ (*Lactarius*), սարդոստայնասունկ (*Cortinarius*), թելիկասունկ (*Inocybe*), ճանճասպան (*Amanita*) ցեղերի միկորիզագոյացնող տեսակները, ինչպես նաև բնափայտ քայքայող սկանջասունկ սովորական (*Pleurotus ostreatus*), կոճղասունկ իսկական (*Armillaria mellea*) տեսակները և Արեթասնկեր (*Polyporaceae*) ընտանիքի ներկայացուցիչները: Նշված սնկերից 176-ը ուտելի են, որոնցից առավել տարածված է և վաճառվում է շուկաներում միայն սկանջասունկ սովորական կամ կախասունկ (*Pleurotus ostreatus*) տեսակը: 38 տեսակի սնկեր թունավոր են և տեղացի բնակիչները դրանց կոչում են գարշասնկեր (պոգանկա), խուսափում են հավաքելուց և վերջին տարիներին թունավորման դեպքեր չեն գրանցվել:

2.5.2. Բուսականությունը

Ազգային պարկի բուսականության գերիշխող տիպը անտառայինն է: Այստեղ գերակշռում են սաղարթավոր տերևաթափ տեսակները՝ արևելյան հաճարենին (*Fagus orientalis*), վրացական կաղնին (*Quercus iberica*), խոշորառնջ կաղնին (*Q. macranthera*), կովկասյան բոխին (*Carpinus caucasica*), դաժին կամ արևելյան բոխին (*C. orientalis*): Մրանց ուղեկցում են դաշտային (*Acer campestre*), սրատերև (*A. platanoides*) և բարձրլեռնային (*A. trautvetteri*) թխկիները, լորենին (*Tilia caucasica*), հացենին (*Fraxinus excelsior*), արոսենին (*Sorbus aucuparia*, *S. graeca* և այլն): Հանդիպում են նաև վայրի պտղատուներ՝ կովկասյան տանձենին (*Pyrus caucasica*), արևելյան խնձորենին (*Malus orientalis*), սալորենին (*Prunus divaricata*), մամխենին (*P. spinosa*), ընկուզենին (*Juglans regia*), սովորական տխլենին (*Corylus avellana*), հոնին (*Cornus mas*), սզնու տարբեր

տեսակներ (*Crataegus*), զկեռենի (*Mespilus germanica*), թխենի (*Padus*) և այլն: Հարուստ է նաև հատապտղատուների բազմազանությունը՝ հաղարջենի (*Ribes*), մոշենի (*Rubus caesius*), մորի (*R. idaeus*), կոկոռչենի (*Grossularia*) և այլն: Անտառի վերին սահմանը եզրափակում են կեչու կորաբուն մերձալայան նոսրանտառային մնացորդները՝ ելունդավոր և թավոտ կեչիների (*Betula pendula*, *B. pubescens*), կաղամախու (*Populus tremula*), այծուռենու (*Salix caprea*) գերակշռությամբ: Հիմնական անտառկազմող ծառատեսակների գերակշռությամբ ծառուտները ներկայացվում են կամ միատարր կաղնուտների, հաճարկուտների և բոխուտների ձևով, կամ էլ խառը՝ դրանց տարբեր խմբավորումների տարբերակներով: Անտառային էկոհամակարգերը ըստ ուղղաձիգ բարձունքային գոտիականության և դիրքադրության ունեն հետևյալ տարածվածությունը: Միջին անտառային գոտու հարավահայաց լեռնալանջերին տարածվում են վրացական կաղնու, իսկ հանդիպակած հյուսիսայաց լաջերին՝ արևելյան հաճարենու անտառային զանգվածները: Դրանից վեր, սկսած 1500 մ բարձրությունից, անտառային գոտին ներկայացնում է խոշորառէջ կաղնին: Բոխին հանդիպում է գրեթե բոլոր տիպի ծառուտներում: Ընդ որում՝ արևելյան բոխին (ղաժին), որպես կանոն, հանդիպում է ստորին անտառային գոտու (մինչև 1500 մ) ենթանտառում, իսկ կովկասյան բոխին՝ մինչև 2000 մ: «Դիլիջան» ազգային պարկի անտառային էկոհամակարգերին բնորոշ է ասեղնատերև ծառատեսակների առկայությունը: Սոճին (*Pinus sosnovskyi*) որոշ տեղերում առաջացնում է խիտ ծառուտներ, հանդիպում է Արեգունի և Փամբակի լեռանշրթանների լանջերին, մասնավորապես՝ Դիլիջանի լեռնանցքի ոլորանի շրջանում: Հանդիպում է նաև Դիլիջան քաղաքի և մերձակա լանջերին: Մեծ հետաքրքրություն են ներկայացնում գիհու նոսրանտառները, որոնք տարածված են Գետիկի հովտում, ինչպես նաև Իջևանի լեռնաշրթայի հյուսիսային հովտահայաց չոր լանջերին: Լավ պահպանված գիհուտներ կան հատկապես Արեղաքար սարի, Աղստև գետին հովտահայաց, Ժայռոտ լանջերին: Գիհու նոսրանտառները ներկայացնում են բազմապտուղ (*Juniperus polycarpus*) և սրաթեփուկ կամ գարշահոտ (*J. foetidissima*) գիհիները: Պարկի տարածքում աճում են նաև գիհու թփային տեսակները՝ երկարատերև (*J. oblonga*) և ցածրաճ (*J. depressa*):

Բուսականության այլ տիպերը ներկայացված են փոքր կղզյակներով՝ անտառային բացատներում կամ անտառի վերին սահմանից վեր: Ազգային պարկի ստորին հատվածում (մինչև 1100 մ բարձրության վրա) փոքր տարածքներով հանդիպում են շիբլյակ կոչված թփուտները, ուր գերիշխում են ցաքի փշոտ (*Paliurus spina-christi*) և չորասեր թփերի մի քանի այլ տեսակներ՝ ծորենի սովորական (*Berberis vulgaris*), չմենի ամբողջաեզր (*Cotoneaster integerrimus*), մասրենի շան (*Rosa canina*), փռչնի կովկասյան (*Celtis caucasica*), դժնիկ Պալլասի (*Rhamnus pallasii*) և այլն: Այս համակեցություններում խոտային ծածկույթը շատ բազմազան է և ներկայացված է հիմնականորեն չորասեր խոտաբույսերով: Այստեղ հանդիպում են նաև տափաստանային բուսականության փոքր կղզյակներ բոտրիոխլոայի (*Bothriochloa ischaemum*) գերակայմամբ, որոնք հիմնականում երկրորդային ծագում ունեն: Անտառագուրկ ոչ մեծ տարածքներում հանդիպում են այս շրջանի համար ոչ բնորոշ շյուղախոտ վալեսյանի (*Festuca valesiaca*) գերակշռությամբ տափաստանային խմբավորումները, որոնց կազմում բավականին շատ են մարգագետնային բուսատեսակները: 1800-1900 մ-ից բարձր տարածված են մերձալայան մարգագետինները, ուր գերիշխում են խառը տարախոտ-հացազգային համակեցությունները: Հիմնական գերակշռող տեսակներն են բարակուտուկ սանրանմանը (*Koeleria cristata*), դաշտավուկ մարգագետնայինը (*Poa pratensis*), դաշտավուկ կաղնուտայինը (*Poa nemoralis*), ոգնախոտ կծկավոր (*Dactylis glomerata*), խմբախոտ բուրավետը (*Anthoxanthum odoratum*), ոսկեվարսակ սիբիրյանը (*Trisetum sibiricum*) և այլն: Այստեղ տարածված են համակեցություններ, ուր գերակայում են վարդակակաչ փնջաձևը (*Anemone fasciculata*), ձկին գորտնուկանմանը (*Trollius ranunculinus*) և կեղծ դանձլամեր սպիտակը (*Veratrum album*), ընդ որում՝ վերջինի տարածումը ուղղակիորեն կապված է արածեցման ինտենսիվության հետ: Մերձալայան գոտու որոշ հատվածներում տարածված են մերձալայան բարձրախոտերի

համակեցությունները, որտեղ ներկայացված են շուշան հայկականը (*Lilium armenum*), ընձախոտ արևելյանը (*Aconitum orientale*), զիվան հսկայական (*Cephalaria gigantea*), ոզնախոտ կծկավորը (*Dactylis glomerata*), զանգակ խմբվածը (*Campanula glomerata*), թթվիճ խոշորածաղիկը (*Betonica macrantha*) և այլն: «Դիլիջան» ազգային պարկի տարածքի ձորերի ժայռոտ հատվածներում ներկայացված է ինտրազոնալ ժայռային բուսականությունը, որի կազմում հատուկ հետաքրքրություն են ներկայացնում պտերների մի քանի տեսակներ՝ բանպոտ Բռաունի (*Polystichum braunii*), բասբայջ սովորական (*Polypodium vulgare*), ասպլենի (*Asplenium*) որոշ տեսակներ: Ազգային պարկի տարածքում գտնվող լճերի և գետերի ափերին ներկայացված է ջրածահճային բուսականությունը, որի կազմում են հիմնականում Հայաստանի համար սովորական տեսակներ՝ ուռենի (*Salix*), բարդի (*Populus*), բոշխ (*Carex*), գորսնուկ (*Ranunculus*), կնյուն (*Juncus*) ցեղերի ներկայացուցիչներ:

2.6. ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ

2.6.1. Անողնաշարավորներ

2.6.1.1. Փափկամարմիններ և Հողվածոտանիներ.

Հայաստանի անողնաշարավորներին վերաբերվող աշխատանքների վերլուծությունը ցույց տվեց, որ «Դիլիջան» ազգային պարկի տարածքում հանդիպում են Փափկամարմինների (*Mollusca*) 69 և Հողվածոտանիների (*Arthropoda*) 1431 տեսակներ (անողնաշարավոր կենդանիների ցանկի էլեկտրոնային տարբերակը տրամադրվել է «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ին): Վերջիններս պատկանում են Միջատների (*Insecta*) դասին: Նշված տեսակներից 6-ը Հայաստանի էնդեմիկներ են: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցանկում ընդգրկված են 3 տեսակներ, որոնք հանդիպում են «Դիլիջան» ազգային պարկի տարածքում: Դրանք են՝ *Parnassius apollo* L., *Cerambyx cerdo acuminatus* Motsch., *Rosalia alpina* L. և *Proserpinus proserpina* Pal.:

2.6.1.2. Խեցգետիններ.

«Դիլիջան» ազգային պարկի տարածքում քիչ քանակությամբ հանդիպում է երկարաչանչ խեցգետինը (*Pontastacus leptodactylus*), այն էլ միայն միայն Պարզ և Գոշ լճերում: Պարկի տարածքով հոսող գետերում այն չի հայտնաբերվել:

2.6.2. Ողնաշարավորներ

2.6.2.1. Չկներ.

Հետազոտությունների ընթացքում «Դիլիջան» ազգային պարկի տարածքով հոսող գետերում, մասնավորապես՝ Աղստև գետում բացահայտվել են 9 ձկնատեսակներ: Դրանք են՝ քուռի կողակը (*Capoeta capoeta*), քուռի բեղուն (*Barbus lacerta cyri*), կովկասյան թեփուղը (*Leuciscus cephalus*), հայկական տառեխիկը (*Alburnoides bipunctatus*), որը էնդեմիկ ձկնատեսակ է, հանդիպում է Աղստև գետի ողջ երկայնքով և դրա վտակների վերին հոսանքներում. սալտակածուկը (*Alburnus filippi*), լերկածուկը (*Barbatula barbatula caucasica*), կարմրախայտը (*Salmo trutta fario*), քուռի քառթակը (*Gobio persus*) և արծաթափայլ լճածածանը (*Carassius auratus*):

2.6.2.2. Երկկենցաղներ.

«Դիլիջան» ազգային պարկի և դրա պահպանական գոտու տարածքներում բացահայտվել են երկկենցաղների 5 տեսակներ: Դրանք ներկայացված են կարգաբանական երկու դասերով՝ Ցատկողներ (*Salientia*), գորտերն ու դողոշներն են – 4 տեսակ և Տրիտոններ (*Cuadata*) – 1 տեսակ:

Հարկ է նշել, որ 2000 թվականին Պարզ լիճ է բաց թողվել 30 երիտասարդ տրիտոններ, որոնք աճեցվել էին լաբորատոր պայմաններում: Այս տեսակը հազվագյուտ է Հայաստանի համար և առաջին անգամ գրանցվել է 1997 թվականին Լոռվա մարզի

Շամլուղ գյուղի ջրային ավազաններում: Նշված երկկենցաղներից ոչ մեկը Հայաստանի Կարմիր գրքում գրանցված չէ:

2.6.2.3. Սողուններ.

«Դիլիջան» ազգային պարկի և դրա պահպանական գոտու տարածքներում բացահայտվել են սողունների 19 տեսակներ (սողունների ցանկի էլեկտրոնային տարբերակը տրամադրվել է «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ին), որոնք բաժանվում են հետևյալ կարգաբանական խմբերի.

- Սողեսներ (Lacertilia) – 12 տեսակ.
- Օձեր (Serpentes) – 6 տեսակ.
- Կրիաներ (Testudines) - 1

Նշված սողուններից ոչ մեկը Հայաստանի Կարմիր գրքում գրանցված չէ:

2.6.2.4. Թռչուններ.

«Դիլիջան» ազգային պարկի և դրա պահպանական գոտու տարածքներում գրանցվել են թռչունների 147 տեսակներ (թռչունների ցանկի էլեկտրոնային տարբերակը տրամադրվել է «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ին), որոնք բաժանվում են հետևյալ կարգաբանական դասերի.

- Սուզակներ (Podicipediformes) – 1 տեսակ.
- Գիշատիչներ (Accipitriformes) – 26 տեսակներ.
- Բաղեր (Anseriformes) – 1 տեսակ.
- Տառեղներ, արագիլներ (Ciconiiformes) – 2 տեսակ.
- Լոր և մոխրագույն կաքավ (Galliformes) - 4 տեսակ.
- Կռունկ (Gruiformes) – 1 տեսակ.
- Որորներ (Charadriiformes) – 2 տեսակ.
- Աղավնիներ (Columbiformes) - 4 տեսակ.
- Կլուներ (Cuculiformes) – 1 տեսակ.
- Բու (Strigiformes) - 4 տեսակ.
- Այծկիթ (Caprimulgiformes) – 1 տեսակ.
- Սև մանգաղաթև (Apodiformes) – 5 տեսակ.
- Մեղվակեր ներկարար և Հոպուպ (Coraciiformes) – 4 տեսակ.
- Փայտփորներ (Piciformes) – 6 տեսակ.
- Ծննդուկներ և երգող թռչուններ (Passeriformes) – 85 տեսակ:

Նշված թռչունների 16 տեսակներ ընդգրկված են Հայաստանի Կարմիր գրքում (Քարտեզ 6):

2.6.2.5. Կաթնասուններ.

«Դիլիջան» ազգային պարկի և դրա պահպանական գոտու տարածքներում հանդիպում են կաթնասունների 49 տեսակներ (կաթնասունների ցանկի էլեկտրոնային տարբերակը տրամադրվել է «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ին): Դրանք բաժանված են հետևյալ 6 կարգաբանական դասերի.

- Միջատակերներ (Insectivora) – 9 տեսակ.
- Կրծողներ (Rodenti) – 17 տեսակ.
- Նապաստակակերպեր (Logomorpha) – 1 տեսակ.
- Չեռքաթևավորներ (Chiroptera) – 7 տեսակ.
- Գիշատիչներ (Carnivora) – 12 տեսակ.
- Կճղակավորներ (Artiodactyla) – 3 տեսակ:

Նշված կաթնասուններից Հայաստանի Կարմիր գրքում գրանցված են 7-ը՝ երկարականջ (ականջեղ) ոզնի, Եվրոպական լայնականջ ծալքաշուրթը, հնդկական վայրենակերպը կամ մացառախոզը, խայտաքիսը, ջրսամույրը, գորշ արջը և վայրի կատուն (Քարտեզ 6):

Բ Ա Ժ Ի Ն 3. «Դիլիջան» ազգային պարկի սահմանները

3.1. «Դիլիջան» ազգային պարկի սահմանների որոշման սկզբունքները

«Դիլիջան» ազգային պարկի նոր սահմանների որոշման սկզբունքներ են հանդիսացել ռելիեֆային առանձնահատկությունները (ջրբաժաններ, ձորակներ, գետեր, գագաթներ, լեռնալանջեր և այլն), որոնք բնության մեջ արտահայտիչ են և հանդիսանում են համեմատաբար կայուն սահմաններ, ինչպես նաև արբանյակային պատկերների վերծանման արդյունքներն ու անտառագետների, քարտեզագիրների, կենդանաբանների, բուսաբանների, հիդրոլոգների դաշտային ուսումնասիրությունների արդյունքները: Հաշվի են առնվել շրջակա լանդշաֆտների էկոլոգիական վիճակի և բնական ռեսուրսների (բուսական, անտառային, կենդանական, ջրային և այլն) պահպանման խնդիրները և ազգային պարկին հարող պետական կադաստրով գրանցված համայնքային սահմանները: Արդյունքում «Դիլիջան» ազգային պարկի մակերեսը կազմել է 33765 հա, իսկ պահպանական գոտու մակերեսը 11063 հա:

3.2. «Դիլիջան» ազգային պարկի սահմանների նկարագրությունը

«Դիլիջան» ազգային պարկի սահմանն անցնում է (Քարտեզ 7).

1. Սկսած Դիլիջան-Վանաձոր ավտոմայրուղու եզրից՝ A կետ (X=478036, Y=4509236, H=1640 մ)* Ֆիդլետովո գյուղից 1 կմ դեպի արևելք, ապա ձգվում դեպի հյուսիս-արևելք, Հալաբի լեռնաշղթայի լանջի ուռուցիկ մասով բարձրանում Աղստև գետի հարթ դարավանդը (H=1680 մ), կտրում փոքրիկ հովիտը և վերստին լանջի ուռուցիկ մասով հասնում Հալաբի լեռների փոքրիկ ճյուղավորության ջրբաժանային հատված (H=1950 մ.):
2. Չզվելով 2.7 կմ՝ թեքվում է դեպի հյուսիս 1.5 կմ, հասնում Աղստև գետի ձախակողմյան վտակի ջրհավաք ձագար՝ B կետ (X=479180, Y=4511088, H=2100 մ):
3. Այնուհետև թեքվում է դեպի արևելք, հասնում Հալաբի լեռնաշղթայի Սարի-Սալ գագաթի ստորոտները՝ C կետ (X=480931, Y=4511020, H=1975 մ) և լանջով բարձրանում դրա գագաթը (X=481030, Y=4511417, H=2170 մ)՝ ձգվելով 0.4 կմ:
4. Ապա թեքվում է հյուսիս-արևմուտք և հասնում Բունդուկ գագաթը (X=480715, Y=4511980, H=2238 մ)՝ ձգվելով 0.7 կմ:
5. Այնուհետև նույն ուղղությամբ շարունակվելով՝ կտրում է Հալաբի լեռնաշղթայի ճյուղավորության փոքրիկ ջրբաժանը, հասնում Բլրան գետը՝ D կետ (X=479080, Y=4514073, H=1660 մ)՝ ձգվելով 3.4 կմ:
6. Նույն ուղղությամբ շարունակվում է ձախափնյա լանջի ուռուցիկ մասով դեպի վեր, հասնում Հալաբի լեռնաշղթայի ճյուղավորության ջրբաժանային հատվածի ժայռային ելուստից 250-300 մ հյուսիսում գտնվող բլրի գագաթը՝ E կետ (X=478000, Y=4516640, H=2510 մ)՝ 3.1 կմ:
7. Ապա լանջի ուռուցիկ մասով թեքվում է դեպի հարավ-արևելք, իջնում ցած, կտրում Բլրանի վտակը, բարձրանում ձախափնյա դարավանդը (X=479080, Y=4515923, H=2020 մ)՝ 1.3 կմ:
8. Այնուհետև թեքվում է արևելք և լանջի ուռուցիկ մասով բարձրանում Հալաբի լեռնաշղթայի ճյուղավորության ջրբաժան (X=479575, Y=4515962, H=2200 մ)՝ 0.5 կմ, այնուհետև թեքվում է դեպի հյուսիս և ջրբաժանային հատվածի գրունտային ճանապարհով բարձրանում է մինչև ժայռային կտվածքը՝ F կետ (X=479538, Y=4516605, H=2325 մ)՝ 0.7 կմ:

* X-ը արևելյան երկայնությունն է, Y-ը հյուսիսային լայնությունը, H-ը բացարձակ բարձրությունը: Կետի աշխարհագրական կոորդինատները արտահայտված են մետրական մեծությունով, Հաուսս Կրուգեր պրոյեկցիայով և Պուկովո կոորդինատային սխեմով:

9. Ապա ընդունում է արևելյան ուղղություն և ժայռային կտրվածքների ստորին մասով կտրում է Բլդան գետի ձախակողմյան վտակներից մեկը (X=479953, Y=4516652, H=2100 մ)՝ 0.4 կմ:
10. Ապա նույն ուղղությամբ շարունակվելով՝ հասնում է հաջորդ վտակի հովիտը (X=480923, Y=4516634, H=1925 մ)՝ 1.4 կմ:
11. Այդ վտակի հունով իջնում է ցած մինչև 1.5 կմ՝ վտակների միացման կետը (X=481247, Y=4515362, H=1700 մ), ապա թեքվում հյուսիս-արևելք և հաջորդ վտակի հունով բարձրանում է 1.8 կմ մինչև Հալաբի լեռնաշղթայի ճյուղավորության ջրբաժան (X=482667, Y=4516439, H=2000 մ):
12. Ապա թեքվում է դեպի հարավ, բարձրանում բլրի գագաթը (X=482582, Y=4515839, H=2130 մ)՝ 0.6 կմ:
13. Հետո վերստին ընդունում է հյուսիս-արևելյան ուղղություն, շրջանցում Բլդան գետի վտակի ջրհավաք ձագարը և բարձրանում Իջևանի լեռնաշղթայի ճյուղավորության Այրի Բլուր գագաթը՝ G կետ (X=484220, Y=4517900, H=2420 մ)՝ 3.8 կմ:
14. Ապա նույն ուղղությամբ ջրբաժանով ձգվում է 1.2 կմ (X=484443, Y=4518832, H=2450 մ):
15. Այնուհետև սահմանն անցնում է դեպի Շտողանաջուր գետի հովիտ և, որպես բնական սահման հանդիսանում է Իջևանի լեռնաշղթայի գլխավոր ջրբաժանին հարող ժայռային կտրվածքների վերին եզրը, ձգվում է մինչև Շտողանաջուր և Հաղարծին գետերի ջրբաժանը՝ 3.8 կմ (X=484443, Y=4520592, H=2640 մ):
16. Ապա այդ նույն ջրբաժանով թեքվում է արևելք՝ 1.7 կմ, մինչև H կետ (X=487651, Y=4520354, H=2150 մ):
17. Այնուհետև դեպի հյուսիս-արևելք կտրում է Հաղարծին գետի վտակը, անցնում Իջևանի լեռնաշղթայի լանջի ժայռային կտրվածքների վերին եզրով և հասնում հաջորդ վտակի հունը՝ ձգվելով 1.1 կմ (X=487952, Y=4521379, H=1900 մ):
18. Ապա թեքվում է հյուսիս-արևելք, բարձրանում Իջևանի լեռնաշղթայի փոքրիկ ճյուղավորության բլրի գագաթը՝ 0.4 կմ (H=2028 մ), հետո թեքվում է արևելք, կտրում ժայռոտ ջրհավաք ձագարը և Իջևանի լեռնաշղթայի աստիճանաձև լանջի մեղմաթեք հատվածներով հասնում Իջևանի լեռնաշղթայի ճյուղավորության անասնապահական ամառանոց տանող գրունտային ճանապարհը (X=491764, Y=4521054, H=1975 մ)՝ 4.5 կմ:
19. Այնուհետև թեքվում է հարավ և ձգվում Իջևանի լեռնաշղթայի ճյուղավորության փոքրիկ ջրբաժանով մինչև ժայռային կտրվածքը՝ 0.9 կմ (X=492691, Y=4520253, H=1900 մ):
20. Ապա ուղղություն է վերցնում դեպի հյուսիս-արևելք, կտրում փոքրիկ վտակը, լանջի ուռուցիկ մասով բարձրանում վեր, հասնում ժայռային կտրվածքներին՝ 1.5 կմ (X=493720, Y=4521348, H=2270 մ):
21. Ժայռային կտրվածքների վերևից հաշված երկրորդ աստիճանի եզրով ձգվում է 1 կմ և հասնում Հաղարծին համայնքի հյուսիս-արևմտյան սահման՝ I կետ (X=494777, Y=4521472, H=2325 մ):
22. Այնուհետև կտրուկ թեքվելով դեպի հարավ՝ համայնքի սահմանին կից, ուղիղ գծով 2 կմ շարունակվում է մինչև անտառի վերին եզրը (X=494765, Y=4519490, H=1700 մ):
23. Այս կետից սահմանը 14 կմ ձգվում է անտառի վերին եզրով մինչև կրկին միանում է Իջևանի լեռնաշղթայի գառիթափ ժայռոտ լանջի ստորոտին (X=498709, Y=4520228, H=2225 մ):
24. Ապա Իջևանի լեռնաշղթայի գառիթափ ժայռոտ լանջի ստորոտով ձգվում է 3.5 կմ մինչև Հովք գյուղի ամառանոց (X=503507, Y=4520195, H=2000 մ), որտեղ ժայռային կտրվածքը կտրուկ թեքվում է հյուսիս:
25. Այնուհետև թեքվում է հարավ, հասնում Իջևանի լեռնաշղթայի ճյուղավորության Ապաչեքար գագաթը՝ J կետ, 3.1 կմ (X=500917, Y=4517422, H=1650 մ):

26. Ապա գրեթե ուղղիղ գծով ձգվում է մինչև Աղստև և Գետիկ գետերի հանգուցակետը՝ Կ կետ (X=501723, Y=4514678, H=900 մ): Այս հատվածում ռելիեֆի հստակ սահմանազատման բացակայության պատճառով նպատակահարմար է տեղադրել սահմանանշաններ:
27. Շարունակվում է Աղստև գետի հոսանքի ուղղությամբ 2.2 կմ (X=503232, Y=4515650, H=920 մ):
28. Ապա թեքվում է դեպի հարավ 0.5 կմ և բարձրանում մինչև Միափորի լեռնաշղթայի ջրբաժան գիծ (X=503044, Y=4515193, H=1200 մ):
29. Որից հետո շարունակվում է դեպի արևելք, ջրբաժան գծով 5.5 կմ, մինչև Շունքար գագաթը (X=507917, Y=4514419, H=2080 մ):
30. Թեքվում է հարավ-արևելք 7 կմ՝ Միափորի լեռնաշղթայի ջրբաժանով մինչև Բարախան գագաթը՝ Լ կետ (X=512808, Y=4511228, H=2335 մ):
31. Ապա դեպի հարավ-արևմուտք 2.2 կմ՝ Արխաչնայա գագաթ (X=512111, Y=4509399, H=2170 մ):
32. Այնուհետև շարունակվում է դեպի արևմուտք՝ Միափորի լեռնաշղթայի ջրբաժանով և իջնում Գետիկի հովիտ՝ Աղավնավանք-Չորավանք միջգյուղային ավտոճանապարհի 1.2 կմ հատվածը (X=508682, Y=4508554, H=1125 մ):
33. Այնուհետև թեքվում է դեպի Աղավնավանք և ավտոճանապարհով հասնում մինչև Աղավնավանք գյուղի վերին մասի կամուրջ՝ Թ կետ (X=508094, Y=4509555, H=1070 մ):
34. Ապա անցնում է գետի ձախ ափը և լանջի ուռուցիկ մասով բարձրանում մինչև Արեգունի լեռնաշղթայի ճյուղավորության Բարեպատ գագաթը՝ ձգվելով 1.9 կմ (X=507040, Y=4508183, H=1740 մ):
35. Գրանից հետո ձգվում է 2.1 կմ Արեգունի լեռնաշղթայի ճյուղավորության ջրբաժանով մինչև Անտառամեջ գյուղից բարձրացող անտառային ճանապարհը (X=506745, Y=4506466, H=1700 մ):
36. Այնուհետև 0.25 կմ անցնելով նույն ջրբաժանային մասով դեպի հարավ՝ թեքվում է դեպի հարավ-արևմուտք և լանջի ուռուցիկ մասով իջնում մինչև լանջի հարթ տեղամասի բացատը՝ 0.9 կմ (X=505176, Y=4505940, H=1575 մ):
37. Շրջանցելով բացատը 2.1 կմ (H=1600 մ)՝ վերստին լանջի ուռուցիկ մասով իջնում է Կեչու գետի հունը՝ 0.4 կմ (X=505485, Y=4505155, H=1500 մ), ապա կտրում է գետը և միմյանց զուգահեռ տեղադրված հովտային ցանցի Արեգունի լեռնաշղթայի ճյուղավորության ջրբաժանային մասով բարձրանում մինչև գլխավոր ջրբաժան՝ ձգվելով 3.8 կմ (X=513883, Y=4502206, H=2380 մ): Այս հատվածում ռելիեֆի հստակ սահմանազատման բացակայության պատճառով նպատակահարմար է տեղադրել սահմանանշաններ:
38. Այնուհետև կտրում է Խաչարձան գետը ակունքի տեղամասում և բարձրանում Արեգունու լեռնաշղթայի գլխավոր ջրբաժան՝ Ն կետ (X=504002, Y=4599848, H=2390մ):
39. Սկսած Կեչու գետի հունից մինչև Արեգունու լեռնաշղթայի ջրբաժան ազգային պարկի սահմանը 6.8 կմ համընկնում է Գեղարքունիքի և Տավուշի մարզերի սահմանին: Այնուհետև սահմանը թեքվում է հյուսիս-արևմուտք և Արեգունու լեռնաշղթայի ջրբաժանով ձգվում 6.5 կմ (X=512808, Y=4511228, H=2335 մ) մինչև 2341 մ բարձրությամբ գագաթը՝ Օ կետ (X=498621, Y=4501664, H=2341 մ):
40. Այնուհետև սահմանն անցնում է հյուսիսային ուղղությամբ 1.2 կմ մինչև անտառի վերին եզրը (X=499221, Y=4502403, H=2100 մ):
41. Ապա շարունակվելով անտառի եզրով՝ շրջանցում է Մեծ և Փոքր Մայմեխ գագաթները՝ ձգվելով 72 կմ, հասնում է Մեմյոնովկա գյուղից հյուսիս-արևմուտքում գտնվող Սևանի լեռնանցքը՝ Ք կետ (X=490919, Y=4503085, H=2115 մ):
42. Սևանի լեռնանցքից սկսած սահմանն անցնում է Շամլուղ և Չկնագետ գետերի՝ Փամբակի լեռնաշղթայի ջրբաժան գծով 10 կմ (X=482858, Y=4504912, H=2425 մ):

43. Ապա նույն ուղղությամբ շարունակվում է 2.7 կմ՝ մինչև Չկնագետի վերին հոսանքը՝ Q կետ (X=480358, Y=4504105, H=2670 մ):
44. Ապա կտրուկ շրջվում է հյուսիս և լանջի ուռուցիկ մասով իջնում գետակի հունը և հունով ձգվում է 3.8 կմ մինչև վտակների միացման կետը՝ R կետ (X=481426, Y=4507546, H=1620 մ): Այս հատվածում ռելիեֆի հստակ սահմանազատման բացակայության պատճառով նպատակահարմար է տեղադրել սահմանանշաններ:
45. Այնուհետև մյուս վտակի հունով բարձրանում է հոսանքն ի վեր 1.3 կմ մինչև գետի ծունկը (X=480247, Y=4507987, H=1700 մ):
46. Ապա թեքվում հյուսիս-արևելք 0.3 կմ, իջնում գետի հարթ դարավանդի բլրակ (X=480468, Y=4508258, H=1760 մ):
47. Ապա շրջվում է հյուսիս-արևմուտք, դարավանդի վրայով 2.5 կմ ձգվում մինչև Աղսակ գետի հունը (X=478526, Y=4509142, H=1620 մ), որից հետո թեքվում դեպի արևմուտք և Դիլիջան-Վանաձոր ավտոճանապարհով ձգվելով 0.5 կմ միանում էլման A կետին:

3.3. «Դիլիջան» ազգային պարկի պահպանական գոտու նկարագրությունը

«Դիլիջան» ազգային պարկի պահպանական գոտու սահմանների որոշման սկզբունքներ են հանդիսացել Հալաբի, Իջևանի, Արեգունի և Փամբակի լեռնաշղթաների ջրբաժանները և դրանց հարող, պետական կադաստրով գրանցված, համայնքային սահմանները:

«Դիլիջան» ազգային պարկի պահպանական գոտու սահմանն անցնում է (Քարտեզ 7).

1. Սկսած Դիլիջան-Վանաձոր ավտոճանապարհի ազգային պարկին հարող առաջին ոլորանից և Հալաբի լեռնաշղթայի ճյուղավորության լանջի ուռուցիկ մասով բարձրանում է ջրբաժան:
2. Ապա թեքվում է հյուսիս-արևելք և նույն ջրբաժանով ձգվում մինչև Բլրան գետի աջակողմյան վտակների միջև գտնվող ջրբաժանային հարթ տեղամասը:
3. Այնուհետև 0.7 կմ հատվածով պահպանական գոտին բացակայում է, այսինքն՝ ազգային պարկի ու դրա պահպանական գոտու սահմանները համընկնում են:
4. Ապա ձգվելով լանջին զուգահեռ՝ հասնում է դրա ուռուցիկ մասին և իջնում Բլրան գետի հունը՝ աջակողմյան վտակի միացման տեղում, որից հետո հովտի ձախակողմյան լանջի ուռուցիկ մասով բարձրանում է Հալաբի լեռնաշղթայի ճյուղավորության ջրբաժան:
5. Այնուհետև 1.5 կմ, մինչև Հալաբի լեռնաշղթայի գլխավոր ջրբաժան գիծը, պահպանական գոտին բացակայում է (նույն պատճառով, ինչ նշված է 3-րդ կետում):
6. Հալաբի լեռնաշղթայի գլխավոր ջրբաժան գծով անցնելով՝ պահպանական գոտին հասնում է Իջևանի լեռնաշղթայի Այրի Քար գագաթը:
7. Ապա Իջևանի լեռնաշղթայի գլխավոր ջրբաժան գծով ձգվելով հասնում է մերձգագաթային հարթ տեղամասը եզերող ժայռային կտրվածքը:
8. Ժայռային կտրվածքից, 0.9 կմ ձգվածությամբ, պահպանական գոտին բացակայում է:
9. Ապա շարունակվելով ձգվել Իջևանի լեռնաշղթայի գլխավոր ջրբաժան գծով՝ հասնում է Հովք գագաթը, ապա թեքվում հարավ և ժայռային կտրվածքի եզրով ձգվում մինչև կտրվածքի մեծ ոլորանը:
10. Այնուհետև պահպանական գոտին բացակայում է մինչև Խաչարձան գետի վերին հոսանքը, որտեղ այն անցնում է Արեգունի լեռնաշղթայի ջրբաժանից դեպի Դիլիջանի լեռնաշղթայի ջրբաժան՝ կտրելով Խաչարձան գետի հովիտը և սահմանակցում է Սեմյոնովկա համայնքի սահմաններին:
11. Ապա պահպանական գոտին վերստին բացակայում է մինչև Փամբակի լեռնաշղթայի Չկնագետի վերին հոսանքին հարող ջրբաժանը:

12. Այնուհետև նույն ջրբաժանով շարունակվելով դեպի արևմուտք 3.7 կմ՝ թեքվում է դեպի հյուսիս և Փամբակի լեռնաշղթայի փոքրիկ ճյուղավորության ջրբաժանով իջնում է Աղստև գետի հովիտ ու Դիլիջան-Վանաձոր ավտոճանապարհի մոտ միանում ելման կետին:

3.4. Համայնքների վարչական սահմաններում պետական սեփականության անտառային տարածքների սահմանների և կատեգորիայի ճշգրտում

«Դիլիջան» ազգային պարկին հարակից Աղավնավանք, Գոշ, Խաչարձան, Հաղարծին, Թեղուտ, Դիլիջան, Սեմյոնովկա և Ֆիալետովո համայնքների վարչական սահմաններում առկա են պետական սեփականություն հանդիսացող անտառային տարածքներ, որոնք ազգային պարկի անտառային լանդշաֆտի հետ օրգանական ամբողջություն են կազմում և անհրաժեշտ է ճշգրտել դրանց կատեգորիան: Բացի այդ, Աղավնավանք, Գոշ, Խաչարձան, Հաղարծին, Թեղուտ և նախկին Շամախյան համայնքներում նախկին կոլխոզ-սովխոզային պատկանելիության անտառների սխեմատիկ քարտեզները չեն համապատասխանում այդ տարածքների նոր քարտեզագրական նյութերին, որոնք ստացվել են պարկի կառավարման պլանների մշակման շրջանակներում ձեռք բերված արբանյակային պատկերների վերծանման և իրականացված դաշտային ուսումնասիրությունների արդյունքում: Այստեղից անհրաժեշտություն է առաջանում վերը նշված համայնքների վարչական սահմաններում գեոդեզիական հանույթի միջոցով ճշգրտել անտառային հողերի սահմանները (Հավելված 1):

Բ Ա Ժ Ի Ն 4. «Դիլիջան» ազգային պարկի տարածքա-գործառնական գոտիները

«Դիլիջան» ազգային պարկի տարածքա-գործառնական գոտիների սահմանման վերաբերյալ աշխատանքները առաջին անգամ կատարվել են 2005-2006 թվականների ընթացքում՝ Բնական պաշարների կառավարման և չքավորության նվազեցման ծրագրի շրջանակներում: Սույն կառավարման պլանում ներկայացված տարածքա-գործառնական գոտիների տարանջատման հիմք են հանդիսացել Բնական պաշարների կառավարման և չքավորության նվազեցման ծրագրի շրջանակներում աշխատած թեմատիկ խմբերի (հիդրոլոգների, բուսաբանների, անտառագետների, կենդանաբանների, քարտեզագիրների), «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի, Տավուշի մարզպետարանի և այլ շահագրգիռ կողմերի առաջարկությունները (Զարտեզ 8):

4.1. «Դիլիջան» ազգային պարկի արգելոցային գոտիների սահմանների և տեղանքների նկարագրությունը

«Դիլիջան» ազգային պարկում առանձնացվել են չորս արգելոցային գոտիներ, որոնց ընդհանուր մակերեսը կազմում է 2277 հա:

4.1.1. «Աղավնավանքի կենու» արգելոց

Այն ունի հատապտղային կենու, որպես հազվագյուտ հանդիպող ռելիկտային տեսակի, պահպանության նպատակ: Գտնվում է ազգային պարկի արևելյան մասում և զբաղեցնում է 1192 հա մակերես: Սահմանի ընդհանուր երկարությունը 25.7 կմ է: Արգելոցի սահմաններում ռելիեֆի ամենացածր կետը գտնվում է 1078 մ բարձրության վրա, իսկ ամենաբարձրը՝ 2220 մ: Գետային ցանցի ընդհանուր երկարությունը կազմում է 10 կմ: Տարածքի 95 %-ը անտառածածկ է:

Սահմանների նկարագրությունը.

1. Սկսվում է Աղավնավանք բնակավայրից 200 մ արևմուտք և Աղավնավանք գետի ձախ ափից 60 մ լանջն ի վեր A կետից (X=508599, Y=4509604, H=1200 մ), ապա Աղավնավանք գետի ձախ եզրով, գետից մոտ 50 մ հարավ, ձգվում է գետն ի վեր մոտ 2500 մ, ապա թեքվելով անցնում գետի աջ ափը և գետից մոտ 200 մ հեռավորությամբ ձգվում արևմուտք 2000 մ մինչև B կետը (X=508969, Y=4509860, H=1200 մ):
2. Ապա թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք և Աղավնավանքի համայնքային սահմանից մոտ 500 մ արևելք ձգվում 2 կմ, հասնում երկու վտակների ու գրունտային ճանապարհի միացման տեղից 250 մ արևելք մինչև C կետը (X=508218, Y=4510794, H=1250 մ):
3. Ապա Սիափորի լեռնաշղթայի ճյուղավորության ջրբաժան մասով շարունակվում է դեպի վեր՝ չհասնելով գլխավոր ջրբաժան ձգվում է 2.5 կմ մինչև D կետը (X=508948, Y=4512892, H=1910 մ):
4. Այնուհետև շարունակվում է Սիափորի լեռնաշղթայի մերձջրբաժանային մասով ձգվում է 2.6 կմ մինչև Կամոտ գագաթի ստորոտը՝ E կետը (X=510086, Y=4511912, H=2075 մ):
5. Ապա շարունակվելով նույն ուղղությամբ՝ մերձջրբաժանային հատվածներով ձգվում է 10.5 կմ և հասնում Ծաղկոտ լեռնաշղթայի Արխաչնայա գագաթը՝ F կետը (X=512046, Y=4509728, H=2170 մ):
6. Ապա թեքվում է դեպի արևմուտք և Ծաղկոտ լեռնաշղթայի ջրբաժանով ձգվում է 4.0 կմ մինչև Չորավանք համայնքի սահմանը՝ Չորավանք-Աղավնավանք ավտոճանապարհից 200 մ արևելք G կետը (X=508908, Y=4508589, H=1260 մ):
7. Ապա ավտոճանապարհից դեպի արևելք 200 մ հեռավորությամբ ձգվում է 1.3 կմ և միանում ելման A կետին:

Ենթակառուցվածքները. Արգելոցի տարածքում գրունտային ճանապարհների ընդհանուր երկարությունը կազմում է 11 կմ:

4.1.2. «Խաչարձանի կաղնուտներ» արգելոց

Այն ունի կաղնուտների պահպանության նպատակ: Գտնվում է «Գլիխան» ազգային պարկի հարավ-արևելյան մասում և զբաղեցնում է 615 հա մակերես: Սահմանի ընդհանուր երկարությունը 19 կմ է: Արգելոցի սահմաններում ռելիեֆի ամենացածր կետը գտնվում է 1200 մ բարձրության վրա, իսկ ամենաբարձրը՝ 2150 մ: Գետային ցանցի ընդհանուր երկարությունը կազմում է 8 կմ: Տարածքի 98 %-ը անտառածածկ է:

Սահմանների նկարագրությունը.

1. Սկսվում է Անտառամեջ համայնքի արևմտյան սահմանին հարող Կեչու գետի հունից՝ A կետից (X=505509, Y=4505137, H=1470մ), լանջի ուռուցիկ մասով 2.7 կմ բարձրանում է վեր և հասնում Արեգունի լեռնաշղթայի մերձջրբաժանային հատված, միանում գրունտային ճանապարհին B կետում (X=504553, Y=4503124, H=2110 մ):
2. Այնուհետև 7.5 կմ շրջանցում է Աշրաֆ գագաթի ստորոտը և հասնում Խաչարձան գետի աջակողմյան վտակի ջրհավաք ձագարը՝ C կետը (X=502705, Y=4503726, H=1920 մ):
3. Նույն վտակով 2.1 կմ իջնում է մինչև Խաչարձան գետի հունից 200 մ դեպի հարավ-արևելք՝ D կետը (X=50179, Y=4505465, H=1260 մ):
4. Ապա թեքվում է դեպի հարավ-արևելք և ջրբաժանով 0.4 կմ բարձրանում է մինչև E կետը (X=502225, Y=4505554, H=1430 մ):
5. Այնուհետև թեքվում է դեպի արևելք 0.4 կմ, իջնում Խաչարձան գետի հունին զուգահեռ և միանում Խաչարձան համայնքի սահմանից 50 մ դեպի հարավ՝ F կետին (X=502394, Y=4504651, H=1235 մ):
6. Ապա Խաչարձան գետի հունին զուգահեռ 0.5 կմ իջնում է մինչև աջակողմյան վտակի ընդունման տեղը՝ H կետը (X=502568, Y=4506051, H=1200 մ):
7. Խաչարձան գետի աջակողմյան վտակի հունով 0.8 կմ բարձրանում է վեր մինչև H կետը (X=502945, Y=4505475, H=1530 մ):
8. Ապա թեքվում է դեպի արևելք, լանջին զուգահեռ 1.2 կմ ձգվում է մինչև ջրբաժանի հատվածում գրունտային ճանապարհի ոլորոնը՝ I կետը (X=503805, Y=4505705, H=1610 մ):
9. Ապա ուղիղ գծով 0.7 կմ իջնում է Կեչու գետի հունը և միանում J կետին (X=504102, Y=4506332, H=1225 մ):
10. Ապա Կեչու գետի հունով բարձրանալով միանում է ելման A կետին՝ ձգվելով 2.0 կմ:

Ենթակառուցվածքները. Արգելոցի տարածքում գրունտային ճանապարհների ընդհանուր երկարությունը կազմում է 8 կմ:

4.1.3. «Հաղարծնի հաճարկուտներ» արգելոց

Այն ունի հաճարկուտների պահպանության նպատակ: Գտնվում է ազգային պարկի հյուսիսային հատվածում և զբաղեցնում է 455 հա մակերես: Սահմանի ընդհանուր երկարությունը 15.8 կմ է: Արգելոցի սահմաններում ռելիեֆի ամենացածր կետը գտնվում է 1190 մ բարձրության վրա, իսկ ամենաբարձրը՝ 2070 մ: Գետային ցանցի ընդհանուր երկարությունը կազմում է 10 կմ: Տարածքի 97 %-ը անտառածածկ է:

Սահմանների նկարագրությունը.

1. Սկսվում է Հաղարծն գետի ձախակողմյան վտակի և Հաղարծնի վանք տանող ճանապարհի հատման տեղից 50 մ վտակն ի վեր A կետից (X=492811, Y=4517788, H=1190 մ):
2. Ապա 1.1 կմ ձգվելով դեպի Հաղարծնի վանք տանող ճանապարհով՝ հասնում է մինչև ճամփաբաժան՝ 50 մ լանջն ի վեր B կետը (X=492110, Y=4518581, H=1210 մ) ձգվելով:
3. Ապա Հաղարծն գետի ձախակողմյան վտակի հունով ձգվելով 1.1 կմ բարձրանում է մինչև անտառի վերին եզրը՝ C կետը (X=491706, Y=4519522, H=1575 մ):

4. Այնուհետև դեպի արևելք կտրում է ջրբաժանը և հաջորդ վտակի հովտի լանջով ձգվելով 1.5 կմ բարձրանում է և D կետում միանում գետի հունին (X=491699, Y=4520452, H=1725 մ):
5. Ապա դեպի արևելք կտրում է ջրբաժանը և ձգվելով 1.4կմ իջնում հաջորդ վտակի հունը E կետում (X=492846, Y=4520254, H=1710 մ):
6. Ապա թեքվում է հարավ-արևելք, ձգվելով 1.5 կմ բարձրանում Իջևանի լեռնաշղթայի ճյուղավորության ջրբաժան՝ F կետ (X=493568, Y=4519061, H=1610 մ):
7. Հետո լանջով իջնում է և միանում A կետին:
8. Արգելոցի երկրորդ հատվածի սահմանն սկսվում է Հաղարծնի վանքից ուղիղ գծով 480 մ հարավ-արևմուտք G կետից (X=490456, Y=4518400, H=1550մ) և փոքր ջրբաժանով բարձրանում դեպի Հաղարծին գագաթի ստորոտը՝ H կետը (X=488963, Y=4517256, H=2040 մ):
9. Ապա գագաթի ստորոտով ձգվում մոտ 440 մ դեպի արևմուտք մինչև I կետ (X=488564, Y=4517395, H=2020 մ):
10. Որից հետո վտակի հունով 465 մ իջնում է դեպի հյուսիս J կետ (X=488807, Y=4517788, H=1825 մ):
11. Ապա լանջով թեքվում հյուսիս-արևելք և հասնում գլխավոր վտակին K կետում (X=488020, Y=4518773, H=1880 մ):
12. Վտակով իջնում է մինչև L կետ (X=489980, Y=4518615, H=1525 մ), որտեղից թեքվում հարավ և հարավ-արևելք, լանջով միանում ելման G կետին:

Ենթակառուցվածքները. Արգելոցի տարացքում ենթակառուցվածքները բացակայում են:

4.1.4. «Բնական սոճուտների» արգելոց

Այն ունի բնական սոճուտների պահպանության նպատակ: Գտնվում է Դիլիջան քաղաքից արևելք, Աղստև գետի հովտի աջ լանջին և զբաղեցնում է 15 հա մակերես: Սահմանի ընդհանուր երկարությունը 1.8 կմ է: Արգելոցի սահմաններում ռելիեֆի ամենացածր կետը գտնվում է 1450 մ բարձրության վրա, իսկ ամենաբարձրը՝ 1675 մ: Գետային ցանցի ընդհանուր երկարությունը կազմում է 630 մ: Տարածքը 100 %-ով անտառածածկ է:

Սահմանների նկարագրությունը.

1. Սկսվում է Դիլիջան քաղաքի վարչական սահմանի արևմտյան ծայրակետից՝ ուղիղ գծով 800 մ հարավ A կետից (X=484960, Y=4510839, H=1500մ), ապա դեպի հարավ արևմուտք ձգվում է ջրբաժանի հարավային լանջով մինչև B կետը (X=485555, Y=45105449, H=1775 մ):
2. Ապա լանջով իջնում մինչև վտակը՝ C կետը (X=485372, Y=4510435, H=1610 մ):
3. Ապա վտակով իջնում մինչև D կետը (X=484805, Y=4510628, H=1450 մ):
4. Ապա 280 մ թեքվելով հյուսիս-արևելք՝ միանում ելման A կետին:

Ենթակառուցվածքները. Արգելոցի տարացքում ենթակառուցվածքները բացակայում են:

4.2. «Դիլիջան» ազգային պարկի արգելավայրային գոտիների սահմանների և տեղանքների նկարագրությունը

«Դիլիջան» ազգային պարկում առանձնացվել են երկու արգելավայրային գոտիներ, որոնց ընդհանուր մակերեսը կազմում է 935 հա:

«Դիլիջանի ջրաբանական» արգելավայր

Նախատեսված է հանքային աղբյուրների ու դրանց միջավայրի պահպանության նպատակով: Գտնվում է «Դիլիջան» ազգային պարկի հյուսիս-արևմտյան հատվածում և զբաղեցնում է 552 հա մակերես: Սահմանի ընդհանուր երկարությունը 11.7 կմ է:

Արգելավայրի սահմաններում ռելիեֆի ամենացածր կետը գտնվում է 1490 մ բարձրության վրա, իսկ ամենաբարձրը՝ 2090 մ: Գետային ցանցի ընդհանուր երկարությունը կազմում է 15 կմ: Տարածքի 95 %-ը անտառածածկ է:

Սահմանների նկարագրությունը.

1. Սկսվում է «Դիլիջան» հանքային ջրերի գործարանից վեր, Բլրան գետի ու դրա ձախակողմյան վտակի միացման տեղից՝ A կետից (X=482491, Y=4513885, H=1490 մ):
2. Ապա 2.1 կմ լանջով բարձրանում է մինչև Դիլիջան համայնքի սանձանը՝ B կետը (X=481800, Y=4512140, H=1860 մ):
3. Այնուհետև 2.9 կմ ձգվելով համայնքային սահմանով՝ հասնում է դրա ծայր հյուսիս-արևելյան մասը՝ C կետը (X=480512, Y=4513712, H=1915 մ), որից հետո 0.09 կմ իջնում Բլրան գետի հունը՝ D կետը (X=480314, Y=4514499, H=1560 մ):
4. Ապա 0.3 կմ ձգվում մինչև Դիլիջան համայնքի սահմանը՝ E կետը (X=480430, Y=4514739, H=1675 մ):
5. Այնուհետև 3.7 կմ ձգվելով Դիլիջան համայնքի սահմաններով՝ հասնում է F կետը (X=482957, Y=4514349, H=1610մ):
6. Ապա լանջի ուռուցիկ մասով 0.7 կմ իջնում է և միանում A կետին:

Ենթակառուցվածքները. Արգելոցի տարածքում գրունտային ճանապարհների ընդհանուր երկարությունը կազմում է 2.2 կմ:

«Ֆրոլովո Բալկա» արգելավայր

Նախատեսված է Դիլիջան քաղաքի խմելու ջրի մատակարարման հիմնական աղբյուրներից մեկի ու դրա միջավայրի պահպանության նպատակով: Գտնվում է ազգային պարկի հարավ-արևմտյան հատվածում և զբաղեցնում է 383 հա մակերես: Սահմանի ընդհանուր երկարությունը 11.4 կմ է: Արգելոցի սահմաններում ռելիեֆի ամենացածր կետը գտնվում է 1510 մ բարձրության վրա, իսկ ամենաբարձրը՝ 2090 մ: Գետային ցանցի ընդհանուր երկարությունը կազմում է 7.5 կմ: Տարածքի 98 %-ը անտառածածկ է:

Սահմանների նկարագրությունը.

1. Սկսվում է Փամբակի լեռնաշղթայի փոքրիկ ճյուղավորության ջրբաժան հատվածի գագաթից՝ A կետից (X=481440, Y=4508227, H=1805 մ):
2. Այնուհետև դեպի հարավային ուղղությամբ 1.2 կմ լանջով իջնում է Աղստև գետի վտակների միացման տեղը՝ B կետը (X=481403, Y=4507551, H=1610 մ):
3. Ապա աջակողմյան վտակի հունով 1.3 կմ բարձրանում է և միանում Դիլիջան համայնքի սահմանին C կետում (X=481019, Y=4506330, H=2085 մ):
4. Այնուհետև թեքվում է դեպի արևմուտք և Դիլիջանի համայնքային սահմանով 4.0 կմ ձգվում մինչև Կազաչիյ Բուգոր գրունտային ճանապարհը՝ D կետը (X=483612, Y=4507396, H=1875 մ):
5. Ապա թեքվում է դեպի հյուսիս-արևելք, 1.5 կմ ձգվում գրունտային ճանապարհով մինչև երկու բլուրների միջև գտնվող փոքրիկ ջրհավաք ձազարը՝ E կետը (X=484083, Y=4508674, H=1810 մ):
6. Ապա 1.8 կմ ձգվելով դեպի հարավ-արևմուտք՝ միաթեք լանջով իջնում է Աղստև գետի աջակողմյան վտակի հունը՝ F կետը (X=482441, Y=4508240, H=1510 մ):
7. Այնուհետև լանջի ուռուցիկ մասով բարձրանում է 0.6 կմ և միանում A կետին:

Ենթակառուցվածքները. Արգելոցի տարածքում գրունտային ճանապարհների ընդհանուր երկարությունը կազմում է 1.7 կմ: Բարձրավոլտ էլեկտրահաղորդման գծերի երկարությունը կազմում է 2.2 կմ, իսկ գազամուղիներ՝ 3.2 կմ:

4.3. «Դիլիջան» ազգային պարկի ռեկրեացիոն գոտիների սահմանների և տեղանքների նկարագրությունը

«Դիլիջան» ազգային պարկում առանձնացվել են ռեկրեացիոն 7 գոտիներ, որոնց ընդհանուր մակերեսը կազմում է 4194 հա:

4.3.1. Շամախյան-Ֆիոլտովոյի ռեկրեացիոն գոտի

Զբաղեցնում է 327 հա մակերես՝ Աղստև գետի աջ և ձախ ափերին: Սահմանի ընդհանուր երկարությունը 25.5 կմ է: Ռելիեֆի ամենացածր կետը գտնվում է 1275 մ բարձրության վրա, իսկ ամենաբարձրը՝ 1650 մ: Գետային ցանցի ընդհանուր երկարությունը կազմում է 10 կմ:

Սահմանների նկարագրությունը.

Սկսվում է Աղստև և Բլղան գետերի միացման տեղից՝ A1 կետից (X=485521, Y=4511890, H=1275 մ) և ձգվում է Աղստևի հովտով դեպի վեր՝ միջին հաշվով 150 մ լայնությամբ տարածվելով հովտի աջ և ձախ լանջերին, հասնում է ազգային պարկի ծայր արևմտյան արտաքին սահմանի և Ֆիոլտովո համայնքի սահմանների միացման տեղը՝ B1 կետում (X=478526, Y=4509145, H=1625 մ): Ապա Աղստևի աջափնյա լանջով 1.7 կմ բարձրանում է հարթ դարավանդը՝ C1 կետը (X=480031, Y=4508329, H=1725 մ): Ապա լանջի ուռուցիկ մասով 1.0 կմ իջնում է Աղստև գետի հունը՝ D1 կետ (X=480715, Y=4508979, H=1475 մ): Ապա Աղստևի հունով 2.6 կմ իջնում է մինչև աջակողմյան վտակի միացման տեղը՝ E1 կետում (X=483050, Y=4509466, H=1377 մ): Այնուհետև շրջանցում է աջակողմյան վտակը 25 մ գոտիով, ապա թեքվում է հարավ-արևմուտք և այդ գետերի ջրբաժանով բարձրանում 1.1 կմ և սահմանակցում «Դիլիջանի ջրաբանական» արգելավայրի A, F, E կետերին՝ 2.4 կմ ձգվածությամբ: Ապա փոքրիկ վտակի հունով 1.4 կմ իջնում է Աղստևի հունը՝ F1 կետ (X=483470, Y=4509786, H=1370 մ): Ապա Աղստև գետով իջնում է 1.6 կմ և D կետում սահմանակցում «Բնական սոճուտների» արգելոցին: Ապա նույն ուղղությամբ ձգվելով 1.7 կմ միանում է A1 կետին:

Ենթակառուցվածքները. Ռեկրեացիոն գոտուն հարող ասֆալտապատ ճանապարհների ընդհանուր երկարությունը կազմում է 9.0 կմ: Գոտուն հարում է երկաթգիծը՝ 8.5 կմ: Բարձրավոլտ էլեկտրահաղորդման գծերի ընդհանուր երկարությունը կազմում է 9.0 կմ:

4.3.2. Բլղանի ռեկրեացիոն գոտի

Զբաղեցնում է 59 հա մակերես՝ Բլղան գետի աջ և ձախ ափերին: Սահմանի ընդհանուր երկարությունը 6.5 կմ է: Ռելիեֆի ամենացածր կետը գտնվում է 1300 մ բարձրության վրա, իսկ ամենաբարձրը՝ 1620 մ: Գետային ցանցի ընդհանուր երկարությունը կազմում է 2.5 կմ:

Սահմանների նկարագրությունը.

Սկսվում է Շամախյան կայարանի մոտից՝ A1 կետից (X=485346, Y=4512102, H=1300 մ), ապա 100 մ միջին լայնությամբ գոտով 1.6 կմ ձգվում է Բլղանի հովտով դեպի վեր, հասնում մինչև գետի ծունկը՝ B1 կետը (X=483846, Y=4512797, H=1370 մ), ապա 1.0 կմ բարձրանում հովտի ձախ կողմի բլուրի գագաթը՝ C1 կետը (X=483853, Y=4513862, H=1620 մ): Այնուհետև 1.0 կմ անցնում է հովտի աջ կողմի բարձր դարավանդը՝ D1 կետը (X=483299, Y=4513123, H=1525 մ): Ապա հովտի աջ լանջով իջնում է 2.4 կմ և միանում A1 կետին:

Ենթակառուցվածքները. Ռեկրեացիոն գոտուն հարող ասֆալտապատ ճանապարհների ընդհանուր երկարությունը կազմում է 1.6 կմ, իսկ գրունտայինը՝ 2.0 կմ: Գոտու տարածքում է գտնվում Ջուխտակ վանքը՝ Սուրբ Աստվածածին և Սուրբ Գրիգոր 12-13-րդ դարերի վանքերով:

4.3.3. Գիլիջանի ռեկրեացիոն գոտի

Զբաղեցնում է 3191 հա մակերես՝ Գիլիջան քաղաքի հարավային հատվածներում և Շամլուղ գետի հովտի լանջերին, Թեղուտ, Հաղարծին և Գոշ համայնքների միջակայքում: Սահմանի ընդհանուր երկարությունը 114 կմ է: Ռելիեֆի ամենացածր կետը գտնվում է 1225 մ բարձրության վրա, իսկ ամենաբարձրը՝ 2050մ: Գետային ցանցի ընդհանուր երկարությունը կազմում է 32 կմ:

Սահմանների նկարագրությունը.

Սկսվում է Աղստևի հովտի աջափնյա դարավանդի Գիլիջանի համայնքային սահմանից՝ A1 կետից (X=486099, Y=4511405, H=1350 մ), ապա ձգվում դեպի արևելք և Փամբակի լեռնաշղթայի լանջի 1.5 կմ թեքությամբ բարձրանում Աղստև և Շամլուղ գետերի ջրբաժան B1 կետը (X=487144, Y=4510570, H=1630 մ): Ապա թեքվում է դեպի հարավ և Շամլուղ գետի հովտով 3.8 կմ բարձրանում վեր և հասնում մինչև ջրբաժան C1 կետը (X=485230, Y=4507516, H=11850 մ): Ապա թեքվում է հարավ-արևելք և 10 կմ ձգվելով հասնում Սևանի լեռնանցքի թունելից մոտ 700 մ հարավ-արևելք՝ D1 կետը (X=490492, Y=4504112, H=2040 մ)՝ չներառելով Շամլուղ գետը 25 մ գոտիով: Այնուհետև թեքվում է հովտով ցած և 8.0 կմ ձգվում մինչև Գիլիջան շիասած Շամլուղ գետի աջ վտակի հունը՝ E1 կետը (X=489070, Y=4510709, H=1425 մ): Ապա թեքվում է դեպի արևելք 5.5 կմ շրջանցելով ընդգրկում Հաղարծին համայնքին պատկանող անտառածածկ տարածքը, հասնում Թողուտ համայնքի վարչական սահման՝ F1 կետ (X=493719, Y=4511912, H=1750 մ): Հետո բնակավայրի սահմաններով 1.7 կմ ձգվելով հասնում է Ղազախ-Բեկ լեռան գագաթը՝ G1 կետը (X=495170, Y=4512700, H=1720 մ): Ապա թեքվում է դեպի հարավ-արևելք, լանջի ուռուցիկ մասերով ձգվում է 3.3 կմ մինչև Գոշ համայնքի սահմանը՝ H1 կետը (X=498088, Y=4511596, H=1600 մ): Ապա Գոշ համայնքի սահմանով ձգվում է 0.5 կմ, մինչև I1 կետը (X=498105, Y=4512119, H=1510 մ): Այնուհետև փոքրիկ վտակի հունով ձգվում է 2.0 կմ մինչև J1 կետը (X=497363, Y=4513608, H=1190 մ): Ապա թեքվում է հյուսիս-արևելք, բարձրանում է ջրբաժան և ջրբաժանով 4.6 կմ ձգվում մինչև Թեղուտ համայնքի սահմանը՝ K1 կետը (X=493678, Y=4515318, H=1175 մ): Ապա Թեղուտ, Հաղարծին և Գիլիջան համայնքների սահմաններով ձգվելով միանում է A1 կետին:

Ենթակառուցվածքները. Ռեկրեացիոն գոտուն հարող ասվալտապատ ճանապարհների ընդհանուր երկարությունը կազմում է 8.0 կմ, իսկ ներքին գրունտային ճանապարհներինը՝ 35 կմ: Բարձրավոլտ էլեկտրահաղորդման գծերի երկարությունը կազմում է 14.2կմ: Գազամուղի երկարությունը կազմում է 4.4 կմ:

4.3.4. Գոշի ռեկրեացիոն գոտի

Զբաղեցնում է 82 հա մակերես՝ ընդգրկելով Գոշ գյուղից մինչև Գոշալիճ հատվածն ու վերջինիս շրջակայքը: Սահմանի ընդհանուր երկարությունը 5.9 կմ է: Ռելիեֆի ամենացածր կետը գտնվում է 1140 մ բարձրության վրա, իսկ ամենաբարձրը՝ 1540 մ: Գետային ցանցի ընդհանուր երկարությունը կազմում է 3.0 կմ:

Սահմանների նկարագրությունը.

Սկսվում է Գոշ համայնքի սահմանից՝ A1 կետից (X=500773, Y=4510446, H=1175 մ): Ապա սահմանով 0.9 կմ ձգվում մինչև գետակի հունը՝ B1 կետը (X=500598, Y=4509843, H=1340 մ): Ապա հունով 0.6 կմ բարձրանում է մինչև C1 կետը (X=501021, Y=4509409, H=1450 մ): Ապա 1.7 կմ թեքվում է դեպի արևելք և Խաչարձան համայնքի մոտ միանում գրունտային ճանապարհների խաչմերուկին D1 կետին (X=502550, Y=4509788, H=1460 մ): Ապա թեքվում է դեպի արևելք և գրունտային ճանապարհին 1.7 կմ զուգահեռ ձգվելով՝ հասնում է փոքրիկ վտակի ջրհավաք ձազարը՝ E1 կետը (X=500995, Y=4509767, H=1410 մ): Ապա ձգվելով վտակի հունով 0.7կմ միանում է A1 կետին:

Ենթակառուցվածքները. Ռեկրեացիոն գոտու տարածքում գրունտային ճանապարհների ընդհանուր երկարությունը կազմում է 3.5 կմ:

4.3.5. Հաղարծնի ռեկրեացիոն գոտի

Զբաղեցնում է 422 հա մակերես՝ ընդգրկելով Հաղարծին գետի հովտի հատակային մասը միջին և ստորին հոսանքի շրջաններում: Սահմանի ընդհանուր երկարությունը 30 կմ է: Ռեկրեացիոն ամենացածր կետը գտնվում է 1090 մ բարձրության վրա, իսկ ամենաբարձրը՝ 1575 մ: Գետային ցանցի ընդհանուր երկարությունը կազմում է 5.7 կմ:

Սահմանների նկարագրությունը.

Սկսվում է Դիլիջան և Հաղարծին համայնքների սահմանների հատման տեղից՝ A1 կետից (X=488427, Y=4514585, H=1525 մ): Ապա Հաղարծին համայնքի սահմանով 4.0 կմ ձգվում է մինչև Թեղուտ համայնքի սահման՝ B1 կետը (X=492101, Y=4514099, H=1180 մ): Ապա Թեղուտ համայնքի սահմանով 2.4 կմ ձգվում է մինչև C1 կետը (X=493616, Y=4515371, H=1090 մ): Ապա 0.7 կմ ձգվում է Աղստև գետով մինչև Թեղուտ համայնքի սահմանը՝ D1 կետը (X=493980, Y=4515895, H=1070 մ): Այնուհետև նույն համայնքի սահմանով 0.8 կմ ձգվում մինչև E1 կետը (X=493535, Y=4516432, H=1110 մ): Ապա Հաղարծնի վանք տանող ճանապարհին զուգահեռ 1.6 կմ ձգվում է մինչև «Հաղարծնի հաճարկուտներ» արգելոցի սահմանի A կետը: Ապա այն 5.3 կմ սահմանակցում է ագելոցին՝ A, B, C, N, G կետերում: Ապա գետի հունով 4.3 կմ իջնում է մինչև Հաղարծին գետի ձախակողմյան վտակի միացման տեղը՝ F1 կետը (X=492157, Y=4518346, H=1240 մ): Ապա Հաղարծին գետի հովտի աջ լանջով 3.8 կմ իջնում է և G1 կետում միանում Թեղուտ համայնքի սահմանին (X=492900, Y=4515319, H=1290 մ): Ապա 5.6 կմ ձգվելով դեպի արևելք միանում է ելման A1 կետին:

Ենթակառուցվածքները. Ռեկրեացիոն գոտում ասվալտապատ ճանապարհների ընդհանուր երկարությունը կազմում է 6.2 կմ, իսկ գրունտային ճանապարհներինը՝ 0.5 կմ: Երկաթգծերի երկարությունը՝ 0.5 կմ: Բարձրավոլտ էլեկտրահաղորդման գծերի երկարությունը կազմում է 0.2 կմ:

4.3.6. Գոշ-Աղավնավանքի ռեկրեացիոն գոտի

Զբաղեցնում է 85 հա մակերես՝ ընդգրկելով Գոշ համայնքից մինչև Աղավնավանք համայնքին հարող Գետիկ գետի հովտի հատակային մասը: Սահմանի ընդհանուր երկարությունը 14 կմ է: Ռեկրեացիոն ամենացածր կետը գտնվում է 950 մ բարձրության վրա, իսկ ամենաբարձրը՝ 1180 մ:

Սահմանների նկարագրությունը.

Սկսվում է Գոշ գետի հունից՝ A1 կետից (X=501862, Y=4511688, H=950 մ): Ապա 100 մ լայնությամբ Գետիկ գետի ձախ ափով 3.7 կմ բարձրանում է վեր՝ մինչև Խաչարձան բնակավայրից վեր գտնվող փոքրիկ վտակի և գրունտային ճանապարհի միացման տեղը՝ B1 կետը (X=504630, Y=4509475, H=1150 մ): Ապա ընդհատվում է և վերստին շարունակվում Խաչարձան բնակավայրի վերին սահմանից՝ C1 կետից (X=505355, Y=4509573, H=1070 մ): Ապա հովտով 2.7 կմ ձգվում է վեր՝ մինչև ազգային պարկի արտաքին սահմանը՝ D1 կետը (X=507845, Y=4509440, H=1180 մ):

Ենթակառուցվածքները. Ռեկրեացիոն գոտում գրունտային ճանապարհների ընդհանուր երկարությունը կազմում է 2.0 կմ:

4.3.7. Աղստև-Գետիկի ռեկրեացիոն գոտի

Զբաղեցնում է 28 հա մակերես՝ ընդգրկելով Աղստև գետի աջ ափը, Հաղարծին համայնքի հարավ-արևելյան հատվածը: Սահմանի ընդհանուր երկարությունը 6.0 կմ է:

Ռեկիտի ամենացածր կետը գտնվում է 910 մ բարձրության վրա, իսկ ամենաբարձրը՝ 1025 մ: Գետային ցանցի ընդհանուր երկարությունը կազմում է 2.5 կմ:

Սահմանների նկարագրությունը.

Սկսվում է Գետիկ գետի գետաբերանից՝ A1 կետից (X=501656, Y=4514662, H=910 մ): Ապա 100 մ լայնությամբ 2.6 կմ ձգվում է Աղստև գետի աջ ափով վեր՝ մինչև B1 կետը (X=499252, Y=4514769, H=1000 մ):

Ենթակառուցվածքները. Ռեկրեացիոն գոտուն հարող ասվալտապատ ճանապարհների ընդհանուր երկարությունը կազմում է 2.5 կմ: Երկաթգծերի երկարությունը՝ 0.3 կմ:

4.4. «Դիլիջան» ազգային պարկի տնտեսական գոտու սահմանների և տեղանքների նկարագրությունը

«Դիլիջան» ազգային պարկում տնտեսական գոտու ընդհանուր մակերեսը կազմում է 26359 հա, որից անտառածածկը՝ 73 %: Զբաղեցնում է ազգային պարկի տարածքի գերակշռող մասը (տես՝ ազգային պարկի սահմանների նկարագիրը): Հիմնական անտառ կազմող տեսակներն են կաղնին, հաճարենին, բոխին, դաժին, սոճին: Անտառի միջին լրիվությունը 0.52 է, բոնիտետը՝ III.5, միջին հասակային դասը հավասար է VII-ի: Գերակշռում են հյուսիս-արևմտյան և հյուսիս-արևելյան կողմնադրության լանջերը՝ մոտ 35 %, իսկ նվազագույնը կազմում են արևմտյան կողմնադրության լանջերը՝ մոտ 5 %: Գերակշռում են լանջերի 21-25° թեքությունները:

Ենթակառուցվածքները. Տնտեսական գոտում գետային ցանցի երկարությունը կազմում է մոտ 700 կմ, ճանապարհների ընդհանուր երկարությունը՝ 460 կմ: Երկաթգծերի երկարությունը՝ մոտ 20 կմ է: Գազամուղերի երկարությունը կազմում է մոտ 60 կմ: Հոսանքի գծերի երկարությունը՝ մոտ 380 կմ:

4.5. «Դիլիջան» ազգային պարկի տարածքա-գործառնական գոտիների արդյունավետ կառավարմանն ուղղված գործողություններ

«Դիլիջան» ազգային պարկի տարածքա-գործառնական գոտիների արդյունավետ կառավարման նպատակով անհրաժեշտ է, որպեսզի դրանցից յուրաքանչյուրի համար, այդ թվում՝ առանձին վերցրած յուրաքանչյուր արգելոցային, ռեկրեացիոն և տնտեսական գոտիների, մշակվեն և իրականացվեն համապատասխան կանոնակարգեր (Հավելված 1): Բացի այդ, արգելոցային գոտիների համար պետք է սահմանել հստակ մուտքավճարներ՝ զիտա-ճանաչողական էքսկուրսիաների անցկացման նպատակով (համաձայն «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքի):

Հաշվի առնելով ազգային պարկի տարածքա-գործառնական գոտու մասն և «Գոշ» տեղամասի առանձնահատկությունները՝ նպատակահարմար է վերանայել այդ տեղամասի կարգավիճակը (Հավելված 1):

Բ Ա Ժ Ի Ն 5. «Դիլիջան» ազգային պարկի կառավարման ներկա առանձնահատկությունները և դրա բարելավմանն ուղղված գործողությունների պլանը

«Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է՝ ի դեմս ՀՀ կառավարության: «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ը գործում է ՀՀ Սահմանադրության, «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» և «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքների, **ՊՈԱԿ-ի կանոնադրության** և այլ իրավական ակտերի **հիման վրա**: Կանոնադրության համաձայն՝ **ՊՈԱԿ-ը** իրականացնում է բնապահպանական, գիտահետազոտական, գիտաճանաչողական գործունեություն: «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի գործունեության առարկան և նպատակը պարկի տարածքի բնական էկոհամակարգերի, լանդշաֆտային ու կենսաբանական բազմազանության, բնության ժառանգության գիտական ուսումնասիրության, պահպանության, դիտանցի, ինչպես նաև պարկի բնական պաշարների կայուն օգտագործման ապահովումն է: Այդ նպատակով կազմակերպության կարևոր կանոնադրական գործառույթներից են.

- ապահովել Աղստև և Գետիկ գետերի ավազաններում բնական էկոհամակարգերի լանդշաֆտային և կենսաբանական բազմազանության, գենոֆոնդի, բնության ժառանգության պահպանությունը, կազմակերպել և իրականացնել դրանց գիտական ուսումնասիրությունները,
- կազմակերպել և իրականացնել բնական էկոհամակարգերի ու դրանց առանձին բաղադրիչների՝ բուսական ու կենդանական աշխարհի հաշվառումը և նախապատրաստել կադաստրի վարման համար անհրաժեշտ նյութերը,
- իրականացնել էկոլոգիական դիտանց, վարել բնության տարեգրություն, կազմակերպել բնության թանգարանի գործունեությունը,
- կանխարգելել մարդու գործունեության հետևանքով պարկի բնական էկոհամակարգի հավասարակշռությունը խախտող գործընթացները և իրականացնել խախտված էկոհամակարգերի վերականգնման միջոցառումներ,
- կազմակերպել զբոսաշրջություն,
- իր իրավասության սահմաններում իրականացնել բնակչության էկոլոգիական կրթությանն ու դաստիարակությանն ուղղված միջոցառումներ:

«Դիլիջան» ազգային պարկ հիմնարկին պետական ոչ առևտրային կազմակերպության կարգավիճակ տալով՝ ստեղծվեց հնարավորություն պարկի տարածքում ներդաշնակելու բնօգտագործման (հատկապես ռեկրեացիոն ինդուստրիայի) և բնապահպանական գործառույթները: Այս կարգավիճակը հնարավորություն է տալիս պարկին զբաղվելու օրենքով թույլատրված որոշակի ձեռնարկատիրական գործունեությամբ և իրականացնել վճարովի ծառայություններ, այդ թվում՝

- Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կենսառեսուրսների, այդ թվում՝ բույսերի ու կենդանիների տեսակների, անտառային ռեսուրսների վերարտադրություն, օգտագործում և իրացում,
- բնափայտի մթերում, վերամշակում և իրացում,
- երկրորդական անտառանյութի (կոճղերի) մթերում, վերամշակում և իրացում,
- կողմնակի անտառօգտագործում (խոտհումձ, անասունների արածեցում, փեթակների և մեղվանոցների տեղադրում, վայրի պտղի, ընկույզի, սնկի, հատապտղի, դեղաբույսերի և տեխնիկական հումքի հավաքում) և դրա արդյունքում մթերված կենսապաշարների վերամշակում և իրացում,
- գյուղատնտեսական մթերքների արտադրություն, վերամշակում և իրացում,
- հանգստի և զբոսաշրջության հետ կապված սպասարկման ծառայությունների մատուցում,

- գիտական, գիտաճանաչողական գրականության և տեղեկատվական նյութերի պատրաստում ու հրատարակում:

Վերոգրյալ գործունեությունից ստացված հասույթը, ըստ «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կանոնադրության, օգտագործվում է պարկի կանոնադրական խնդիրների՝ գործառույթների իրականացման նպատակով (հիմնականում պահպանական):

Թվարկած կանոնադրական գործառույթների և ձեռնարկատիրական գործունեության կազմակերպման ու իրականացման համար «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ը ունի համապատասխան կառավարման համակարգ (կառուցվածքը) և աշխատողների անձնակազմ: Համաձայն ՊՈԱԿ-ի 2006 թվականի հաստիքացուցակի՝ ա/ աշխատողների ընդհանուր թվաքանակի (86 մարդ) 24.4 %-ը (կամ 20 մարդ) ազգային պարկի կառավարման վարչական ապարատն է՝ ներառյալ ղեկավարությունը (4 հաստիք – տնօրեն, տնօրենի տեղակալ պահպանության գծով, տնօրենի տեղակալ գիտության գծով, գլխավոր հաշվապահ),

բ/ աշխատողների ընդհանուր թվաքանակի 72.1 %-ը (կամ 62 մարդ), այդ թվում՝ պահպանության բաժին՝ 11 հաստիք, Դիլիջանի տեղամաս՝ 12 հաստիք, Շամախյանի տեղամաս՝ 12 հաստիք, Հաղարծինի տեղամաս՝ 13 հաստիք, Գոշի տեղամաս՝ 14 հաստիք, իրականացնում են ազգային պարկի պահպանության հետ կապված գործառույթներ,

գ/ աշխատողների ընդհանուր թվաքանակի 4.7 %-ը (կամ 4 մարդ)՝ ազգային պարկի գիտական բաժնի (ներառյալ՝ Բնության թանգարանը Դիլիջան քաղաքում, և տնկարանը, որտեղ կատարվում է հազվագյուտ բուսատեսակների աճեցում) աշխատողներն են:

Աշխատողների թվաքանակի և միջին ամսական աշխատավարձի չափերի դինամիկան վերջին տարիներին բնորոշվում է հետևյալ ցուցանիշներով՝

	2002թ.	2003թ.	2004թ.	2005թ.	2006թ.
Աշխատողների միջին ցուցակային թվաքանակը (մարդ)	74	95	92	84	86
Աշխատողների միջին ամսական աշխատավարձը (հազ.դրամ)	9.5	15.3	19.0	22.2	41.6

«Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի գործունեության ապահովման համար պետական բյուջեից կատարված հատկացումների և ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտների ծավալների դինամիկան հետևյալն է՝

Տարիները	«Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ եկամուտները/հասույթը / հազ.դրամ /		
	Պետությանը մատուցված ծառայություններից	Ձեռնարկատիրական գործունեությունից	ԸՆԴԱՄԵՆԸ
2003 թվական - փաստացի	17 168.0	33 941.2	51 109.2
2004 թվական - փաստացի	17 168.0	37 215.0	54 383.0
2005 թվական - փաստացի	27 168.0	25 233.0	52 401.0
2006 թվական - փաստացի	66 473.5	20 604.6	87 078.1

ՀՀ սոցիալ-տնտեսական ծանր իրավիճակի պայմաններում զգալիորեն ավելացել է բնակչության տեխնաժին և այլ ներգործությունը բնության, այդ թվում՝ ազգային պարկի վրա: Ներկայումս ազգային պարկի տարածքների պատշաճ պահպանությունը ենթադրվում է իրականացնել շուրջօրյա՝ 3-4 հերթափոխով, իսկ ազգային պարկում գործում են աշխատողների թվաքանակի նախկին՝ խորհրդային ժամանակահատվածից կիրառվող սահմանաքանակները, որոնցով լավագույն դեպքում նախատեսված է 1.5 հերթափոխով աշխատանք: Այս առումով, եթե նույնիսկ հաշվի չառնվի ազգային պարկի պահպանությունն իրականացնող անձնակազմի տեխնիկական թույլ զինվածությունը, ապա աշխատողների ներկայիս գործող թվաքանակը 2-ից 2.5 անգամ պակաս է անհրաժեշտ թվաքանակից:

Վերջին տարիներին, «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի բյուջետային ֆինանսավորման ծավալներն աճել են ավելի քան 2.5 անգամ, սակայն դրանք դեռևս բավարար չեն ազգային պարկի պահպանությունն արդյունավետ կազմակերպելու համար: Հսկիչները վարձատրություն են ստանում 8 ժամվա աշխատանքի համար, իսկ պատասխանատվություն կրում ամբողջ օրվա (24 ժամվա) համար:

Ազգային պարկի տարածքների պահպանության որակի և իրականացման արդյունավետության բարձրացումը ներկայումս զգալիորեն պայմանավորված է պահպանությունն իրականացնող անձնակազմի նյութատեխնիկական զինվածությամբ և, հատկապես, աշխատանքի վարձատրության օպտիմալ չափերով (2006 թվ. հաստքացուցակով հսկիչի ամսական աշխատավարձը կազմում է 35.0 հազ.դրամ): Գաղտնիք չէ, որ վարձատրության ոչ բավարար չափերը չեն ապահովում պարկերի պահպանության գծով աշխատանքների պահանջվող մակարդակը:

Կառավարման մասով առկա մյուս հիմնախնդիրներն են՝

1. հստակ չեն սահմանված «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի գործունեության նպատակների իրականացումը բնութագրող չափորոշիչները, բյուջետային ֆինանսավորման նախապայման հանդիսացող ծրագրային ցուցանիշները.
2. հստակ չեն սահմանված նաև բյուջետային ֆինանսավորում ստանալու չափորոշիչները, այդ թվում՝ ՊՈԱԿ-ների կանոնադրական խնդիրների կատարման շրջանակներում պետությանը մատուցվող ծառայությունների արժեքների գնագոյացման նորմատիվները՝ աշխատավարձի գծով (առավելագույն, միջին), ինչպես նաև նյութական և այլ ծախսերի գծով.
3. բացակայում են «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի բնականոն գործունեության և տեխնիկական անվտանգության չափորոշիչները (կիրառվող չափանիշները ժառանգված են խորհրդային ժամանակաշրջանից և չեն համապատասխանում այսօրվա պահանջներին), օրինակ՝ 1 հսկիչին ընկնող պահպանվող տարածքը՝ հեկտարներով և 1 հսկիչի տեխնիկական զինվածության չափորոշիչները.
4. «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կանոնադրությունով չի նախատեսված կառավարման կոլեգիալ մարմին (խորհուրդ), որը, մեր կարծիքով, թուլացնում է ազգային պարկի կառավարման մասով վարչարարության արդյունավետությունը.
5. թույլ է ծրագրային ցուցանիշների կապը ֆինանսական ցուցանիշների հետ, հատկապես՝ ձեռնարկատիրական գործունեությունից ստացվող եկամուտների գծով, որը շատ հաճախ հանգեցնում է դրանց ոչ նպատակային և ոչ արդյունավետ օգտագործմանը.
6. ՊՈԱԿ-ի գործունեության արդյունավետությանը խանգարում է «կառավարման լիազոր մարմին»-«ՊՈԱԿ-ի գործադիր մարմին» կապ-հանգույցում առկա մի շարք չլուծված հիմնախնդիրները, մասնավորապես՝
 - պայմանագրային պարտականությունների ոչ հստակ ձևակերպումներ, դրանց վերահսկման հարցերին ոչ բավարար վերաբերմունք,
 - խրախուսման, ձեռնարկատիրական գործունեությունից ստացվող եկամուտների աճը խթանող, համակարգի բացակայություն.

7. համապատասխան ֆինանսական մեխանիզմի բացակայության պատճառով ազգային պարկի տարածքներում բնօգտագործման արդյունքում ստացվող տնտեսական և ֆինանսական այլ օգուտների հիմնական (բնօգտագործման վճարներ, բնապահպանական տուգանքներ, բնությանը պատճառված վնասի հատուցման գումարներ և այլն) մասը չի վերադառնում բնապահպանության ոլորտ (նույն ազգային պարկի համար գերակա բնապահպանական միջոցառումների ֆինանսավորմանը):

Վայրի բնության պահպանության հիմնադրամի (WWF) և Համաշխարհային բանկի մշակած մեթոդիկայով 2005-2006 թ.թ. իրականացվել է «Դիլիջան» ազգային պարկի կառավարման գնահատում, որի արդյունքները հետևյալն են.

1. **Համատեքստային փուլ** - չնայած «Դիլիջան» ազգային պարկն ունի լիարժեք իրավական կարգավիճակ, այնուամենայնիվ հաճախ խնդիրներ են ծագում բնօգտագործման, հատկապես՝ հողօգտագործման բնագավառում, և հաստատված մեխանիզմներով համարժեք հսկողություն իրականացնելիս, որը պայմանավորված է համապատասխան կադրերի մասնագիտական որակավորմամբ (օրենքների, իրավական նորմերի վերաբերյալ և մասնագիտական թերի գիտելիքներ), բարձր որակավորում ունեցող մասնագետների, ինչպես նաև հաստիքների ընդհանուր քանակի սակավությամբ: Վերջինս հատկապես վերաբերվում է անտառապահների և տեսուչների քանակությանը, որն աշխատանքի դժվարության և ցածր վարձատրության հետևանք է: Դա էլ, իր հերթին, դրդապատճառ է հանդիսանում հսկիչների կողմից չարաշահումներ կատարելու համար:
2. **Պլանավորման փուլ** - պլանավորման գործընթացը պատշաճ կերպով է կատարվում, քանի որ դրված են այնպիսի հստակ խնդիրներ, որոնք լուծվում են աշխատակիցների տարեկան աշխատանքային պլանների հաստատման և իրականացման շնորհիվ, ենթակա են կանոնավոր մոնիտորինգի ու վերլուծության: Այնուամենայնիվ ոչ բոլոր նպատակներն են իրականացվում, քանի որ պլանավորման գործընթացն առայժմ ընթանում է համարյա առանց շահագրգիռ կողմերի հետ խորհրդակցության, որոնք գրեթե ազդեցություն չունեն որոշումների կայացման գործընթացի վրա: Մոնիտորինգի արդյունքները ևս համակարգված կերպով չեն օգտագործվում պատշաճ կառավարման գործում:
3. **Ներդրումային փուլ** - ազգային պարկի արդյունավետության բարձրացման հիմնական խորշընդոտներն են՝ ռեսուրսների (ներդրումների) առկայությունը, հատկացումները և դրանց ներուժը: Սա հատկապես վերաբերվում է կադրային քաղաքականությանը, որն, ընդհանուր առմամբ, ինչպես քանակական, այնպես էլ մասնագիտական պատրաստվածության առումով անբավարար է կառավարման առանցքային գործողությունների իրականացման համար: Ավելին, բացակայում է հաստատված վերապատրաստման երկարաժամկետ ծրագիր: Չնայած ընդհանուր առումով թվում է, որ ֆինանսական հատկացումները բավարար են, սակայն, ամբողջապես վերցրած, բավարար չեն արդյունավետ կառավարումն ապահովելու համար: Վերջապես, հետազոտական աշխատանքներն ու ուսումնասիրությունները չափազանց սահմանափակ են և կապված չեն ազգային պարկի կառավարման որոշակի կարիքների հետ:
4. **Գործընթացային փուլ** - Չնայած առանցքային էկոհամակարգերի, դրանց բաղադրիչների և մշակութային արժեքների արդյունավետ կառավարման խնդիրները հստակ ներկայացված են ազգային պարկի կանոնադրությունում, սակայն էկոհամակարգերի ընդհանուր պահպանության տեսակետից դրանք ամբողջական լուծում չեն ստանում: Աշխատակիցների տարեկան աշխատանքային պլանները մշակվում, իրականացվում և կանոնավոր կերպով մոնիտորինգի ու գնահատման են ենթարկվում, սակայն կառավարման որոշակի գործողությունների հաջող իրականացման համար խոչընդոտ է հանդիսանում համապատասխան որակյալ մասնագետների բացակայությունը, հատկապես գիտաշխատողների և տեսուչների պակասը: Կառավարման գործընթացի իրականացման համար առկա բյուջեն

բավարար է համարվում, սակայն այն պետք է սահմանվի կառավարման պլաններից ելնելով: Կանոնավոր կապեր կան ազգային պարկի, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների և հողօգտագործողների միջև, սակայն չափազանց սահմանափակ է որոշումների կայացման գործում նրանց համագործակցությունը: Նույնը կարելի է ասել պարկի և այլ շահագրգիռ կողմերի համագործակցության վերաբերյալ: Օրինակ՝ գործնականում ոչ մի կապ չկա ազգային պարկի և տուրօպերատորների միջև՝ ազգային պարկի տարածքների օգտագործման հարցում: Հետևաբար բացակայում է տուրիստական գործունեությունից ստացվող հասույթների մասնահանման հնարավորությունը: Մասնակցային կառավարումը և զարգացումը խոչընդոտվում է նաև այն հանգամանքով, որ ազգային պարկը թերաբժեք տեղեկատվություն է տրամադրում շահագրգիռ կողմերին իր գործունեության վերաբերյալ: Սա կրթական և հասարակության իրազեկության բարձրացման սահմանափակ գործընթացների հետևանք է:

5. Արդյունավետության փուլ - Կառավարման արդյունավետության վրա մեծ ազդեցություն ունեն համապատասխան կադրային և նյութական ռեսուրսների բացակայությունը: Ազգային պարկի կողմից մատուցվող ծառայություններն ինչպես քանակապես, այնպես էլ որակապես սահմանափակ են: Օրինակ՝ ազգային պարկում չի գործում այցելուների կենտրոն և սակավաթիվ բացատրական նյութեր ու ցուցատախտակներ կան: Դա վերաբերվում է հատկապես այն տարածքներին, որոնք իրենցից լուրջ տուրիստական հետաքրքրություն են ներկայացնում: Ազգային պարկի սահմանափակ գործողությունները հնարավորություն չեն տալիս նման ծառայությունների դիմաց այցելուներից վճարներ գանձելու մեխանիզմ կիրառել: Ընթացիկ գործողությունների տեսանկյունից ևս արդյունավետությունը թույլ է, որն արդյունք է պարկի և տեղական շահագրգիռ կողմերի միջև թույլ վստահության և հաղորդակցության: Ազգային պարկի և դրա պահպանական գոտու տարածքներում դեգրադացված տարածքների վերականգնման ծրագրի բացակայությունը ևս խոչընդոտում է կառավարման արդյունավետությանը:

6. Հետևանքների փուլ - Չնայած ազգային պարկի կառավարման նպատակն է պահպանել էկոհամակարգերի զարգացման գործընթացները, կենսաբազմազանությունն ու մշակութային հուշարձանները, սակայն շարունակվում են կարևոր նշանակություն ունեցող բնական պաշարների (հատկապես անտառային) կրճատման գործընթացները, խախտվում են աճելավայրերն ու բնադրավայրերը, որոնք հետևանք են գործառույթների անկանոն իրականացման (որպես փաստ՝ ապօրինի բնօգտագործման և չկարգավորված տուրիզմի առկայությունը): Ընդ որում՝ կադրային և նյութական ռեսուրսների անբավարարության պատճառով ազգային պարկի պահպանության համակարգը միջին արդյունավետություն ունի:

Ընդհանրացնելով սույն գնահատման արդյունքները՝ կարելի է հանգել այն եզրակացության, որ «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ը արդյունավետ կառավարումն ապահովելու և իր առջև դրված խնդիրները լիարժեք իրականացնելու համար ունի թույլ կարողություններ, որը պայմանավորված է հետևյալ հիմնական գործոններով.

- ազգային պարկի տարածքում գոյություն ունեցող արժեքների և դրանց սպառնացող վտանգների վերաբերյալ թերի տեղեկացվածություն.
- որակյալ կադրերի բացակայություն.
- կառավարման գործողությունների թերի իրականացում.
- կառավարման և որոշումների կայացման գործընթացին մասնակցային մոտեցման բացակայություն:

Բացի վերը նշվածից, ուշադրության է արժանի նաև այն փաստը, որ «Դիլիջան» ազգային պարկին հարակից համայնքները չեն մասնակցում կենսաբանական ռեսուրսների օգտագործումից ստացված օգուտների բաշխման գործընթացին: Բնօգտագործման ոլորտը կարգավորող իրավական ակտերը, թույլտվությունների և

սահմանափակումների ոչ օպտիմալ համակարգը, բուսական և կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործման չարդարացված բարդ ընթացակարգը բնակչության համար ստեղծում են հիմքեր կենսառեսուրսների ապօրինի օգտագործման համար: Ընդ որում՝ ազգային պարկի ռեժիմը խախտող ապօրինի գործողությունները հիմնականում տեղի են ունենում գիշերային ժամերին կամ շաբաթ ու կիրակի օրերին, երբ հսկողությունը սահմանափակ է կամ ընդհանրապես չի իրականացվում: Ազգային պարկը սահմանափակ հնարավորություններ ունի նաև տնտեսական մեխանիզմների և խթանման լծակների կիրառման առումով:

5.1. «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կառավարման բարելավման գործողություններ

«Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կառավարման բարելավման գործողությունները նպատակաուղղված են դրա կառուցվածքային և կադրային բարեփոխումներին, որոնցով հնարավոր կդառնա կանոնադրական գործառույթների արդյունավետ իրականացումը: Ընդ որում՝ կառուցվածքային բարեփոխումներում անհրաժեշտ է նկատի ունենալ այնպիսի ստորաբաժանումների առկայությունը, ինչպիսիք են՝ տարածքա-գործառնական և պահպանական գոտիների պահպանության, մոնիտորինգի և կադաստրի վարման, տնտեսական գործունեության պլանավորման, ռեկրեացիոն գործունեության պլանավորման բաժինները և տեղեկատվական կենտրոնը: Բացի այդ, անհրաժեշտ է «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ում ստեղծել խորհրդատվական մարմին, որում ընդգրկված կլինեն տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, բնօգտագործողների, տեղական հասարակական կազմակերպությունների և այլ շահագրգիռ կողմերի ներկայացուցիչներ, որի շնորհիվ կապահովվի որոշումների կայացման գործընթացում «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի գործունեության վերաբերյալ թափանցիկությունը և անհրաժեշտ տեղեկատվության փոխանակումը: Կառուցվածքային բարեփոխումների մյուս ուղղությունը դա «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ում այցելուների կենտրոնի ստեղծումն է: 2 Ծ»ՔճԾՄ»ճՇ İ»Մի ճճՂՇ Եİ »ՕՒ ՆՍ Ըժ İ 3 օ 3 Նճİ 1Շ 1/4ճճ3 ԲճՇՇ ԻՄ»ճՇՇ 3 Ծ»ՔճԾՄ»ճՇ ՆՅ Ն 3 Կճճ3 Գճճİ İ »ՕՒİ 3 İ İ ճճՂՇ Կ İ İ ճճ ՆՅ 1 ճճՇՂՇ ԿՄճճ »Ե 3 3 ճճ 1Շ · ճճİ ճճՄ»ճճՂՇ Կ, 3 ԾՄճ »Ե İÉ Ե ԿճճՂՇ Կ 3 ճճճ»ճճՇ ՆՅ ԵՇԿ: «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կառավարման արդյունավետության բարձրացմանը և ազգային պարկի օրենսդրությամբ սահմանված ռեժիմի ապահովմանը նպաստող գործողություններից են՝ տեսչական անձնակազմի աշխատավարձերի վերանայումը և պարգևատրությունների համակարգի կատարելագործումը, շուրջօրյա հսկողության համակարգի ներդրումը: «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կառավարման արդյունավետության բարձրացման առանցքային խնդիրներից են կադրերի վերապատրաստման հստակ ծրագրերի առկայությունը, հաստիքային միավորների ծառայողական պարտականությունների սահմանումը, գիտահետազոտական աշխատանքների թեմատիկ պլանավորումը և թեմաների մշակման ու դրանց հաստատման գործընթացների կատարելագործումը:

«Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կառավարման արդյունավետության բարձրացումը զգալիորեն պայմանավորված է նաև ազգային պարկի նշանակության և գործունեության մասին ազգաբնակչության իրազեկության մակարդակից: Այդ նպատակով անհրաժեշտ է իրականացնել շարունակական գործունեություն, որն հնարավոր է իրազեկության բարձրացման ծրագրի առկայության դեպքում:

Բ Ա Ժ Ի Ն 6. «Դիլիջան» ազգային պարկին հարակից համայնքների սոցիալ-տնտեսական բնութագիրը և շահագրգիռ կողմերի հետ պարկի մասնակցային կառավարման գործողությունների պլանը

6.1. Համայնքների սոցիալ-տնտեսական ընդհանուր վիճակը

«Դիլիջան» ազգային պարկին հարակից համայնքների սոցիալ-տնտեսական վիճակը պայմանավորված է համայնքների բնակչության զբաղվածությամբ և եկամուտների մակարդակով: Բնակչության գրեթե կեսից ավելին համարվում է աղքատ (Բնական պաշարների կառավարման և չքավորության նվազեցման ծրագրի շրջանակներում 2005 թվ. ապրիլ-հոկտեմբեր ամիսներին կատարված ուսումնասիրությունների վերաբերյալ մանրամասն հաշվետվությունը տրամադրվել է ՀՀ Բնապահպանության նախարարությանը և «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ին):

Վերջին մի քանի տարիների ընթացքում «Դիլիջան» ազգային պարկին հարակից համայնքներում, միգրացիոն գործընթացների և մահացության դեպքերի աճի ու ծնելիության նվազման հետևանքով, արձանագրվում է բնակչության թվաքանակի նվազում: Միգրացիոն գործընթացները խախտել են համայնքների բնակչության սեռատարիքային հավասարակշռությունը և պայմանավորել համայնքներում սոցիալական շերտավորման բնույթը: Միգրացիան դրսևորվում է իր դրական և բացասական կողմերով: Դրական կողմը տնտեսական է՝ ապահովում է լրացուցիչ ֆինանսական միջոցների ներհոսք: Բացասական հետևանքները ժողովրդագրական բնույթ ունեն՝ ամուսնալուծությունների թվի աճ, բնակչության վերարտադրության տեմպերի դանդաղում, երեխաների ոչ համարժեք սոցիալականացում: Ընդ որում՝ միգրացիոն գործընթացներում հիմնականում ընդգրկված է բնակչության երիտասարդ և միջին տարիքի արական սեռի ներկայացուցիչները: Այս հանգամանքը թույլ է տալիս ենթադրել, որ «Դիլիջան» ազգային պարկին հարակից համայնքներում դրսևորվում է բնակչության ծերացման միտում և ապագայում լուրջ հիմնախնդիր կարող է հանդիսանալ աշխատունակ բնակչության ոչ բավարար քանակությունը:

«Դիլիջան» ազգային պարկին հարակից որոշ համայնքներ (Խաչարձանը, Աղավնավանքը) 1988-1990-ական թվականներին վերաբնակեցվել են փախստականներով, որոնք դեռևս չեն հարմարվել գյուղական ապրելակերպին, որն էլ խոչընդոտում է այդ համայնքներում գյուղատնտեսության զարգացմանը: Նրանց մոտ դեռևս առկա են քաղաքային ապրելակերպի մի շարք տարրեր (օրինակ՝ ձգտում դեպի կոմերցիոն գործունեություն): Չհարմարվելով գյուղական կյանքի պայմաններին՝ նրանցից շատերը գտնվում են ինչպես մշտական, այնպես էլ սեզոնային միգրացիոն գործընթացներում:

«Դիլիջան» ազգային պարկին հարակից համայնքներում ամբողջությամբ բացակայում է կոյուղու համակարգը: Կենտրոնացված ջրամատակարարումից օգտվում է բնակչության շուրջ 50 %-ը: Գազաֆիկացման մակարդակը նույնպես հեռու է բավարար լինելուց: Ազգային պարկին հարակից համայնքների շուրջ կեսը գազաֆիկացված չեն:

«Դիլիջան» ազգային պարկին հարակից համայնքների բնակչության հիմնական գործունեության ոլորտը գյուղատնտեսությունն է (բացառությամբ Դիլիջան քաղաքի բնակչության մի մասի): Ընդ որում՝ գյուղատնտեսության ապրանքայնության մակարդակը խիստ ցածր է, ուղղորդված է, նախ և առաջ, բնակչության կենսական պահանջմունքների բավարարմանը: Գյուղմթերքի մասնակի իրացումը կազմակերպվում է հիմնականում անհատական նախաձեռնությամբ՝ մոտակա քաղաքներում և մայրաքաղաքում շուկա գտնելու միջոցով: Հաճախ գյուղմթերքն իրացվում է տեղում՝ գյուղացու համար ոչ ձեռնառու պայմաններով: Բնակչության մոտ 10-12 %-ը աշխատում է պետական կառույցներում՝ Դիլիջանի քաղաքապետարանում, գյուղապետարաններում, դպրոցներում, մանկապարտեզներում, բուժկետներում և այլն: Միջին աշխատավարձը ամսական կազմում է 20000-ից մինչև 30000 դրամ: Դիլիջան քաղաքի և Գոշ գյուղի

բնակչության մի մասը զբաղված են հյուրանոցային ծառայություններ մատուցելով՝ հատկապես ամռանը հանգստացողներին տրամադրելով օբևան: Սակայն նրանց թիվը չի գերազանցում այդ համայնքներում բոլոր տնային տնտեսությունների 1 կամ 2 %-ը:

6.2. Համայնքների կողմից «Դիլիջան» ազգային պարկի բնական պաշարների օգտագործումը

Համայնքների կողմից «Դիլիջան» ազգային պարկի բնական պաշարների օգտագործման առանձնահատկությունները պայմանավորված են ընդհանուր սոցիալ-տնտեսական վիճակով, որի հետևանքով այն հաճախ ուղեկցվում է օրինախախտումներով՝ բացասաբար ներգործելով էկոհամակարգերի հավասարակշռության վրա:

Ջրային ռեսուրսների օգտագործումը

Խմելու ջուրը ոչ լիարժեք է օգտագործվում բնակիչների կողմից՝ որոշ համայնքներում ֆիլտրացիայի բացակայության (Դիլիջան քաղաքի Թախտա և Շամախյան թաղամասեր), մյուսներում ջրատար խողովակների կամ պոմպակայանների բացակայության (օրինակ՝ Հաղարծին համայնքում) հետևանքով: Նույն ջուրը օգտագործվում է նաև ոռոգման նպատակներով, քանի որ չկա ոռոգման համակարգ (ջրային էկոհամակարգերի վիճակը ներկայացված է սույն կառավարման պլանի 7.1. կետում):

Ռեկրեացիոն նպատակներով տարածքների օգտագործումը

«Դիլիջան» ազգային պարկի տարածքում ռեկրեացիան հիմնականում տարերային և չվերահսկվող բնույթ ունի: Այն առավելապես ընդգրկում է Հաղարծինի ձորը, Դիլիջան-Իջևան, Դիլիջան-Վանաձոր ավտոճանապարհների, ինչպես նաև Դիլիջանի ոլորանների եզրաշերտերը: Ռեկրեացիոն հստակ գործունեությամբ զբաղվողներ գրեթե չկան, թերևս բացառություն է կազմում միայն վերջին երկու տարիների ընթացքում Պարզ լճի շրջակայքում կազմակերպված հանգստավայրը: Մնացած հատվածներում գործում են ռեստորաններ, կրպակներ, խորովածանոցներ և այլն, որոնցում բացակայում է ռեկրեացիոն սպասարկումը: Դրան զուգահեռ, որոշակիորեն զարգացած են տուրիստական ենթակառուցվածքները: Ընդ որում՝ այս բնագավառում ներգրավված կազմակերպությունների գերակշիռ մասն իրենց գործունեությունն իրականացնում են գլխավորապես ամառային ամիսներին և, բնականաբար, զբոսաշրջության բնագավառի ծառայությունների մատուցման համար մեծ ծավալի ներդրումներ չեն իրականացնում («Դիլիջան» ազգային պարկում տուրիզմի և ռեկրեացիայի առանձնահատկությունները տրված են սույն կառավարման պլանի Բաժին 8-ում):

Արածեցումը

«Դիլիջան» ազգային պարկին հարակից համայնքների ղեկավարներից շատերի վկայությամբ բնակչությունը որպես արոտավայր հաճախ օգտագործում է ազգային պարկի տարածքը, այդ թվում՝ նաև անտառապատ: Ընդ որում՝ ազգային պարկի տարածքով են անցնում ամառային արոտավայրեր անասունների տարանցիկ տեղափոխման ճանապարհները:

Գյուղամերձ արոտավայրերի սակավությունը կամ նույնիսկ բացակայությունը, ինչպես նաև պահպանվող տարածքներում արածեցման վերաբերյալ օրենքով նախատեսված սահմանափակումների չիմացությունը, բնակչության կողմից հանգեցնում է ազգային պարկի տարածքում անասունների արածեցմանը, մասնավորապես՝ անտառներում: Այսպես՝ միայն Դիլիջան քաղաքային համայնքում պահում են ավելի քան 2000 գլուխ խոշոր և մոտ 1100 գլուխ մանր եղջերավոր կենդանիներ: Անասնապահությամբ զբաղվող ընտանիքները հիմնականում ունեն 1-3, հազվադեպ՝ 4-6 գլուխ խոշոր եղջերավոր

կենդանիներ: Այդքան գլխաքանակով կենդանիները հեռագնա արոտավայրեր տանելը տնտեսապես նպատակահարմար չէ: Հեռագնա արոտավայրեր տանելուն խոչընդոտում է նաև ճանապարհների դժվարանցանելիությունը: Ընդ որում՝ համայնքին պատկանող արոտավայրերը գտնվում են քաղաքից 10-30 կմ հեռավորության վրա: Դրանք բացառապես օգտագործում են մի քանի անհատներ, որոնք ունեն 20 և ավելի գլուխ անասուններ:

Թեղուտ համայնքում պահում են մոտ 500 գլուխ խոշոր և մոտ 100 գլուխ մանր եղջերավոր կենդանի: Համայնքին պատկանող արոտավայրերն ու խոտհարքները մանր կտորներով գտնվում են ազգային պարկի տարբեր հատվածներում: Հետևաբար այնտեղ տանող ճանապարհներն էլ բազմազան են, որոնցով անցնող անասունները բավական վնաս են հասցնում անտառի մատղաշին:

Հաղարծին համայնքից յուրաքանչյուր տարի հեռագնա արոտավայրեր են տանում մոտ 700 գլուխ խոշոր և շուրջ 120 գլուխ մանր եղջերավոր կենդանի: Համայնքին պատկանող արոտավայրերն ու խոտհարքները մանր կտորներով գտնվում են ազգային պարկի տարբեր հատվածներում՝ գյուղից 20-60 կմ հեռավորության վրա: Հարկ է նշել, որ Հաղարծինում անասունների տարանցիկ տեղափոխումը դեպի արոտավայրեր կատարվում է «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի հետ համաձայնեցված կարգով:

Գոշ համայնքում բնակիչներն ունեն շուրջ 500 գլուխ խոշոր և մոտ 200 գլուխ մանր եղջերավոր կենդանիներ: Հեռագնա արոտավայրերն ու խոտհարքները գտնվում են Արեգունի լեռնաշղթայի վրա՝ բնակավայրից 8-10 կմ հեռավորությամբ: Հարկ է նշել, որ Գոշի տարածքով, անտառի միջով, դեպի ամառային արոտավայր անասուններ են տանում Աչաջուր, Գանձաքար և Լուսածոր համայնքի բնակիչները ևս:

Խաչարձան համայնքում պահում են շուրջ 450 գլուխ խոշոր և մոտ 200 գլուխ մանր եղջերավոր կենդանիներ: Հեռագնա արոտավայրեր տանող ճանապարհը ազգային պարկի անտառային տարածքներով չի անցնում: Արոտավայրերն օգտագործվում են միայն Գեղատափի տնտեսության բնակիչների կողմից (արոտավայրերի հեռավորությունը մոտ 5 կմ է):

Աղավնավանքում պահում են ավելի քան 200 գլուխ խոշոր և մոտ 100 գլուխ մանր եղջերավոր կենդանիներ: Հեռագնա արոտավայրերի հեռավորության և ճանապարհների դժվարանցանելիության պատճառով չեն օգտվում: Ողջ ծանրաբեռնվածությունն ընկնում է գյուղամերձ տարածքների վրա:

Բացի վերը նշվածից՝ «Դիլիջան» ազգային պարկին հարակից համայնքներում նկատվում է խոզաբուծության զարգացման միտում, քանի որ խոզերը անարգել պահվում են անտառում և այդ իմաստով քիչ ծախսատար են: Մեծացել է նաև անտառում պահված խոզի մսի պահանջարկը:

Բուսական պաշարների օգտագործումը

Վերջին տարիներին «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի խիստ վերահսկողության արդյունքում թեև նվազել են ապօրինի անտառահատումների ծավալները, սակայն վառելափայտը դեռևս մեծ քանակներով օգտագործվում է բնակչության կողմից: Տարեկան միջին վիճակագրական ընտանիքի համար օգտագործվում է նվազագույնը 10 մ³ և առավելագույնը 30 մ³ վառելափայտ (կախված է բնակարանի տիպից և բնակավայրի զագաֆիկացված լինելուց, քանի որ այն համայնքներում, որտեղ զագատար չկա, այնտեղ վառելափայտի օգտագործման աստիճանը բարձր է): Շատերն օգտվում են թափուկից, որի հավաքն իրականացվում է «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի թույլտվությամբ:

Անտառային կողմնարդյունքից առավել շատ օգտագործվում են սունկը, կաղինը և մասուրը: Որոշ համայնքներում, ինչպիսիք են՝ Դիլիջանը (Թախտա և Շամախյան քաղամասեր), Ֆիոլետովոն, Հաղարծինը, Թեղուտը, Գոշը, դա բնակչության մի մասի համար հանդիսանում է սեզոնային եկամտի հիմնական աղբյուր: Սնկի արժեքը միջինում կազմում է 400 դրամ/կգ (սալիլ-նոյեմբեր ամիսներ): Սնկի վաճառքով զբաղվող

յուրաքանչյուր մարդ օրական վաճառում է 10-15 կգ: Հարկ է նշել, որ առանձին սեզոնների ընթացքում ազգային պարկի տարածքից օգտվողների թվաքանակը զգալիորեն ավելանում է: Բնակչությունը անտառներից անարգել հավաքում է վայրի տանձ, ընկույզ, հաճար, ազնվամորի, գետնամորի, սինդրի, ծներեկ, ավելուկ և այլ վայրի օգտակար բույսեր՝ անձնական կարիքների և վաճառքի նպատակով: Ընդ որում՝ սնկի, հատապտուղների, ուտելի բույսերի, դեղաբույսերի հավաքն իրականացվում է տարերայնորեն՝ առանց «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի հետ համաձայնեցման:

Կենդանական պաշարների օգտագործումը

«Դիլիջան» ազգային պարկի տարածքում որսն արգելված է, սակայն ուսումնասիրված համայնքներում կենդանիների որսը սահմանափակ քանակությամբ իրականացվում է անհատական կարիքները հոգալու համար: Որսում են հիմնականում նապաստակ, լոր, աղավնի, գայլ, աղվես: Գայլերի որսն հիմնականում իրականացվում է մորթու համար:

6.3. Բնական պաշարների օգտագործման բնագավառում բնակչության իրազեկությունը, «Մևան» ազգային պարկի և շահագրգիռ կողմերի միջև փոխհարաբերությունների բնույթը

Չնայած բնակիչները իրազեկ են «Դիլիջան» ազգային պարկի և դրա բնական պաշարների, ինչպես նաև դրանց ձեռք բերման վայրերի ու ուղիների մասին, սակայն հստակ և գիտականորեն հիմնավորված տեղեկատվության բացակայության պատճառով նրանք տեղյակ չեն բնական պաշարների շարունակական օգտագործման և վայրի բնության պահպանության ու կառավարման հարցերին: Տեղեկատվության տարածման գործում «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ը նախաձեռնել է որոշակի քայլեր՝ տպագրել է ազգային պարկին վերաբերող տեղեկատվական նյութեր, իրականացնում է ազգային պարկի վերաբերյալ ֆիլմի նկարահանման աշխատանքներ, հանդես է գալիս տեղական հեռուստատեսությամբ և այլն:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ազգային պարկի բնական պաշարների օգտագործումն ունի չկանոնակարգված բնույթ և հաշվառման համակարգի բացակայության պատճառով հնարավոր չէ ամբողջապես բնութագրել «տնտեսավարող սուբյեկտ-ազգային պարկ» փոխհարաբերությունները: Այսպես՝ «Դիլիջան» ազգային պարկին հարակից համայնքներում գործող տնտեսավարող սուբյեկտներից ձկնաբուծական գործունեություն են իրականացնում շուրջ 10 կազմակերպություններ. անտառօգտագործող կազմակերպությունների թիվը հասնում է 77-ի. շուրջ 70 կազմակերպություններ զբաղվում են հանգստի կազմակերպման, հյուրանոցային և ռեստորանային սպասարկման բնագավառներում: Նշված կազմակերպություններն իրենց գործունեությունն իրականացնում են հիմնականում ազգային պարկի տարածքում, սակայն 2005 թվ. հուլիս ամսվա տվյալներով դրանցից ոչ մեկը պայմանագրային հարաբերությունների մեջ չի եղել «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի հետ: Ելնելով այն հանգամանքից, որ ոչ մի տնտեսավարող սուբյեկտ «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի հետ իր գործունեությունը չի վավերացրել իրավանորմատիվային ձևակերպումով՝ էական խնդիր է հանդիսանում ինչպես տնտեսավարողների, այնպես էլ վերջիններիս գործունեության շրջանակի հստակեցումը: Ընդ որում՝ ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի «Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն» առանձնացված ստորաբաժանման կանոնադրությունը ունի զգալի բացեր, որի արդյունքում գրանցված այդ կազմակերպությունների որոշ մասը կարող են գործող չլինել, ռեգիստրում չեն արտացոլվում գրանցված կազմակերպությունների կողմից ազգային պարկին առնչվող գործունեության տեսակները և այլն:

«Դիլիջան» ազգային պարկի մասնակցային կառավարման գործընթացում համայնքների մասնակցության հիմնական խոչընդոտ են հանդիսանում հասարակական կազմակերպությունների և «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի չհամաձայնեցված

գործողությունները: Բացի այդ, «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տեսչական անձնակազմի կողմից հսկողական ռեժիմի ուժեղացման հետևանքով հարակից համայնքների բնակիչների մոտ ձևավորվել է անհանդուրժողական վերաբերմունք, հակադրվածություն և լարվածություն, որը խոչընդոտում է «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի հետ համագործակցային հարաբերությունների ձևավորմանը: Դրան զգալիորեն նպաստում է նաև համայնքների բնակչության իրավական անգրագիտությունը, ցածր կրթական մակարդակը և այլն: Համայնքների ներկայացուցիչների մեծամասնությունը, օրինակ, տեղյակ չէ նույնիսկ, որ «Դիլիջան» պետական արգելոցը վերակազմավորվել է «Դիլիջան» ազգային պարկի:

«Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի, տնտեսավարող սուբյեկտների և տեղական ինքնակառավարման մարմինների համագործակցության խորացման գործում նշանակալից դեր կարող են ունենալ հասարակական կազմակերպությունները: Վերջիններս, մի կողմից, կարող են հանդես գալ որպես համայնքային շահեր ներկայացնող, մյուս կողմից՝ որպես բնապահպանական գործունեություն ծավալող կառույցներ: Թեև «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ը և հասարակական կազմակերպությունները պատրաստ են համագործակցել, սակայն նրանց փոխհարաբերությունները, որպես շահագրգիռ կողմ կամ գործընկերներ, դեռևս հստակ ձևավորված չեն: Փոխհարաբերությունների հստակեցմանը զգալիորեն խոչընդոտում է նաև հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների սահմանափակ պատկերացումները «Դիլիջան» ազգային պարկի սահմանների, բնական ժառանգության և դրանց նշանակության մասին: «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կողմից հասարակական կազմակերպությունների իրազեկության բարձրացման նախաձեռնությունները կարող են նպաստել արդյունավետ համագործակցության հաստատմանը:

Համագործակցության եզրեր գրեթե չկան «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի և պատմամշակութային հուշարձանների պահպանությամբ զբաղվող կազմակերպությունների միջև:

Ուսումնասիրությունների արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի և շահագրգիռ կողմերի արդյունավետ փոխհարաբերությունների հաստատումը պայմանավորված է տնտեսական, վարչակառավարչական և իրավական գործոններով, որոնց շրջանակներում փոխհամաձայնեցված գործողությունները կարող են կայուն հիմքեր ստեղծել ազգային պարկի մասնակցային կառավարման գործում:

6.4. «Դիլիջան» ազգային պարկի և դրա պահպանման գոտու տարածքներում բնական պաշարների օգտագործումից ստացված շահույթի արդարացի բաշխման առանձնահատկությունները

«Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի և շահագրգիռ կողմերի փոխհարաբերությունների բնույթից ակնհայտ է, որ «Դիլիջան» ազգային պարկի և դրա պահպանման գոտու տարածքներում բնական պաշարների օգտագործումից ստացված շահույթի բաշխում ընդհանրապես չի կատարվում: «Դիլիջան» ազգային պարկի հարակից համայնքների բնակչության հիմնական մասը, տեղական ինքնակառավարման մարմինները օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով չեն մասնակցում կենսաբանական ռեսուրսների օգտագործումից ստացվող շահույթների բաշխման գործընթացին, ուղղակիորեն չեն ստանում դրանց որոշակի մասը: Դեռ ավելին՝ բավական մեծ է ստվերայնությունը: Բնօգտագործման ոլորտը կարգավորող իրավական դաշտում առկա թերությունները, մեխանիզմների, թույլտվությունների և սահմանափակումների ոչ օպտիմալ համակարգը, բուսական և կենդանական աշխարհի օբյեկտների օրինական օգտագործման, այդ թվում՝ լիցենզավորման համակարգի ազգաբնակչության համար ոչ դյուրին լինելը, նրանց համար ընդունելի ու հասկանալի ընթացակարգերի բացակայությունը ստեղծում են նպաստավոր պայմաններ կենսաբանական պաշարների

ապօրինի օգտագործման համար, որի արդյունքում այդ պաշարների օգտագործումից ստացվող շահույթը դուրս է մնում հաշվառման և հարկման դաշտից: Ապօրինի օգտագործման պայմաններում կենսապաշարների հիմնական մասը իրացվում է «ստվերային» կարգով, շուկայական գնից բավականին ցածր, որի արդյունքում կենսատեսուրսների օգտագործումից ստացվող շահույթների հիմնական մասի ձևավորվումը (գեներացիան), այդ ռեսուրսի իրական շուկայական գնին համարժեք չափով, իրականացվում է իրացման շրջանի վերջին փուլում, ազգային պարկի և պահպանական գոտուց բավականին հեռու: Գործող հարկային դաշտը և տնտեսական այլ մեխանիզմները, ինչպես վկայում է վերջին տարիների փորձը, չեն նպաստում կենսապաշարների ապօրինի օգտագործման ծավալների նվազմանը: Դա հատկապես վերաբերվում է հատապտուղների, սնկերի, ուտելի բույսերի և դեղաբույսերի օգտագործմանը, որն առավելագույն չափով կրում է «ստվերային» բնույթ և դրանց օգտագործումից ստացվող շահույթները շրջանցում են ՀՀ պետական և «Դիվիզան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի բյուջեները: Վարչարարության/վերահսկողության նույնիսկ ուժեղացումը՝ բնօգտագործման նոր, տեղական բնակչության առավել ընդգրկում և ակտիվ մասնակցությունն ապահովող/մասնակցության վրա հենված տեսակների (ներառյալ դրանց ներդրումը խթանող տնտեսական մեխանիզմները) չկիրառման կամ չներդրման պարագայում, չի տալիս ցանկալի արդյունքներ, տարածաշրջանում չի ստեղծում աղքատության հաղթահարման իրատեսական հնարավորություններ: Բացի այդ, հողի և անշարժ գույքի գնահատման գործող համակարգերը և կադաստրային գները (արժեքները), դրանց հաշվարկման հիմքում դրվող գոտիականության գործակիցները հիմնականում հաշվի չեն առնում անտառային հողերի բնապահպանական և ռեկրեացիոն արժեքները, որի արդյունքում դրանց հաշվին ստեղծվող օգուտների հիմնական մասը դուրս է մնում հարկման դաշտից՝ չբաշխվելով, նույնիսկ այն տարածքում, որտեղ դրանք ստեղծվել և գեներացիայի են ենթարկվել: Կենսաբանական ռեսուրսների օգտագործումից ստացվող շահույթների հիմնական մասը, նույնիսկ բնապահպանական ծագում և նշանակություն ունեցող, համապատասխան կուտակող և նպատակային օգտագործումն ապահովող ֆինանսական մեխանիզմների բացակայության պայմաններում, տարբեր հարկերի և վճարների տեսքով դուրս են գալիս տարածաշրջանից և հետ չեն վերադառնում՝ զրկելով տարածաշրջանն առաջնահերթ և կարևոր նշանակության սոցիալ-տնտեսական և բնապահպանական հիմնախնդիրներ լուծելու համար անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսներից:

6.5. «Դիվիզան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կողմից բնական պաշարների պահպանումը և օգտագործման կարգավորումը

Ուսումնասիրությունների արդյունքները վկայում են, որ «Դիվիզան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կողմից բնական պաշարների պահպանությունը և դրանց օգտագործման կարգավորման լուծումները հեռու են բավարար լինելուց: Դա հատկապես վերաբերվում է ազգային պարկի տարածքում արածեցման կանխարգելմանը, ռեկրեացիոն նշանակության տարածքների արդյունավետ օգտագործմանը: «Դիվիզան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի ներկայացուցիչների հավաստմամբ՝ բնական պաշարների օգտագործման անարդյունավետ վերահսկումը հիմնականում պայմանավորված է որակյալ և մշտական աշխատողների անբավարար քանակով (օրինակ՝ մեկ անտառապահը պատասխանատու է միջինը մոտ 600 հա տարածքի համար) և գիշերային հերթափոխի բացակայությամբ: Բացի այդ, տեսուչները չունեն տրանսպորտային միջոցներ, զենք: Լուրջ խոչընդոտող գործոններից է ցածր աշխատավարձը, ինչը նվազեցնում է աշխատանքի արդյունավետության նկատմամբ աշխատակիցների շահագրգռվածությունը, որի արդյունքում հաճախ խախտումներ հայտնաբերելիս չեն կիրառվում գործող օրենքներն ու պատժամիջոցները: Արդյունքում՝ որոշ համայնքների անդամների կողմից «Դիվիզան» ազգային պարկի օրենսդրությամբ սահմանված ռեժիմի խախտումները մշտական բնույթ են կրում և անհրաժեշտություն կա, որպեսզի «Դիվիզան»

ազգային պարկ» ՊՈԱԿ-ը համապատասխան գործողություններ իրականացնի: Այդ խախտումների բնույթը, կարևորության աստիճանը և խախտումներն իրականացնող համայնքները ներկայացված են աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1

Խախտումների բնույթը	Կարևորության աստիճանը	Համայնքները
Անտառահատումներ	բարձր	Թախտա, Գոշ, Խաչարձան, Աղավնավանք
	միջին	Շամախյան, Հաղարծին, Թեղուտ
	ցածր	Ֆիոլետովո
Ոչ փայտային անտառային կողմնարդյունքների օգտագործում	բարձր	Հաղարծին, Գոշ
	միջին	Թախտա, Շամախյան, Թեղուտ, Խաչարձան
	ցածր	Աղավնավանք, Ֆիոլետովո
Արածեցում անտառում	բարձր	Թախտա, Շամախյան, Հաղարծին, Թեղուտ, Աղավնավանք
	միջին	Թախտա, Հաղարծին, Խաչարձան
	ցածր	Գոշ, Ֆիոլետովո

6.6. «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի և շահագրգիռ կողմերի մասնակցային կառավարման գործողություններ

«Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի և շահագրգիռ կողմերի մասնակցային կառավարման գործողությունները նախ և առաջ պայմանավորված են «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կառավարման բարելավման գործողությունների իրականացմամբ, մասնավորապես՝ կառուցվածքային և կադրային բարեփոխումներով (Հավելված 1): Մասնակցային կառավարման գործողությունները պետք է ընդգրկեն նաև «Դիլիջան» ազգային պարկի և դրա պահպանական գոտու բնական էկոհամակարգերի բարելավմանն ուղղված, ազգային պարկին հարակից համայնքների վարչական սահմաններում պետական սեփականության անտառային տարածքների կառավարման, ինչպես նաև տուրիզմի և ռեկրեացիայի կարգավորման և կենսաբազմազանության մոնիտորինգի համակարգի ներդրման սույն կառավարման պլաններով նախատեսված գործողությունների իրականացումը (Հավելված 1):

Մասնակցային կառավարման գործողություններում առանձնահատուկ տեղ ունեն «Դիլիջան» ազգային պարկին հարակից համայնքների բնակիչների կողմից դեպի անտառային արոտավայրեր անասունների տարանցիկ տեղափոխման օպտիմալ երթուղիներից օգտվելու հիմնախնդիրների կարգավորումը (Հավելված 1): Այդ նպատակով, կատարված ուսումնասիրությունների արդյունքում, առաջարկվում են, ըստ առավել խոցելի համայնքների, հետևյալ երթուղիները: Ընդ որում՝ երթուղիների ընտրության կարևոր սկզբունք է ընդունվել այն չափանիշը, որ անասունների տեղափոխման ժամանակ նվազագույնի հասցվի անտառի բնական վերածին հասցված վնասը: Համաձայն այդ սկզբունքի՝ երթուղիներն հիմնականում անցնում են ջրբաժաններով կամ ձորերի հատակներով (Քարտեզ 9): Ընդ որում՝ առաջարկվող երթուղիները համաձայնեցվել են «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի, համայնքների ղեկավարների և բնակիչների հետ:

ՀԱՂԱՐԾՆԻ ԵՎ ԹԵՂՈՒՏԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ

1-ին երթուղի՝ դեպի «Հարթասարի» (Մեյդան) արոտավայր. մինչև «Կոմպոզիտորների տուն» երթուղին անցնում է Իջևան-Երևան ավտոմայրուղով: «Կոմպոզիտորների

տուն» թեքվող խաչմերուկից անցնելով կամուրջը՝ երթուղին թեքվում է դեպի ձախ, անտառամիջյան ճանապարհով անցնում մոտ 4 կմ և հասնում «Հարթասարի» արտամարզագետնային զանգված:

2-րդ երթուղի՝ դեպի «Դալիդադ» արտավայր. մինչև Հաղարծին վանք երթուղին անցնում է ասֆալտապատ ճանապարհով 4 կմ: Այնուհետև՝ Հաղարծնի վանքից անտառամիջյան ճանապարհով շարունակվում է դեպի արևմուտք, ապա՝ հյուսիս-արևմտյան ուղղությամբ անցնում է մոտ 3,5 կմ և հասնում «Դալիդադ» հանդամաս: Այդտեղից անտառի հետ չառնչվող տարբեր ճանապարհներով երթուղին շարունակվում է դեպի տարբեր հանդամասեր:

3-րդ երթուղի՝ դեպի «Թալա» արտավայր. երթուղին անցնում է Իջևան-Դիլիջան ավտոմայրուղուց դեպի Հաղարծնի վանք տանող 3 կմ ասֆալտապատ ճանապարհով, որտեղից թեքվում է դեպի աջ՝ անտառամիջյան ճանապարհով անցնում է մոտ 2,5 կմ և հասնում արտավայր:

4-րդ երթուղի՝ դեպի «Գյուլեր» հանդամաս. երթուղին Թեղուտ համայնքի գերեզմանների մոտով 4 կմ ազգային պարկի տարածքով բարձրանում է դեպի հյուսիս (ձորերի ջրբաժանով)՝ մինչև հեռագնա արտավայրերի «Գյուլեր» հանդամասը: Այստեղից հեռագնա արտավայրերի միջով անցնող տարբեր ճանապարհներով հասնում է հանդամասեր:

ԴԻԼԻՉԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ (Շամախյան թաղամաս)

Դեպի հեռագնա արտավայրի «Այրիդաշ» հանդամաս գնալու համար, բարդ ռելիեֆային պայմաններից ելնելով, առաջարկվում է երկու երթուղի:

1-ին երթուղի. Շամախյան թաղամասից երթուղին թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, ազգային պարկի տարածքին չառնչվող ճանապարհով անցնում է մոտ 5 կմ և հասնում արտավայր:

2-րդ երթուղի. Շամախյան թաղամասից երթուղին թեքվում է դեպի հյուսիս-արևելք, ոլորապտույտ ճանապարհով մոտ 2 կմ մտնում է ձոր, ձորի աջ եզրով մոտ 3 կմ բարձրանում դեպի հյուսիս, ապա դուրս գալով ձորից՝ ազգային պարկի տարածքով ևս 1.5 կմ անցնում է նույն ուղղությամբ և հասնում արտավայր:

ԳՈՇ ՀԱՄԱՅՆՔ

Գոշից դեպի հեռագնա կերհանդակներ հայտնի են երկու երթուղներ: Ընդ որում՝ մինչև «Վերին թալա» գնում են մեկ ճանապարհով, այստեղից այն ճյուղավորվում է երկու մասի՝ երկուսն էլ քանդված են:

Առաջարկվում է հետևյալ երթուղին, որը նպատակահարմար է մի քանի առումներով.

1. բնակավայրից արտավայր տանող ամենակարճ ճանապարհն է.
2. ազգային պարկի տարածքով անցնող հատվածը ամենակարճն է՝ այլ երթուղիների համեմատ.
3. ճանապարհը վերանորոգվել է վերջին տարիներին՝ Բնական պաշարների կառավարման և չքավորության նվազեցման ծրագրի շրջանակներում և գտնվում է բարվոք վիճակում:

Երթուղի. երթուղին սկսվում է բնակավայրի հյուսիս-արևմտյան մասից՝ Գոշավանքի մոտից: Դուրս գալով բնակավայրից՝ թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, ապա արևմուտք, համայնքի վարչական տարածքի դաշտամիջյան ճանապարհով անցնում է 2 կմ, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք՝ ազգային պարկի տարածքի անտառամիջյան ճանապարհով անցնում է մոտ 0,5 կմ, ապա մտնում է Գոշ համայնքի III-րդ հատվածի «Լարի գոմեր» տարածք, որտեղով 0,7 կմ անցնելուց հետո դարձյալ մտնում է ազգային պարկի տարածք և անտառամիջյան ճանապարհով ևս 2 կմ անցնելով հասնում ամառային արտավայր:

Բ Ա Ժ Ի Ն 7. «Դիլիջան» ազգային պարկի բնական էկոհամակարգերի ներկա վիճակը և դրանց բարելավմանն ուղղված գործողությունների պլանը

7.1. ԶՐԱՅԻՆ ԷԿՈՂՈՍՏԱԿԱՐԳԵՐ

Պարզ և Գոշ լճերի էկոլոգիական վիճակը

Պարզ և Գոշ լճերի ջրաֆիզիկական և ջրաքիմիական ցուցանիշների 2005 թվ. կատարված ուսումնասիրությունները իրենց բնույթով եզակի են, քանի որ վերջին մի քանի տասնամյակների ընթացքում նման ուսումնասիրություններ չեն կատարվել:

Ուսումնասիրությունների արդյունքում պարզվեց, որ լճերի մակարդակները էական տատանումներ չունեն: Առավելագույն ջերմաստիճան, 22 °C, դիտվում է հուլիս-օգոստոս ամիսներին: Ջրերի հանքայնացումը տատանվում է 300-450գ/մ³ սահմաններում, որը միջին հանքայնացման դասակարգման սահմաններում է և մակերևութային ջրերի համար նորմալ է: Հանքային ազոտի (0.64 գ/մ³) և ֆոսֆորի (0.007 գ/մ³) առավելագույն արժեքներ գրանցվել են հունիսին, այնուհետև նկատվում է դրանց կտրուկ անկում: Ջրածնային ցուցիչի՝ pH-ի արժեքը 8.2: Օրգանական նյութերի պարունակությունը պայմանավորված է անտառից տարբեր ծագում ունեցող օրգանական և հումիմային նյութերի ներհոսքով, սակայն հետազոտման ընթացքում այն փոփոխվել է փոքր տիրույթում՝ պերմանգանատային օքսիդացումը (ՊՕ)՝ 5.28-7.68 գՕ/մ³, բիքրոմատային օքսիդացումը (ԲՕ)՝ 14-20 գՕ/մ³, թթվածնի կենսաքիմիական պահանջարկը (ԹԿՊ₅)՝ 1.56-2.66 գՕ₂/մ³:

Ստացված ջրաֆիզիկական և ջրաքիմիական տվյալների հիման վրա Պարզ և Գոշ լճերի ջրերը, ըստ մակերևութային ջրերի աղտոտվածության մակարդակի, բնորոշվում են՝ դաս 2 (մաքուր), կատեգորիա 2 (մաքուր):

Գետերի էկոլոգիական վիճակը

Ստորև բերվում են «Դիլիջան» ազգային պարկի տարածքով հոսող գետերի ջրաֆիզիկական և ջրաքիմիական բնութագրերը, որոնք սահմանվել են 2005 թվ. հունիս-հոկտեմբեր ամիսներին իրականացված ուսումնասիրությունների արդյունքում:

- 1. Ջերմաստիճանը.** պարզվել է, որ առավելագույն ջերմաստիճան, 21°C, գրանցվել է հուլիս-օգոստոս ամիսներին՝ Բլղան գետում: Նվազագույն ջերմաստիճանի նշման համար անհրաժեշտ են ձմեռային ամիսներին իրականացվող հետազոտություններ:
- 2. Գետերի ջրերի հանքայնացումը** տատանվում է 200-350գ/մ³ սահմաններում, որը միջին հանքայնացման դասակարգման սահմաններում է: Ջրերի հանքայնացման տարբերությունները առավելապես բացատրվում են տեղանքի երկրաբանական, ապառների քիմիական կազմի տարբերություններով: Այս տարածքի մակերևութային ջրերը հիմնականում հիդրոկարբոնատային բնույթ ունեն:
- 3. Ջրածնային ցուցիչը՝ pH.** բոլոր հետազոտված դիտակետերում ջրի pH-ի արժեքը եղել է 7.4 տիրույթում: Ջրածնային ցուցիչի արժեքների նման տիրույթը բնորոշ է լեռնային ջրային էկոհամակարգերի համար:
- 4. Կախված մասնիկներ.** Աղստևի հոսքի ուղղությամբ նկատվում է կախված մասնիկների քանակության մեծացման միտում:
- 5. Լուծված թթվածին.** Հետազոտման ժամանակահատվածում գրանցվել է լեռնային հիդրոէկոհամակարգերին բնորոշ լուծված թթվածնով հագեցվածություն և գերհագեցում՝ նույնիսկ ամռան ամիսներին:
- 6. Հանքային ազոտ և ֆոսֆոր.** Աղստևի հոսքի ուղղությամբ հանքային ազոտի և ֆոսֆորի պարունակությունն աճում է: Աղստև գետն անցնում է ավտոմայրուղուն զուգահեռ, բնակավայրերով և անտառի տարբեր հատվածներով, որն էլ նպաստում է կախված մասնիկների և կենսածին տարրերի աճին:
- 7. Օրգանական նյութի պարունակությունը** ուսումնասիրման ընթացքում գրեթե անփոփոխ է եղել, բացառությամբ հունիս ամսվա, երբ գետային էկոհամակարգերի համար

գրանցվել են համեմատաբար մեծ արժեքներ՝ ՊՕ-ն՝ 4.16-10.56 գՕ/մ³, ԲՕ-ն՝ 10-27գՕ/մ³, ԹԿՊ₅՝ 1.28- 3.5գՕ₂/մ³:

8. **Տոքսիկոլոգիական տեսակետից՝** վտանգավոր ծանր մետաղների պարունակությունները չեն գերազանցում ՍԹԽ-ները, սակայն նավթամթերքների գրանցված քանակությունները գերազանցում են ՍԹԽ-ի արժեքը (ՍԹԽ-ն 0.3գ/մ³), որն արդյունք է ավտոմայրուղու ինտենսիվ շահագործման:

Ստացված ջրաֆիզիկական և ջրաքիմիական տվյալների հիման վրա «Դիլիջան» ազգային պարկի տարածքում գետային էկոհամակարգերի ջրի որակի էկոլոգիական գնահատումը, ըստ մակերևութային ջրերի աղտոտվածության մակարդակի, բնորոշվում են՝

- Գետիկի գետաբերանի հատվածում՝ դաս 2 (մաքուր), կատեգորիա 3 (բավականին մաքուր).
- Բլրանի գետաբերան՝ դաս 2 (մաքուր), կատեգորիա 2 (մաքուր).
- Աղստև, ավտոճանապարհի ոլորանի մոտ, դաս 2 (մաքուր), կատեգորիա 2 (մաքուր).
- Աղստև, ազգային պարկի վարչական շենքին հարակից հատված, դաս 2 (մաքուր), կատեգորիա 3 (բավականին մաքուր).
- Աղստև, մինչև Գետիկի հետ միախառնվելը, դաս 2 (մաքուր), կատեգորիա 3 (բավականին մաքուր):

Այսպիսով՝ «Դիլիջան» ազգային պարկի ջրային էկոհամակարգերի ջրհավաք ավազանները, այդ թվում՝ Դիլիջան քաղաքը, կարելի է համարել անաղարտ բնական միջավայր ունեցող տարածք: Այստեղ գործող արդյունաբերական կազմակերպություններից շատերը ներկայումս չեն գործում, բացի հանքային ջրերի երկու գործարաններից, որոնք գտնվում են Աղստևի Բլրան և Ֆրոլովա բալկա վտակների վրա: Արտադրական ձեռնարկությունների թվին կարելի է դասել նաև Հաղարծնի վանք տանող ճանապարհի վերջնահատվածի աջ ոլորապտույտում, ճանապարհից քիչ վերև բազմերանգ իշխանի և դրա ձկնկիթի արտադրման կենտրոնը, որը, արհեստական կերակրման ճանապարհով, լրացուցիչ ազոտի և ֆոսֆորի քանակություն կարող է ավելացնել կենսատերաքիմիական շրջանառության մեջ, ինչը պահանջում է կանոնավոր մոնիտորինգային հսկողություն: Ֆերմերային մանր տնտեսությունների կողմից զբաղեցրած գյուղատնտեսական հողահանդակները հանքային պարարտանյութերով համարյա չեն պարարտացվում:

Ամենացավոտ հարցը բնակավայրերում կոյուղու ցանցի քայքայված և վտանգված վիճակն է: 1988 թվականի երկրաշարժից վնասվել է կոյուղու կոլեկտորը և համապատասխան միջոցների բացակայության պատճառով առ այսօր չի վերականգնվել, որի հետևանքով կենցաղային կոյուղաջրերը համատարած թափվում են Աղստև գետը և դրա վտակները, որի պատճառով անգործության է մատնված քաղաքային լիճը: Աղստև գետի և դրա Գոլովինկա՝ Հովվաջուր վտակի վրա կառուցված են և գործում են մի քանի առևտրային փոքր և միջին հզորության օբյեկտներ, որոնք ունեն հողափոր արտաբնոցներ: Գոյություն ունեցող կոյուղու կոլեկտորը վերանորոգման կարիք ունի: Առանձին բնակավայրերի կոլեկտորների ելքային մասում պետք է տեղադրել կենսամաքիչներ:

Շրջակա միջավայրն աղտոտող լուրջ գործոն է տիպային աղբավայրի բացակայությունը: 1996 թվականից սկսած որպես աղբավայր է ծառայում «Դիլիջան» ազգային պարկին հարող 2.5 հա տարածքը՝ դեպի Վանաձոր տանող ճանապարհի աջ հատվածում, որը տարվա ընթացքում, քաղաքապետարանի պատվերով, սանձառայության կողմից մի քանի անգամ ենթարկվում է հնարավորության չափով հողաձածկման: Չնայած գետի ավազանից որոշ հեռավորության վրա է գտնվում աղբավայրը, սակայն վարակիչ հիվանդությունների տարածման պոտենցիալ վտանգ է պարունակում՝ քաղաքը չունի անասնազերեզմանոց, աղբավայրը հսկողության տակ չէ, մշտապես այնտեղ վիստում են ընտանի խոզեր: Անհրաժեշտ է աղբի և թափոնների վնասազերծմանն ու վերամշակմանն ուղղված ծրագրի մշակում և իրագործում:

«Դիլիջան» ազգային պարկի ջրային պաշարների կառավարման բարելավման գործողություններ

«Դիլիջան» ազգային պարկի ջրային էկոհամակարգերի կառավարման բարելավման գործողությունները հիմնականում ընդգրկում են մոնիտորինգային հետազոտություններ, որոնց իրականացումը պայմանավորված է սույն կառավարման պլանի Բաժին 9-ում ներկայացված «Դիլիջան» ազգային պարկում կենսաբազմազանության մոնիտորինգի համակարգի ներդրմամբ, ինչպես նաև Բաժին 5-ում ներկայացված «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կառավարման բարելավման գործողությունների կատարմամբ (Հավելված 1):

7.2. ՋՐԱՅԻՆ ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅՈՒՆ

Ձկներ

Անցյալ դարի 70-ական թվականների կեսերից ի վեր «Դիլիջան» ազգային պարկի տարածքում ձկնաբանական հետազոտություններ չեն կատարվել: Սույն ուսումնասիրությունների ընթացքում Աղստև գետում առաջին անգամ հայտնաբերվել է քուռի քառթակ: Ստորև բերվում են ձկնատեսակների էկոլոգիական բնութագրերը և տնտեսական նշանակությունը:

1. Քուռի կողակ (Capoeta capoeta). Ներկայումս Աղստև գետում հանդիպում է կողակի միայն նատակյաց ձևը, որի թվաքանակը գետի միջին հոսանքում բավականին մեծ է: Ակունքին մոտենալուն զուգընթաց թվաքանակը աստիճանաբար նվազում է: Լինելով ջերմասեր ծածանազգի ձուկ, կողակի բազմացումը սկսվում է 14 աստիճանից բարձր ջերմաստիճանային պայմաններում՝ սկզբում մայիսի կեսերին գետի ստորին հոսանքում, իսկ տաքանալուն զուգընթաց, օգոստոսի կեսերին՝ միջին և վերին հոսանքներում: Վերոհիշյալ փաստերի մասին են վկայում Աղստև գետի տարբեր հատվածներից և դրա վտակներից ուսումնասիրությունների ընթացքում որսված 1.5-ից (Գետիկ գետի վերին հոսանք) 4.8 սմ (Աղստևի միջին հոսանք) երկարություն ունեցող կողակի մինչև 1 տարեկան ձկները: Աղստև գետում մեծ թվաքանակի շնորհիվ՝ քուռի կողակը հետաքրքրություն է ներկայացնում ոչ միայն որպես սպորտային-սիրողական որսի օբյեկտ, այլև տեղական նշանակության արդյունագործական ձկնատեսակ: Տվյալ խնդրի լուծման համար անհրաժեշտ են բնական վերարտադրության, մինչև բուսական սննդին անցնելը, մանրածկան կենսոնակության և հասուն օրգանիզմների կերային բազայի վերաբերյալ առավել մանրամասն տվյալներ:

2. Քուռի քեղքու (Barbus lacerta cyri). Հանդիպում է Աղստև գետի ավազանում՝ հանրապետության սահմաններից մինչև դրա վտակների միջին հոսանքները: Օգոստոսի սկզբին Աղստև գետում բեղլու առանձնյակներ են հանդիպում Դիլիջան քաղաքից վերև ընկած հատվածում: Գետի միջին և ստորին հոսանքներում թվաքանակը զգալիորեն շատ է: Վտակների վերին հոսանքներում հանդիպում է ավելի հազվադեպ, սակայն ձվադրման միզրացիայի շրջանում, հունիս-օգոստոս ամիսներին, թվաքանակը աճում է ի հաշիվ ստորին հոսանքներից վեր բարձրացող ձկների: Չվաղրումից հետո, ձկները աստիճանաբար վերադառնում են իրենց բնակատեղին: Հետազոտության ընթացքում որսված ձկների առավելագույն կշիռը կազմել է 145 գ: Բեղլուն, թեպետ չունի արդյունագործական նշանակություն, սակայն կարող է հանդես գալ որպես սիրողական որսի օբյեկտ:

3. Կուլկասյան թեփուղ (Leuciscus cephalus). Տարածված է Աղստև գետի գրեթե ողջ ավազանում: Գետում և դրա վտակներում թեփուղի տարածման վերին սահմանը համընկնում է գետի մյուս գիշատիչ և սննդային առումով մրցակից ձկնատեսակի՝ կարմրախայտի տարածման ստորին սահմանի հետ: Թեփուղը նատակյաց ձուկ է, բազմացման նպատակով երկարատև միզրացիաներ չի կատարում, որի պատճառով թվաքանակը գետի տարբեր հատվածներում համեմատաբար կայուն է: Թեփուղի

խոշոր առանձնյակները գետում ունեն իրենց սեփական որսի տարածքները և մշտապես մնում են գետի այդ հատվածում: Թվաքանակը համեմատաբար բարձր է գետի ստորին և միջին հոսանքներում: Թեփուղը հանդիսանում է արժեքավոր ձկնատեսակ: Կարող է լինել սիրողական որսի օբյեկտ:

4. Հայկական տառեխիկ (*Alburnoides bipunctatus*). Էնդեմիկ ձկնատեսակ է: Հանդիպում է Աղստև գետի ողջ երկայնքով և դրա վտակների վերին հոսանքներում: Կողագիծը կրկնակի է, ինչով էլ տարբերվում է Հայաստանի մյուս բոլոր ձկնատեսակներից: Բազմաքանակ է: Հատկապես շատ է հանդիպում գետի միջին և վերին հոսանքներում: Տառեխիկը գետի միջին հոսանքներում թեփուղի խոշոր առանձնյակների հիմնական կերն է, վերին հոսանքներում՝ կարմրախայտինը: Թվաքանակը կրճատվում է հիմնականում այս ձկնատեսակների կողմից, բայց գետի վերին հոսանքներում, կարմրախայտի քանակի կրճատման պատճառով, տառեխիկը դարձել է այս հատվածի հիմնական ձկնատեսակը: Փոքր չափերի պատճառով սիրողական ձկնորսության տեսակետից մեծ արժեք չի ներկայացնում: Որպես էնդեմիկ ձկնատեսակ ուշադրության է արժանի կենսաբազմազանության տեսակետից:

5. Քուռի սալտակաձուկ (*Alburnus filippi*). Մանր, ոչ արդյունագործական ձուկ է: Հազվադեպ է հասնում 12 սմ երկարության և 15 գ կշռի: Ակտիվ է սպրիլից հոկտեմբեր ժամանակահատվածում: Ամռանը հանդիպում է Աղստևի վտակների վերին հոսանքներում, բայց ջերմաստիճանի անկման հետ կուտակումներ է առաջացնում գետի միջին մասերում: Սալտակաձուկը թեփուղի ամենասիրելի կերն է: Սակավարժեք ձկնատեսակ է: Հետաքրքրություն է ներկայացնում միայն կենսաբազմազանության տեսակետից:

6. Քուռի լեղկաձուկ (*Barbatula barbatula caucasica*). Մանր ձուկ է, հետազոտությունների ընթացքում որսված ձկների առավելագույն չափը հասել է 9.8 սմ: Բեղունությունը հասնում է մինչև 7000 ձկնկիթի: Լեղկաձուկը գերադասում է ավազե և քարե գրունտները, թեպետ հանդիպում է նաև գետի տղմոտ հատվածներում: Տարածված է գրեթե ողջ ավազանում, զգայուն է միջավայրի պայմանների փոփոխության նկատմամբ, կարող է հանդես գալ ջրերի աղտոտվածության ինդիկատոր: Արդյունագործական նշանակություն չունի:

7. Կարմրախայտ (*Salmo trutta fario*). Կասպիական սաղմոնագիների գետային ձև է, քաղցրահամ ջրերի բնիկ տեսակներից: Հետազոտման շրջանում Աղստև գետի ավազանում որսվել է ընդամենը մեկ առանձնյակ: Կարմրախայտի թվաքանակը 50-60-ական թվականներից ի վեր կրճատվել է հանրապետության գրեթե բոլոր գետերում, որի հիմնական պատճառներն էին բնակմիջավայրի աղտոտվածությունը, ջրօգտագործումը և որսագողությունը: Համաձայն հավաքված տեղեկության և փորձագիտական գնահատման՝ կարմրախայտը պահպանվել է Աղստև գետի վտակների վերին հոսանքներում, ինչպես նաև Աղստև գետում՝ Դիլիջանից վերև ընկած հատվածում: Սակավաթիվ է: Արժեքավոր ձկնատեսակ է, որը կարող է հանդիսանալ սիրողական որսի օբյեկտ՝ միայն պոպուլյացիայի թվաքանակի վերականգնումից հետո: Կարող է օգտագործվել նաև արհեստական ձկնաբուծության նպատակներով:

8. Քուռի քառթակ (*Gobio persus*). Հայաստանում հազվադեպ հանդիպող տեսակ է: Աղստև գետում առաջին անգամ հայտնաբերվել է քուռի քառթակի եզակի նմուշ և միաժամանակ բացահայտվել է, որ Աղստև գետի ավազանում դեռևս չի հայտնաբերված Հայաստանի համար ինվազիոն տեսակ հանդիսացող սովորական քառթակը: Արդյունագործական նշանակություն չունի, սիրողական որսի օբյեկտ չի հանդիսանում:

9. Արծաթախայլ լճածածան (*Carassius auratus*). Հանդիպում է Պարզ և Գոշ լճերում: Աղստև գետում և դրա վտակներում լճածածանը հանդիպում է եզակի քանակներով: Ամենայն հավանականությամբ գետում հայտնվում է ջրամբարներից ձվադրման նպատակով մայիս-հունիս ամիսներին վեր բարձրանալու արդյունքում: Բազմացումից հետո այս ձկնատեսակը վերադառնում է ջրամբար: Այսինքն՝ լճածածանը լիմնոֆիլ տեսակ է և

գերադասում է ապրել լճերում, ջրամբարներում և հոսքի ոչ մեծ արագություն ունեցող գետերում: Պարզ և Գոշ լճերում ձևավորվել են լճածածանի բազմաքանակ պոպուլյացիաներ: Այս էկոհամակարգերի բնական կերային բազան այլևս չի կարող բավարարել լճածածանի մեծ թվաքանակով և կենսազանգվածով պոպուլյացիայի պահանջները, ինչի մասին վկայում են հետևյալ ձևաչափական ցուցանիշները.

- կշռային և գծային աճի ցածր տեմպերը (Սևանա լճի նույն տարիքի առանձնյակների համեմատությամբ՝ կշռային և գծային աճի տեմպերը հետ են մնում գրեթե երկու անգամ).
- մարմնի առավելագույն բարձրությունը չի գերազանցում երկարության 33-35 %-ը (Սևանա լճում այն կազմում է 45-50%).
- համեմատաբար ցածր բացարձակ և հարաբերական պտղաբերությունը.
- արունների բաժինը պոպուլյացիայում կազմում է 30 %-ից ավելին, Սևանա լճում վերջինս չի գերազանցում 0.4-0.6 %-ը.
- բովանդության ցուցանիշները ցածր են:

Պոպուլյացիայի թվաքանակի կարգավորման դեպքում մեծանում են գծային և կշռային աճի տեմպերը: Պոպուլյացիայի թվաքանակի կարգավորումը կարող է կատարվել տեղական նշանակության արդյունահանման և սիրողական որսի կազմակերպման ճանապարհով: Այսպիսով՝ հետազոտությունների արդյունքում բացահայտվել է, որ «Դիլիջան» ազգային պարկում ձկների արդյունագործական որսը բացառվում է: Հնարավոր է միայն զարգացնել սիրողական և սպորտային ձկնորսությունը, ինչպես նաև արժեքավոր ձկնատեսակների լճակային և ավազանային ձկնաբուծությունը: Անհրաժեշտ է շարունակել ազգային պարկի իխտիոֆաունայի հետազոտությունները՝ ձկների կենսաբանական ցուցանիշների վերաբերյալ առավել մանրամասն տվյալներ ստանալու նպատակով:

«Դիլիջան» ազգային պարկի ձկնային պոպուլյացիաներին սպառնացող վտանգները

1. Գետերի ջրերը օգտագործվում են ոռոգման, ռեկրեացիոն և էներգետիկ նպատակներով: Չկարգավորված ջրօգտագործումը կարող է հանգեցնել ձվադրավայրերի ոչնչացմանը, և, որպես հետևանք, ջրային էկոհամակարգերի կենսաբազմազանության կրճատմանը: Այս պատճառով գետերում ձկնատեսակական հոսքը պահպանելու համար անհրաժեշտ է նորմատիվներ մշակել և խիստ հսկողություն սահմանել ջրօգտագործման վրա:
2. Ազգային պարկի և դրա պահպանական գոտու տարածքներում գտնվող կենցաղային, արդյունաբերական և գյուղատնտեսական օբյեկտներում, որոնք աղտոտման աղբյուր են հանդիսանում, անհրաժեշտ է տեղադրել մաքրման կայաններ կամ սարքավորումներ՝ ջրերի հետագա աղտոտումը կանխելու նպատակով: Մաքրված ջրերի որակը հսկելու համար անհրաժեշտ է կազմակերպել ջրաքիմիական և ջրակենսաբանական մոնիտորինգ:
3. Ազգային պարկի և դրա պահպանական գոտու տարածքներում գտնվող գետերի հունի փոփոխությունները կհանգեցնեն ջրի հոսքի արագացմանը, որը բնական ձվադրավայրերից մանրածկան և ձկնկիթի տեղափոխման, ինչպես նաև կերային բազայի կրճատման պատճառ կհանդիսանա: Անհրաժեշտ է արգելել ազգային պարկի և դրա պահպանական գոտու տարածքներում գետերի հունի փոփոխմանն ուղղված բոլոր աշխատանքները:
4. Օտարածին ձկնատեսակների ներմուծումը լուրջ վտանգ է հանդիսանում տեղի արորիզեն տեսակների համար: Հաշվի առնելով այս հանգամանքը՝ անհրաժեշտ է խիստ հսկողություն սահմանել ջրային էկոհամակարգեր օտարածին ձկնատեսակների չհիմնավորված ներմուծումը կանխելու նպատակով:

Հարկ է նաև նշել, որ «Դիլիջան» ազգային պարկի և դրա պահպանական գոտու տարածքներում ձկնաբանական մոնիտորինգ երբեք չի իրականացվել, որի պատճառով

ձկների տեսակային կազմի, բաշխվածության, դրանց կենսաբանական և պոպուլյացիոն ցուցանիշների, բնական վերարտադրության վերաբերյալ տվյալները բացակայում են: Այս պարագայում ներկայումս հնարավոր չէ գնահատել ձկնային հանրույթի վիճակը և տալ համապատասխան առաջարկներ ձկնային ռեսուրսների արդյունավետ օգտագործման և վերականգնման վերաբերյալ: Սակայն, ելնելով Հայաստանում ձկնային բնական ռեսուրսների ընդհանուր վիճակից, մոնիտորինգային հետազոտություններից զուգահեռ անհրաժեշտ է կազմակերպել այս տարածքին բնորոշ արժեքավոր ձկնատեսակների արհեստական վերարտադրության աշխատանքներ, որոնք թույլ կտան պահպանել և վերականգնել այդ տեսակների պոպուլյացիաները ազգային պարկի տարածքում:

Խեցգետին

«Դիլիջան» ազգային պարկի ջրային էկոհամակարգերում խեցգետնի պոպուլյացիաների գույքագրման աշխատանքներն առաջին անգամ իրականացվել են 2005թ. հունիս-հոկտեմբեր ժամանակահատվածում՝ պարկի կառավարման պլանների մշակման շրջանակներում: Հետազոտությունները կատարվել են Պարզ և Գոշ լճային համակարգերում: Աղստև գետում և դրա վտակներում խեցգետին չի հայտնաբերվել: Ազգային պարկի գետերը լեռնային են, որոնց առավել բնորոշ են հոսքի մեծ արագությունը և օրգանական տիղմի սակավությունը, ինչը նպաստավոր չէ խեցգետնի գոյության համար:

Պարզ լճում խեցգետնային համակեցության փորձանմուշները լճի ափամերձ հատվածներից ձեռք են բերվել խեցգետնի թակարդներով: Թակարդների հեռավորությունը մեկը մյուսից եղել է 3-4 մ: Լճի առավել խոր մասերում որսը կազմակերպվել է դնովի ցանցերով: Թակարդներով ձեռք բերված փորձանմուշների մշակման արդյունքում ստացվել են տվյալներ կենդանու կարգաբանական դիրքի, տարածական տեղաբաշխման, պոպուլյացիայի չափատարիքային կազմի, սեռական կառուցվածքի և ֆիզիոլոգիական վիճակի մասին: Հետազոտությունների արդյունքում պարզվել է.

- այստեղ հանդիպում է Հայաստանի մյուս լճերում լայնորեն տարածված երկարաչանչ խեցգետին տեսակը (*Pontastacus leptodactylus* Esch.1823).
- խեցգետինը հիմնականում կուտակումներ է առաջացնում լճի ափամերձ հատվածում՝ ափից 1-2 մ հեռավորության վրա, որը հարուստ է մակրոֆիտներով: Համեմատաբար մեծ խորություններում՝ 8մ և ավելի, կենդանիներ չեն հանդիպել: Պատճառը հավանաբար գրունտի բնույթն է և թթվածնային անբավարար պայմանները.
- խեցգետնի որսաբաժնում կենդանիների առավելագույն չափերը՝ էգերի համար եղել է 12.3 սմ՝ 46 գ կշռով, արուներիինը՝ 14.8 սմ՝ 74գ կշռով, միջին չափերը համապատասխանաբար եղել են 9.2 սմ (20.3գ) էգերի համար, 10 սմ (35գ)՝ արուների համար: Հարկ է նշել, որ երկարաչանչ խեցգետնի առավելագույն չափերը Հայաստանի տարբեր ջրամբարներում հասնում են մինչև 25-30 սմ-ի:
- Սեռերի հարաբերակցությունը եղել է 1:1: Թակարդների որսունակությունը միջին հաշվով կազմել է 6 կենդանի/ժամ:
- Մաշկափոխված առանձնյակները կազմել են պոպուլյացիայի ընդհանուր թվաքանակի 21 %-ը: Նման ցուցանիշ սովորաբար գրանցվում է բազմացմանը հաջորդող ժամանակահատվածում:

Խեցգետնի պոպուլյացիայի զարգացման համար Պարզ լճի օգտակար մակերեսը սահմանափակ է: Մոտավոր հաշվարկներով այն կարող է կազմել 1000 քառ. մ տարածք: Խեցգետնի քանակական զարգացումը սահմանափակող հիմնական գործոնը գրունտի բնույթն է: Խեցգետնի համար իդեալական գրունտ է համարվում օրգանական նյութով հարուստ ամուր հատակը՝ քար, հարթ տիղմ, մակրոֆիտներ, որտեղ այն կարող է գտնել նաև թաքսոնգ: Լճի հատակում օրգանական նյութի հսկայական կուտակումների

արդյունքում, համեմատաբար մեծ խորություններում, գերակշռում է փափուկ գրունտը, ինչն էլ սահմանափակում է կենդանու տարածման արեալը:

Այսօր Պարզ լճում կատարվում է խեցգետնի անսահմանափակ սիրողական որս: Լճի փոքր չափերը թույլ են տալիս որսալ խեցգետնի պոպուլյացիայի զգալի մասը: Լիճը խեցգետնի մեծամասշտաբ արդյունաբերական բազմացման համար օգտագործելը նպատակահարմար չէ: Խեցգետնի կենսազանգվածը բարձր կենսարդյունավետության լճերում կազմում է 50 կգ/հա:

Գոշալճում հետազոտությունների արդյունքում պարզվել է, որ խեցգետնի պոպուլյացիան համեմատաբար վատ է զարգացած: Որսագործիքների որսունակությունը խիստ ցածր էր՝ ժամում 1 կենդանի: Արունների և էգերի հարաբերակցությունը՝ 2:1: Խեցգետնինը հիմնականում կուտակված էր ափամերձ հատվածում, որտեղ նկատելի էին բազմաթիվ մանր խեցգետնիներ, ինչը վկայում էր լճում կենդանու արդեն ավարտված բազմացման մասին: Արունների միջին կշիռը 26 գ է, միջին երկարությունը 8.5 սմ, էգերինը՝ համապատասխանաբար 6.6 գ և 4.8 սմ: Խեցգետնի պոպուլյացիան Գոշի լճում ավելի երիտասարդ է: Հետևաբար այս հիդրոբիոնտի ինտրադոկցիան կատարվել է համեմատաբար ավելի ուշ: Լիճը խեցգետնի աճեցման տեսանկյունից տնտեսական արժեք չի ներկայացնում: Այն կարող է հանդիսանալ սիրողական որսի վայր:

Պարզ և Գոշ լճերում խեցգետնի պոպուլյացիային սպառնացող վտանգը հիմնականում լճերի ճահճակալման հավանականությունն է: Թթվային միջավայրը բարենապաստ չէ խեցգետնի գոյության համար:

«Դիլիջան» ազգային պարկի ջրային կենսաբազմազանության կառավարման բարելավման գործողություններ

«Դիլիջան» ազգային պարկի ջրային կենսաբազմազանության կառավարման բարելավման գործողությունները հիմնականում ընդգրկում են մոնիտորինգային հետազոտություններ, որոնց իրականացումը պայմանավորված է սույն կառավարման պլանի Բաժին 9-ում ներկայացված «Դիլիջան» ազգային պարկում կենսաբազմազանության մոնիտորինգի համակարգի ներդրմամբ:

7.3. ՑԱՍԱՔԱՅԻՆ ԷԿՈԼՍՏԱԿԱՐԳԵՐ

7.3.1. Բուսական աշխարհի հաշվառումը, վիճակը և կառավարման բարելավման գործողություններ

7.3.1.1. Նոր տեսակներ և պոպուլյացիաներ «Դիլիջան» ազգային պարկի տարածքից.

2005 թ. դաշտային հետազոտությունների ընթացքում «Դիլիջան» ազգային պարկի տարածքում առաջին անգամ հայտնաբերվել են Հայաստանի համար հազվագյուտ, Կարմիր գրքում ընդգրկված մահամորմ (*Atropa belladonna*) տեսակը (Հաղարծինի ձոր, հաճարենու անտառի հատված մաս, մոտ 20 թուփ, լավ վիճակում՝ ծաղկում և պտղակալում են): Հաջորդը՝ հազվագյուտ հազի դեղ հիբրիդային (*Petasites hybridus*) տեսակն է, որի մոտ 30-40 նմուշ հայտնաբերվել են Պարզ լճի մոտակայքում՝ հողային ճանապարհի երկայնքով քայքայված վայրերում: Ազգային պարկի ֆլորայի համար առաջին անգամ բերվում է ձիաձեռ (*Equisetum telmateia*) տեսակը, որը լայն տարածված է Հայաստանի մյուս անտառային տարածքներում: Բացի այդ, ազգային պարկի և դրա պահպանական գոտու տարածքներում հայտնաբերվել են մի շարք նոր և չգրանցված բուսատեսակների պոպուլյացիաներ (աղյուսակ 2):

Աղյուսակ 2. Նոր պոպուլյացիաներ

Ցեղ, տեսակ	Ազգային պարկ	Պահպանական գոտի	Պոպուլյացիաների թիվը և պարկի տարածքում տեղաբաշխումը
Անիսոն եռաբաժան <i>Pimpinella tripartita</i>	+	+	4: Պարզ լճի, Գոշալճի, Խաչարձան գյուղի մոտակայքեր, կենու պուրակ
Կռատուկ թաղիքավոր (<i>Arctium tomentosum</i>)	+	-	1: Հաղարծինի ձոր
Ազուզու խոնարհված (<i>Carpesium cernuum</i>)	+	-	1: Գոշալճի մոտակայքեր
Միցելիս պատի (<i>Mycelis muralis</i>)	+	+	2: Հաղարծինի ձոր, Պարզ լճի մոտակայքեր
Արաբիդ թզուկ (<i>Arabidopsis pumila</i>)	+	+	3: Հաղարծինի ձոր, Խաչարձան գյուղի մոտակայքեր, կենու պուրակ
Ատամնախոտ հինգտերևյան (<i>Dentaria quinquefolia</i>)	+	-	4: Հաղարծինի ձոր, Պարզ լճի, Գոշալճի, Դիլիջանի մոտակայքեր
Թռչնարուն խկական (<i>Neottia nidus-avis</i>)	+	-	3: Հաղարծինի ձոր, կենու պուրակ, Գոշալճի մոտակայքեր
Թիթեռնկախոլորձ կանաչածաղիկ (<i>Platanthera chlorantha</i>)	+	+	8: Ամենուրեք անտառներում
Տփիկ շան (<i>Elymus caninus</i>)	+	-	2: Հաղարծինի ձոր, Գոշալճի մոտակայքեր
Սպնդուկ միջին (<i>Pyrola media</i>)	-	+	1: Կովկասյան մրտավարդի (<i>Rhododendron</i>) համակեցությունների մոտ
Ազոավազի հասկածև <i>Actaea spicata</i>	+	-	1: Պարզ լճի մոտակայքեր
Ակնախոտ սևանյա (<i>Euphrasia sevanensis</i>)	-	+	1: Սևանի լեռնանցքի մոտակայքեր

7.3.1.2. Էնդեմիկ տեսակներ.

«Դիլիջան» ազգային պարկի և դրա պահպանական գոտու տարածքներում հանդիպող 5 էնդեմիկ տեսակների (քարտեզ 3) և դրանց պոպուլյացիաների ընդհանուր վիճակը հետևյալն է:

- Եզնակող Կոզո-Պոլյանսկու (*Bupleurum koso-poljanskyi*) - հազվագյուտ տեսակ է: Հանդիպում է Դիլիջանի տեղամասի սոճու անտառներում: Պոպուլյացիան ներկայացված է միջին խտությամբ: Առանձնյակների կենսունակությունը բավարար է, բոլորը ծաղկող են: Տեսակի գոյությանը վտանգ չի սպառնում:
- Մասրենի Սոսնովսկու (*Rosa sosnovskyana*) - հազվագյուտ տեսակ է: Հանդիպում է Դիլիջանի տեղամասի կաղնու անտառի վերին բացատում: Բույսերի վիճակը բավարար է, պոպուլյացիայի վիճակին սպառնող վտանգ չկա:
- Կտավախոտ զանգեզուրի (*Linaria zangezura*) – հանդիպում է Հաղարծինի տեղամասում՝ առանձին անհատներով թփուտներում, կաղնու անտառի բացատներում: Տեսակի գոյությանը վտանգ չի սպառնում:
- Խլածաղիկ Օլգայի (*Scrophularia olgae*) – հանդիպում է Դիլիջանի տեղամասում: Պոպուլյացիայի վիճակը բավարար է, վտանգ չի սպառնում:
- Չնձաղիկ Միրզոևայի (*Merendera mirzoevae*) – հանդիպում է հիմնականում Դիլիջանի տեղամասում: Պոպուլյացիաների վիճակը բավարար է:

7.3.1.3. Հայաստանի Կարմիր գրքում ընդգրկված տեսակներ.

«Դիլիջան» ազգային պարկի և դրա պահպանական գոտու ֆլորայի Հայաստանի Կարմիր գրքում գրանցված 32 տեսակներից իրոք հազվագյուտ են և արժանի են ուշադրության միայն 11-ը (քարտեզ 3): Դրանց վերաբերյալ համապատասխան տվյալները բերված են աղյուսակ 3–ում:

Աղյուսակ 3. Կարմիր գրքում գրանցված տեսակներ, որոնք ունեն ուշադրության կարիք

Ցեղ, տեսակ	Ազգային պարկ	Պահպանական գոտի	Մեկնաբանություններ
Մահամորմ (<i>Atropa bella-donna</i>)	Հաղարծինի տեղամաս Հաճարենու անտառ	+	Պոպուլյացիայի վիճակը բավարար է
Եզնակող Կոզո- Պոլյանսկու (<i>Bupleurum koso- polajnskyi</i>)	Գոլովինո, Գոշալճի շրջակայք	+	Պոպուլյացիայի վիճակը բավարար է
Շողավարդ կկվի (<i>Coronaria flos-cuculi</i>)	Պարզ լճի մոտակայք	-	Չի հայտնաբերվել: Անհրաժեշտ է շարունակել որոնումները:
Էպիպոգիում անտերև (<i>Epipogium aphyllum</i>)	Գոլովինոյի շրջակայք	+	Չի հայտնաբերվել: Անհրաժեշտ է շարունակել որոնումները:
Արքայածաղիկ բլրակային (<i>Fritillaria collina</i>)	Դիլիջանի մոտակայք	+	Պոպուլյացիայի վիճակը բավարար է
Հիրիկ եղանի (<i>Iris furcata</i>)	Խաչարձան գյուղի մոտակայք	+	Պոպուլյացիայի վիճակը բավարար է
Կնյուն նուրբ (<i>Juncus tenuis</i>)	Հաղարծինի ձոր, Գոլովինոյի շրջակայք	+	Պոպուլյացիայի վիճակը բավարար է
Փշաբեղ Մեյերի (<i>Limonium meyeri</i>)	Պապանինոյի շրջակայք	-	Պոպուլյացիայի վիճակը բավարար է
Ձնծաղիկ Միրզոևայի (<i>Merendera mirzoevae</i>)	Գոլովինոյի շրջակայք	+	Պոպուլյացիայի վիճակը բավարար է
Պապլոր դժգույն (<i>Muscari pallens</i>)	Գոշալճի մոտակայք	+	Պոպուլյացիայի վիճակը բավարար է
Տրաունշտայներա գնդածև (<i>Traunsteinera sphaerica</i>)	-	Սևանի լեռնանցք անտառի վերին սահման	Պոպուլյացիայի վիճակը բավարար է

«Դիլիջան» ազգային պարկի և դրա պահպանական գոտու տարածքներում հանդիպում են ևս 14 հազվագյուտ տեսակներ, որոնք առանձնակի ուսումնասիրման կարիք ունեն: Դրանցից են՝

- Վարդակակաչ գորտնուկանման (*Anemone ranunculoides*) - ազգային պարկի տարածքում հայտնի է միայն մեկ պոպուլյացիա՝ Սևանի լեռնանցքի անտառի վերին սահմանագծում: Այն լավ վիճակում է:
- Կծկծուկ պարսկական (*Eripactis persica*) - ազգային պարկի տարածքում հայտնի են երկու պոպուլյացիաներ՝ Աղավնավանքի կենու պուրակում և Գոշալճի շրջակայքում: Ներկայումս այս պոպուլյացիաների վիճակը բավարար է, սակայն Գոշալճի շրջակա էկոհամակարգերի վիճակը անհանգստություն է պատճառում ապօրինի ծառահատումների պատճառով:
- Մանուշակ անագնիվ (*Viola ignobilis*) - Հայաստանի համար հազվագյուտ տեսակ է, սակայն ազգային պարկի տարածքում կան մի քանի պոպուլյացիաներ (հիմնականում Դիլիջանի տեղամասում), որոնց վիճակը բավարար է:

Ինչպես վերը նշված, այնպես էլ մնացած 11 տեսակները՝ սոխ մշկընկուզային (*Allium moschatum*), սոխ ժայռային (*Allium saxatile*), ճոճուկ կովկասյան (*Cerastium holosteum*), բոշխ ուղղահասկ (*Carex atherodes*), գետնամուշկ (*Lycopodium selago*), մատիտեղ փոքր (*Polygonum minus*), բանպոտ Բաունի (*Polystichum braunii*), ջրահավաք օլիմպիական (*Aquilegia olympica*), թգարմատ ոսկեծաղկանման (*Ficaria calthifolia*), բերտերոա գորշ (*Berteroa incana*), շնկոտեմ միամյա (*Thlaspi annuum*), Հայաստանում հազվագյուտ են և ենթակա են կանոնավոր մոնիտորինգի:

7.3.1.4. Դեղաբույսեր.

«Դիլիջան» ազգային պարկի և դրա պահպանական գոտու տարածքներում տարածված 54 տեսակի դեղաբույսերից, օգտագործման տեսակետից առավել հեռանկարայինների ցանկը և էկոհամակարգերին առանց վնաս պատճառելու հավաքի

տվյալները բերված են աղյուսակ 4-ում (տեղաբաշխումը, տես՝ քարտեզ 4): Մնացած տեսակները, մարկետինգային հետազոտությունների դրական արդյունքի դեպքում, կարող են աճեցվել պլանտացիաներում:

Աղյուսակ 4. Տնտեսապես արժեքավոր դեղաբույսեր

Տեսակ	Ազգային պարկ	Պահպան. գոտի	Հետազոտված պոպուլյացիաների քիվը	Միջին պաշարը, կգ/հա, օրգաններ	Հնարավոր հավաք, կգ/հա	Հնարավոր հավաք, կգ/տարի
Ծնեփակ օղակավոր (Asparagus verticillatus)	+	+	4	8 (ծիլեր)	5	300-400
Կռատուկ Պալադինի (Arctium palladinii)	+	+	4	150 (արմատներ)	50	1000
Ճարճատուկ սովորական (Cichorium intybus)	+	+	4	20 (արմատներ)	15	400
*Տատրակ սովորական (Tussilago farfara)	+	+	6	80 (տերևներ)	50	1000
*Չիվան հսկայական (Cephalaria gigantea)	+	+	3	10 (ծաղկաբույլեր)	6	150-200
Չիածեռ դաշտային, Չ. բարակ (Equisetum arvense, E. ramosissimum)	+	+	4	140/120 (վերգետն. մաս)	80/60	400-500
*Սրոհնդ խոցված (Hypericum perforatum)	+	+	5	70 (վերգետն. մաս)	35	1000
Առյուծագի սովորական (Leonurus cardiaca)	+	+	4	100 (վերգետն. մաս)	80	300
*Խնկածաղիկ սովորական (Origanum vulgare)	+	+	5	25 (վերգետն. մաս)	15	300-400
*Լերդախոտ ալեհեր (Teucrium polium)	+	+	3	60 (վերգետն. մաս)	40	400-500
*Ուրց Կոչիի (Thymus kotschyanus)	+	+	3	80 (վերգետն. մաս)	40	600
Մղամուճ սպիտակ *Viscum album	+	+	4	150 ամբողջ բույսը	100	1500-2000
*Հողմաբույս մեծ (Chelidonium majus)	+	+	3	20 (վերգետն. մաս)	10	200
Գնարբուկ խոշորաբաժակ (Primula macracalyx)	+	+	6	60 (վերգետն. մաս)	30	2000
*Սզնի -3 տեսակ (Crataegus)	+	+	4	80 (պտուղներ)	70	2000
*Մաարենի -8 տեսակ (Rosa)	+	+	5	100 (պտուղներ)	90	3000
Ծոխիմնձոր արոսի (Sorbus aucuparia)	+	+	4	150 (պտուղներ)	120	2000
Կտակենի խտտային (Sambucus ebulus)	+	+	4	200 (տերևներ և պտուղներ)	150	2000

*** Ներկայումս օգտագործվում են տեղի բնակչության կողմից անճնական կարիքների և ոչ մեծ ծավալներով վաճառքի նպատակով:**

Նշված դեղաբույսերի արդյունագործական հավաքը և մշակումը պետք է իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով՝ համապատասխան մարկետինգային հետազոտությունների իրականացումից հետո:

7.3.1.5. Ուտելի բույսեր.

«Դիլիջան» ազգային պարկի և դրա պահպանական գոտու տարածքներում տարածված 41 տեսակի ուտելի բույսերից, օգտագործման տեսակետից առավել հեռանկարայինների ցանկը և էկոհամակարգերին առանց վնաս պատճառելու հավաքի տվյալները բերված են աղյուսակ 5-ում (տեղաբաշխումը, տես՝ քարտեզ 5): Մնացած տեսակները, մարկետինգային հետազոտությունների դրական արդյունքի դեպքում, կարող են աճեցվել պլանտացիաներում:

Աղյուսակ 5. Տնտեսապես արժեքավոր ուտելի տեսակներ

Տեսակ	Ազգային պարկ	Պահպան. գոտի	Հետազոտված պոպուլյացիաների քիվր	Միջին պաշարը, կգ/հա, օրգաններ	Հնարավոր հավաք, կգ/հա	Հնարավոր հավաք, կգ/տարում
*Սոխ տարօրինակ (Allium paradoxum)	+	-	3	10 (վերգետնյա մաս)	5	700-800
*Շուշանբանջար-5 տեսակ (Chaerophyllum)	+	+	5	60 (ծիլեր)	40	1500
*Միբեխ սովորական (Falcaria vulgaris)	+	+	4	10 (ծիլեր)	8	300
Բալդրդան-3 տեսակ (Heracleum)	+	+	5	30 (ծիլեր)	25	500
*Ծնեփակ օղակավոր (Asparagus verticillatus)	+	+	4	8 (ծիլեր)	5	300-400
*Սինդրիկ-5 տեսակ (Polygonatum)	+	+	4	10 ծիլեր	5	1000
*Հոն սովորական (Cornus mas)	+	-	3	100 (պտուղներ)	80	2000
Դաղձ դաշտային, Դ. երկարատերև (Mentha arvensis, M. longifolia)	+	+	4	30 (տերևներ)	20	500
*Ուրց Կոչիի (Thymus kotschyanus)	+	+	3	80 (վերգետնյա մաս)	40	600
*Ավելուկ վահանաձև (Rumex scutatus)	+	+	4	40 (տերևներ)	30	800-1000
Տանձենի կովկասյան (Pyrus caucasica)	+	+	4	50 (պտուղներ)	40	1500-2000
*Ազնվամորի (Rubus idaeus)	+	+	5	80 (պտուղներ)	70	3000
Ծոխխնձոր արոսի (Sorbus aucuparia)	+	+	4	150 (պտուղներ)	120	2000

* **Տեղի բնակչության կողմից օգտագործվում են սեփական կարիքների համար.**

Նշված ուտելի բույսերի արդյունագործական հավաքը և մշակումը պետք է իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով՝ համապատասխան մարկետինգային հետազոտությունների իրականացումից հետո:

7.3.1.6. Բույսերի ինվազիվ և էքսպանսիվ տեսակներ.

Հաշվառման աշխատանքների ընթացքում առանձնակի ուշադրություն է դարձվել ազգային պարկի էկոհամակարգերի վրա ինվազիվ (օտար) և էքսպանսիվ (տեղական) անցանկալի տեսակների դրսևորումներին: Կարևորագույն ինվազիվ տեսակների ցանկը, ազգային պարկում դրանց տեղաբաշխման և աճելավայրերի վերաբերյալ տվյալները բերված են աղյուսակ 6-ում: Թվարկված տեսակները հիմնականում հարմարված են գյուղատնտեսական նշանակության հողերին և էրոզացված ու խախտված տեղավայրերին: Առայժմ չի նկատվում դրանց ներխուժման միտումներ դեպի բնական էկոհամակարգեր: Առանձին տեսակներ, որոնք այնուամենայնիվ հանդիպում են բնական էկոհամակարգերում, սովորաբար զբաղեցնում են խիստ սահմանափակ տարածքներ խոնավ վայրերում: Ներկայումս դրանք բնական էկոհամակարգերի համար վտանգ չեն ներկայացնում, սակայն մոնիտորինգի իրականացման ժամանակ չպետք է անտեսվեն: Այդ ընթացքում անհրաժեշտ է նախատեսել ազգային պարկի տարածքում առայժմ չհանդիպող նոր ինվազիվ տեսակների հայտնաբերման հնարավորությունը:

Աղյուսակ 6. Պոտենցիալ վտանգավոր ինվազիվ բուսատեսակներ

Ցեղ, տեսակ	Վայր
Գալինսոգա մանրածաղիկ (Galinsoga parviflora)	Շամախյանի տեղամաս, մոլախոտային և քայքայված վայրեր
*Կոնիզա կանադական (Conyza canadensis)	Հաղարծինի տեղամաս, մոլախոտային վայրեր
Գարնանաքարամ կծու (Erigeron acer)	Սևան լեռնացքի վերին գոտի, մարգագետիններ և շիբլյակ
*Դառնուկ իտալական (Xanthium italicum)	Ամենուր, մոլախոտային վայրեր
Սխտորաբույս դեղատու (Alliaria petiolata)	Ամենուր, անտառներ և բացատներ
Սանիկոլ եվրոպական (Sanicula europaea)	Դիլիջան, Հաղարծին, Շամախյան, Գոշ. անտառներ
*Գեոնոմաբադեղ բադեղաման (Glechoma hederacea)	Ամենուր, անտառներ
Դեսկուրենիա Սոֆիայի (Descurainia sophia)	Ամենուր, մոլախոտային վայրեր
*Կոտեմ վայրի (Cardaria draba)	Ամենուր, քայքայված և մոլախոտային վայրեր
*Կախարդախոտ փարիզյան (Circaea lutetiana)	Ամենուր, անտառներ
Տատաշ փովող (Tribulus terrestris)	Ամենուր, քայքայված և մոլախոտային վայրեր
*Տատասկ ալեհեր (Cirsium incanum)	Ամենուր, քայքայված վայրեր և լքված դաշտեր
*Տատասկ դաշտային (Cirsium arvense)	Ամենուր, քայքայված վայրեր և լքված դաշտեր

*** Պարտադիր մոնիտորինգի ենթակա տեսակներ:**

Մեծ անհանգստություն են պատճառում էքսպանսիվ տեսակները (տեղական տեսակներ, որոնք ունեն նոր տարածքների նվաճման, արեալի ընդարձակման և բնական էկոհամակարգերից մյուս տեսակներին դուրս մղման հակում): Ազգային պարկի և դրա պահպանական գոտու տարածքներում այդպիսի տեսակներն առայժմ շատ չեն, սակայն վերջին տարիներին դրանցից որոշները բավականին ինտենսիվ տարածվում են: Կարևորագույն էքսպանսիվ տեսակների ցանկը, ազգային պարկում դրանց տեղաբաշխման և աճելավայրերի վերաբերյալ տվյալները բերված են աղյուսակ 7-ում:

Նշված բուսատեսակները կենսաբազմազանության համար պոտենցիալ վտանգ են ներկայացնում, քանի որ դրանց կենսաբանական առանձնահատկությունները (բարձր սերմատվությունը, մարդածին ազդեցության տարբեր տեսակների նկատմամբ կայունությունը և այլն) հնարավորություն են տալիս դրանց հեշտությամբ գրավել նոր, հատկապես քայքայված տեղավայրեր:

7.3.1.7 Հազվագյուտ սնկեր.

«Դիլիջան» ազգային պարկի տարածքում 2005 թվ. կատարած ուսումնասիրությունների արդյունքում հայտնաբերվել են Հայաստանի համար հազվագյուտ նոր տեսակներ, ինչպիսիք են սպիտակ սունկը (Boletus edulis), կոնասունկ փաթիլատիկը (Strobilomyces floccopus), աստերոֆորա անձրևայինը (Asterophora lycoperdoides), հովանոցասունկ աղջկականը (Macrolepiota puellaris), բոլետուս ամառայինը (Boletus aestivalis), հանքահորասունկը (Paxillus panuoides), վոլվարիելա մետաքսանմանը (Volvariella bombycina):

Աղյուսակ 7. Պոտենցիալ վտանգավոր էքսպանսիվ բուսատեսակներ

Ցեղ, տեսակ	Վայր
*Թխկի վրացական (<i>Acer ibericum</i>)	Ամենուր, ստորին գոտու անտառներ
*Գինաձոխ բժավոր (<i>Conium maculatum</i>)	Ամենուր, մոլախոտային, մարգագետիններ, գերխոնավ վայրեր
*Բայրրդան (<i>Heracleum ssp.</i>)	Ամենուր, մոլախոտային և գերխոնավ վայրեր
Անթեմ շնային (<i>Anthemis cotula</i>)	Ամենուր, անտառ, մարգագետին, գերխոնավ վայրեր
Անթեմ Տրիումֆետիի (<i>Anthemis triumfettii</i>)	Ամենուր, մոլախոտային և քայքայված վայրեր
Կռատուկ Պալադինի (<i>Arctium palladinii</i>)	Ամենուր, մոլախոտային վայրեր, մարգագետիններ
Խիժաճարճատուկ կնյունաման (<i>Chondrilla juncea</i>)	Հաղարծին, Գոշ տեղամասեր, մարգագետիններ, մոլախոտային և քայքայված վայրեր
*Սպիտակածաղիկ սովորական (<i>Leucanthemum vulgare</i>)	Ամենուր, մարգագետիններ, լքված դաշտեր, տափաստաններ, քայքայված վայրեր
Դառնիճ ճուռկախոտանման (<i>Picris hieracioides</i>)	Ամենուր, անտառ, մարգագետին
*Ոսկեշիվ սովորական (<i>Solidago virgaurea</i>)	Ամենուր, անտառ, մարգագետին
Կաթնբեկ բանջարանոցային (<i>Sonchus oleraceus</i>)	Գոշ, Հաղարծին, Շամախյան անտառտնու., մոլախոտային և գերխոնավ վայրեր
Լվածաղիկ կուսատերև (<i>Tanacetum parthenium</i>)	Ամենուր, մարգագետիններ, մոլախոտային վայրեր
Փակախոտ սիրիական (<i>Euclidium syriacum</i>)	Ամենուր, մոլախոտային և քայքայված վայրեր
*Իշակաթնուկ Մեգիերի (<i>Euphorbia seguieriana</i>)	Ամենուր, տափաստաններ, քայքայված վայրեր
*Ճայկտուց խնդամոլային (<i>Erodium cicutarium</i>)	Ամենուր, մոլախոտային և քայքայված վայրեր
*Կեղծ դանձլամեր սպիտակ (<i>Veratrum album</i>)	Ամենուր, մարգագետիններ և անտառային վերին գոտի
*Մատիտեղ լեռնային (<i>Polygonum alpinum</i>)	Ամենուր, մարգագետիններ և անտառային վերին գոտի
Ուռնի այծուրենի (<i>Salix caprea</i>)	Ամենուր, գերխոնավ վայրեր
*Կտուցախոտ արևելյան (<i>Rhynchosorys orientalis</i>)	Ամենուր, անտառի վերին գոտում, մարգագետիններ
Խոնդատ փռված (<i>Verbascum laxum</i>)	Ամենուր, քայքայված վայրեր

*** Պարտադիր մոնիտորինգի ենթակա տեսակներ:**

Հայաստանում սկսվել են հատուկ ուսումնասիրություններ հազվագյուտ կամ անհետացման եզրին գտնվող սնկերի ուղղությամբ: Պատրաստվել է Կարմիր գրքի թեկնածու սնկերի ցանկ, որում ընդգրկված են մաս «Դիլիջան» ազգային պարկի և դրա պահպանական գոտու տարածքներում հայտնաբերված մակրոմիցետներից 15-ը (աղյուսակ 8):

Ուսումնասիրությունների ընթացքում չհաջողվեց հայտնաբերել տրյուֆել ամառային տեսակը, որը միայն մեկ անգամ է հայտնաբերվել Դիլիջանի հատվածում (անհրաժեշտ է կատարել հետագա ուսումնասիրություններ և մոնիտորինգ, ինչը հնարավորություն կտա գնահատել պոպուլյացիայի վիճակը): Չեն հայտնաբերվել մաս հապլոպորուս հոտավետ և ցիստոդերմա ամփանտային տեսակները, սակայն կան տվյալներ դրանց տարածման մասին՝ առաջինը Դիլիջանի հատվածում, երկրորդը՝ կենու անտառում: Այս տեսակները հայտնաբերվել են մոտ 20 տարի առաջ, համարվում են հազվադեպ հանդիպող տեսակներ:

Աղյուսակ 8. Ազգային պարկում հայտնաբերված մակրոմիցետներ, որոնք առաջարկվում են ընդգրկել Հայաստանի Կարմիր գրքում

Ցեղ, տեսակ	Տեղաբաշխումը պարկի և պահպանական գոտու տարածքներում
Ճանճասպան կարմիր (<i>Amanita muscaria</i>)	Պարզ լճի շրջակայք
Դժգույն գարշասունկ (<i>Amanita phalloides</i>)	Դիլիջանի շրջակայք՝ Կոմպոզիտորների տան մոտակայք
Աստերոֆորա անձրևային (<i>Asterophora lycoperdoides</i>)	Ֆիոլետովոյի շրջակայքի խառն անտառներ
Բոլետոպսիս սևասպիտակ (<i>Boletopsis leucomelas</i>)	Աղավնավանք գյուղի շրջակայք՝ կենու պուրակ
Սալիտակ սունկ (<i>Boletus edulis</i>)	Դիլիջանի շրջակայք՝ Կոմպոզիտորների տան մոտակայքի կաղնու անտառ, Հաղարծինի շրջակայք՝ կաղնու-հաճարենու անտառ, Աղավնավանք գյուղի շրջակայք՝ կենու պուրակ, Դիլիջանի շրջակայք
Սատանայասունկ (<i>Boletus satanas</i>)	Պարզ լճի շրջակայք
Կլավարիադելֆուս վարսանդային (<i>Clavariadelphus pistillaris</i>)	Դիլիջանի շրջակայք՝ Կոմպոզիտորների տան մոտակայքի կաղնու անտառ
Ցիստոդերմա ամիանտային (<i>Cystoderma amianthina</i>)	Աղավնավանք գյուղի շրջակայք՝ կենու պուրակ
Հապլոպորուս հոտավետ (<i>Haploporus odorus</i>)	Դիլիջանի շրջակայք՝ Կոմպոզիտորների տան մոտակայքի կաղնու անտառ
Ոգնասունկ մարջանաձև (<i>Hericium coralloides</i>)	Դիլիջանի շրջակայք՝ Կոմպոզիտորների տան մոտակայքի գետի մոտ, փթած կոճղի վրա
Ոգնասունկ կաղնու (<i>Hericium erinaceum</i>)	Դիլիջանի շրջակայք, կաղնու կոճղի վրա
Հովանոցասունկ աղջկական (<i>Macrolepiota puellaris</i>)	Ֆիոլետովոյի շրջակայքի խառն անտառներ
Մուտինուս շնային (<i>Mutinus caninus</i>)	Աղավնավանք գյուղի շրջակայք՝ կենու պուրակ, Դիլիջանի շրջակայք
Կոնասունկ փաթիլատտիկ (<i>Strobilomyces floccopus</i>)	Դիլիջանի շրջակայք, Հաղարծինի շրջակայք՝ կաղնու-հաճարենու անտառ
Տրյուֆել ամառային (<i>Tuber aestivum</i>)	Դիլիջանի շրջակայք, խառը անտառ, հողի տակ

7.3.1.8. Ուտելի սնկեր.

Հաշվառման տվյալները վկայում են, որ «Դիլիջան» ազգային պարկի և դրա պահպանական գոտու տարածքներում հայտնի 176 տեսակի ուտելի մակրոսկոպիկ սնկերից առավել տարածված և շուկաներում վաճառվում է Ալանոցասունկ սովորականը կամ Կախասունկը (*Pleurotus ostreatus*), որից տարեկան հնարավոր է հավաքել և մշակել 1500-2000 կգ: Հեռանկարային ուտելի սնկերի հաշվառման մանրամասնությունները բերված են աղյուսակ 9-ում:

Հարկ է նշել, որ, կախված տարվա կլիմայական պայմաններից, այս սնկերի քանակը կարող է տատանվել: Հետևաբար անհրաժեշտ է դրանց թվաքանակի և տարածման վերաբերյալ իրականացնել տարեկան հաշվառումներ: Ուտելի սնկերի արդյունագործական հավաքի և մշակման թույլտվությունները պետք է տրվեն հաշվառման և մարբետինգային հետազոտությունների իրականացումից հետո: Բացի այդ, ազգային պարկի տարածքում կարելի է կազմակերպել մեծ մասշտաբներով կուլտիվացվող սնկերի՝ շամպինյոնի (*Agaricus bisporus*) և կախասունկի (*Pleurotus ostreatus*) արհեստական աճեցում:

7.3.1.9. «Դիլիջան» ազգային պարկի բուսականության վիճակը.

«Դիլիջան» ազգային պարկի և դրա պահպանական գոտու բուսականության (առանց անտառային էկոհամակարգերի) ներկա վիճակը ընդհանուր առմամբ բավարար է: Ստորին լեռնային գոտու թփուտներում և տափաստանային համակեցություններում հաշվառման ընթացքում էական փոփոխություններ չեն արձանագրվել: Վերջին տասնամյակում արոտավայրերի գերծանրաբեռնավածության բացակայության շնորհիվ

մերձալպյան և ալպյան գոտու մարգագետնային բուսականությունը նույնպես գտնվում է լավ վիճակում: Որոշ անհանգստություն է պատճառում Գոշալճի բուսակալումը, չնայած այդ պրոցեսը դանդաղ է տեղի ունենում:

Աղյուսակ 9. Հեռանկարային ուտելի սնկերի հաշվառման տվյալները

Տեսակ	Տեղաբաշխումը պարկի տարածքում	Տեղաբաշխումը պահպանական գոտու տարածքում	Հնարավոր հավաք կգ/տարում
*Յուղասունկ հատիկավոր (Suillus granulatus)	Դիլիջան, Հաղարծին, Գոշ, Շամախյան տեղամասեր	-	500-600
*Շեկիկ (Lactarius deliciosus)	Դիլիջան, Հաղարծին, Գոշ, Շամախյան տեղամասեր	-	500
*Աղվեսասունկ (Cantharellus cibarius)	Դիլիջան, Հաղարծին, Գոշ, Շամախյան տեղամասեր	-	400
*Առճղասունկ մարգագետնային (Marasmius oreades)	Դիլիջան, Հաղարծին, Գոշ, Շամախյան տեղամասեր	+	200
*Շամպինյոն սովորական (Agaricus campestris)	Դիլիջան, Հաղարծին, Գոշ, Շամախյան տեղամասեր	+	500
*Շամպինյոն դաշտային (Agaricus arvensis)	Դիլիջան, Հաղարծին, Գոշ, Շամախյան տեղամասեր	+	300
*Առճղասունկ աշնանային (Armillaria mellea)	Դիլիջան, Հաղարծին, Գոշ, Շամախյան տեղամասեր	-	500-600
Լեպիստա մանուշակագույն ոտիկով (Lepista personata)	Դիլիջան, Հաղարծին, Գոշ, Շամախյան տեղամասեր	+	500
*Ականջասունկ սովորական կամ Կախասունկ (Pleurotus ostreatus)	Դիլիջան, Հաղարծին, Գոշ, Շամախյան տեղամասեր	-	1500-2000
*Շարքասունկ հողամոխրագույն (Tricholom terreum)	Դիլիջան, Հաղարծին, Գոշ, Շամախյան տեղամասեր	-	500

* Ունեն մակ բուժիչ հատկություններ:

7.3.2. «Դիլիջան» ազգային պարկի բուսական կենսաբազմազանության կառավարման բարելավման գործողություններ

«Դիլիջան» ազգային պարկի բուսական կենսաբազմազանության կառավարման բարելավման գործողությունները հիմնականում ընդգրկում են մոնիտորինգային հետազոտություններ, որոնց իրականացումը պայմանավորված է սույն կառավարման պլանի Բաժին 9-ում ներկայացված «Դիլիջան» ազգային պարկում կենսաբազմազանության մոնիտորինգի համակարգի ներդրմամբ: Արդյունագործական նշանակության բուսական տեսակների արդյունավետ օգտագործման հիմնախնդիրները սերտորեն առնչվում են դրանց մարկետինգային ուսումնասիրությունների հետ, որոնց իրականացումը պայմանավորված է սույն կառավարման պլանի Բաժին 5-ում ներկայացված «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կառավարման բարելավման գործողությունների կատարմամբ (Հավելված 1):

7.3.3. Կենդանական աշխարհի հաշվառումը, վիճակը և գործողությունների պլանը

7.3.3.1. Անողնաշարավորներ.

Անողնաշարավորները «Դիլիջան» ազգային պարկի և դրա պահպանական գոտու տարածքներում անբավարար են ուսումնասիրված: Մյուս կողմից, ներկայումս, մասնագետների բացակայության պատճառով, կարգաբանական խմբերի մեծ մասի ուսումնասիրություն հնարավոր չէ կատարել:

2005 թվ. դաշտային ուսումնասիրությունների ժամանակ միջատների խմբերի նմուշներ հավաքվել են հետևյալ վայրերից՝ Պարզ լճի, Գոշ գյուղի և Գոշալճի, Խաչարձան գյուղի, Կենու պուրակի, Հաղարծինի, Դիլիջանից հարավ և հարավ-արևմուտք ընկած տարածքներից: Հետազոտությունների արդյունքում բացահայտվել է 490 տեսակի բզեզ

(Coleoptera) և 48 տեսակի թիթեռ (Lepidoptera), որոնցից 5-ը էնդեմիկ են Հայաստանի համար, 10-ը՝ Անդրկովկասի և 27-ը՝ Կովկասի համար:

Անողնաշարավորները կարևոր նշանակություն ունեն մոնիտորինգային հետազոտություններ կատարելիս: Անհրաժեշտ է ընտրել համեմատաբար խորը ուսումնասիրված կենդանիների խմբեր, որոնք հասանելի են հավաքի համար և կարող են որոշվել նաև ոչ նեղ մասնագետների կողմից: Որպես մոդելային (ինդիկատորային) կոմպլեքսներ կարող են ընտրվել կարծրաթևերը և որոշ թիթեռներ (մասամբ՝ Rhopalocera խումբը և խոշոր Heterocera), որոնք ընդգրկում են բազմաթիվ և էկոլոգիապես բազմաբնույթ տեսակներ: Բարձր տեսակային բազմազանությունը, ինչպես նաև բազմաթիվ էնդեմիկների առկայությունը թույլ է տալիս նախընտրությունը տալ այդ տեսակներին: Ընտրված կարգաբանական միավորները թույլ կտան ստանալ ներկայացուցչական տվյալներ: Ուսումնասիրվող տեսակների էկոլոգիական կապերի բազմազանությունը թույլ է տալիս անուղղակիորեն գնահատել նաև բուսականությունը և էդաֆիկ գործոնը:

7.3.3.2. Երկկենցաղներ.

«Դիլիջան» ազգային պարկի տարածքում երկկենցաղների հաշվառման և բնադրավայրերի գույքագրման արդյունքում պարզվեց, որ լճագորտը (*Rana ridibunda*) մեծ քանակներով է հանդիպում ջրային տարածքների մերձակայքում, փոքրասիական գորտը (*Rana macrocnemis*) լայն տարածված է միջին լեռնային գոտում՝ ծովի մակարդակից 1300-1600 մետր բարձրության վրա, անտառային բացատներում և լեռնային գետակների ափամերձ գոտիներում: Կանաչ դոդոշը (*Bufo viridis*) ևս ունի լայն տարածում, և հանդիպում է ազգային պարկի գրեթե ողջ տարածքում: Շելկովնիկովի ծառագորտը (*H.a.shelkovnikovi*) տարածված է ազգային պարկի անտառային գոտում և մեծ քանակություններով հանդիպում է լճերի ու գետերի մերձակայքում՝ հատկապես Պարզ լճի շրջակայքում, Գոշ գյուղի և Դիլիջանի մերձակա անտառներում: Բացի նշված երկկենցաղներից, 2000 թվականին պր. Ֆ. Դանիելյանը Պարզ լիճ է թողել 30 երիտասարդ տրիտոններ (*Triturus vittatus*), որոնք աճեցվել էին լաբորատոր պայմաններում: Անհրաժեշտ է շարունակել այս տեսակի ուսումնասիրությունները՝ շարունակական մոնիտորինգի միջոցով: Ազգային պարկի տարածքում երկկենցաղների տեսակների զոյատևմանը սպառնացող հիմնական գործոններն են դրանց բնադրավայրերի աղտոտումը և չորացումը:

7.3.3.3. Սողուններ.

«Դիլիջան» ազգային պարկի տարածքում սողունների հաշվառման և էկոլոգիական բնութագրերի տվյալները հետևյալն են.

1. Սողեսներ - Ժայռային մողեսների հետևյալ 5 տեսակները (որոնք բոլորն էլ հայկական բարձրավանդակի էնդեմիկներ են) հայտնաբերվել են պարկի և դրա պահպանական գոտու տարբեր բնատեղիներում: Դրանցից հայկական մողեսը (*Darevskia armeniaca*) լայն տարածում ունի ազգային պարկի ճանապարհամերձ բոլոր ժայռերի և արհեստական պատերի վրա: Ռոստոմբեկովի ժայռային մողեսը (*Darevskia rostombekovi*) հիմնականում հանդիպում է Պապանինոյի շրջակայքի չոր ժայռերի վրա և կուսածին տեսակներից հանդիսանում է ամենախոցելին իր կենսաբանական առանձնահատկությունների պատճառով, ինչպիսին են՝ ձվերի քիչ քանակությունը և հիվանդությունների հանդեպ զգայունությունը: Նույն տարածքներում հանդիպում է նաև Դալի ժայռային մողեսը (*Darevskia dahli*): Աղստև և Գետիկ գետերի առափնյա ժայռերի վրա տարածված են ժայռային մողեսների երկու երկսեռ տեսակներ՝ Ռադդեի (*Darevskia raddei*) և քոի (*Darevskia portshinskii*) մողեսները: Պարկում հանդիպող մյուս մողեսներից են կանաչ մողեսների խմբին պատկանող տեսակները, ինչպիսիք են՝ շերտավոր (*Lacerta strigata*) և ճարպիկ (*Lacerta agilis*) մողեսները, որոնք ոչ մեծ քանակությամբ հանդիպում են անտառային գոտու բացատներում:

Ուսումնասիրությունների ժամանակ Պապանին տարածքում առաջին անգամ գրանցվել են մարգագետնային մողեսի (*Lacerta praticola*) երկու առանձնյակներ, որոնց կարգավիճակի վերաբերյալ ուսումնասիրությունները անհրաժեշտ է շարունակել: Համաձայն գոյություն ունեցող տվյալների՝ ազգային պարկի անտառային գոտում, մասնավորապես՝ Գետիկ գետի հովտում, քիչ քանակությամբ հանդիպում են անոտ մողեսներ, որոնք 2005 թվ. ուսումնասիրությունների ընթացքում չեն հայտնաբերվել: Անհրաժեշտ է շարունակել որոնողական հետազոտությունները: Ազգային պարկի տարածքում, դեպի Իջևան տանող ճանապարհի գրեթե բոլոր չոր ժայռերի վրա, տարածված է կովկասյան ազաման (*Laudacia caucasica*):

2. **Օձեր** - Ազգային պարկի գրեթե ողջ տարածքում հանդիպում են պղնձօձը (*Coronella austriaca*), սվորական (*Natrix natrix*) և ջրային լորտուները (*N.tesselata*), որոնցից վերջին երկուսը մեծ քանակություն են կազմում ջրամբարների շրջակայքում: 2005 թվ. ուսումնասիրությունների ընթացքում հաջողվեց հայտնաբերել նաև խայտաբղետ սահնոձի (*Coluber ravergeri*) մեկ առանձնյակ, որի ճշգրիտ քանակությունը հաստատելու համար անհրաժեշտ են հետագա մանրակրկիտ հետազոտություններ: Ազգային պարկի դեպի Սեմյոնովկա ընկած հատվածում հաջողվել է հայտնաբերել լեռնատափաստանային իժի (*Vipera erivanensis*) մեկ առանձնյակ: Այն քիչ քանակությամբ հանդիպում է նաև ազգային պարկին հարակից ալպիական գոտում:
3. **Կրիաներ** - Գետիկ գետի հովտում հայտնաբերվել է ճահճային կրիայի (*Emys orbicularis*) մեկ առանձնյակ, որն առաջին անգամ է հանդիպում այս տարածքում:

7.3.3.4. Թռչուններ.

Գույքագրման աշխատանքները կատարվել են 2005 թ. ապրիլ-սեպտեմբեր ժամանակահատվածում, որի պատճառով վաղ գարնանային և աշնանային միգրացիոն ժամանակահատվածները չեն ուսումնասիրվել: «Դիլիջան» ազգային պարկում հայտնի թռչուններից 16 տեսակներ ընդգրկված են Հայաստանի Կարմիր գրքում (աղյուսակ 10, քարտեզ 6): Ներկայումս դրանք վտանգված են մարդկածին բացասական ազդեցություններից, ինչպիսիք են՝ ծառահատումները, չկարգավորված տնտեսական կամ ռեկրեացիոն գործունեությունը, որսագողությունը: Դրանց հետագա պահպանությունն ապահովելու համար անհրաժեշտ է իրականացնել մշտական մոնիտորինգ, այդ թվում՝ բնադրավայրերի վիճակի: 2005թ. ապրիլ-սեպտեմբեր ամիսներին կատարված հաշվառման արդյունքները վկայում են, որ թռչունների համեմատաբար խիտ տեղաբաշխում արձանագրվել է Դիլիջան, Շամախյան տեղամասերում և Խաչարձանի շրջակայքում:

Աղյուսակ 10. Կարմիր գրքում գրանցված թռչուններ

Գիտական անվանումը	Կարգավիճակը
Կովկասյան մարեհավ (<i>Tetrao mlokosiewiczi</i>)	Ռեզիդենտ /սակավ/ բազմացող
Վայրի հնդկահավ (<i>Tetraogallus caspius</i>)	Ռեզիդենտ /սակավ/ բազմացող
Սև փայտփոր (<i>Dryocopus martius</i>)	Ռեզիդենտ /սակավ/ բազմացող
Հայկական որոր (<i>Laurus armenicus</i>)	Ռեզիդենտ /տվորական/ չբազմացող
Սև ագռավ (<i>Corvus corax</i>)	Ռեզիդենտ /սակավ/ բազմացող
Ճուռակաման շահրիկ (<i>Silvia nisoria</i>)	Չվող / բնադրող
Խայտաբղետ քարակեռնեխ (<i>Monticola saxatilis</i>)	Չվող / բնադրող
Կապույտ քարակեռնեխ (<i>Manticola solitarius</i>)	Չվող / բնադրող
Կապտափող տիսակ (<i>Luscinia svecica</i>)	Չվող / բնադրող
Կարմրաթև մագցող (<i>Tichodroma muraria</i>)	Ռեզիդենտ /սակավ/ բազմացող
Սափասն (<i>Falco peregrinus</i>)	Ռեզիդենտ /սակավ/ բազմացող
Գերեզմանարձիվ (<i>Aquila heliaca</i>)	Ռեզիդենտ /սակավ/ բազմացող
Քարարձիվ (<i>Aguila chrysaetus</i>)	Ռեզիդենտ /սակավ/ բազմացող
Օձակեր արձիվ (<i>Circus gallicus</i>)	Չվող / բնադրող
Գառնանգղ (<i>Gypaetus barbatus</i>)	Ռեզիդենտ /սակավ/ բազմացող
Սայիտակագուլիս անգղ (<i>Gyps fulvus</i>)	Ռեզիդենտ /սակավ/ բազմացող

7.3.3.5. Կաթնասուններ.

Կաթնասունների վերաբերյալ դիտարկումները ցույց են տալիս, որ «Դիլիջան» ազգային պարկի կենդանիների կազմը որոշ դեպքերում (օրինակ՝ կճղակավորների) նման է հարևան մարզերի տեսակային կազմին: Սա կարող է բացատրվել այն հանգամանքով, որ այս տարածքներում են տեղի ունենում կենդանիների սեզոնային և կերի միգրացիան: Չնայած դրան, պարկն ունի իրեն բնորոշ կենդանական կազմը: Կաթնասունների կարգաբանական խմբերի ներկայացուցիչների վերաբերյալ առավել ուշադրության արժանի տվյալները հետևյալն են.

- 1. Միջատակերներ** - Ազգային պարկի և դրա պահպանական գոտու տարածքներում հանդիպում են 9 տեսակներ: Առավել հետաքրքրություն են ներկայացնում երկարականջ կամ ականջեղ ոզնին (*Erinaceus auritus*) և սովորական կուտորան (*Neomys fodiens*): Վերջինիս սահմանափակ քանակությամբ պոպուլյացիան գրանցվել է Հաղարծին գետի հովտում: Ընդ որում՝ այս տեսակի էկոլոգիան, կերաբաժինը, մակարոյժների կազմը և այլն, ուսումնասիրված չեն ոչ միայն Հայաստանում, այլ ողջ աշխարհում: Հաշվի առնելով կուտորայի բացառիկ հազվագյուտ լինելը, գիտության համար առանձնահատուկ նշանակությունը՝ անհրաժեշտ է կազմակերպել մշտական մոնիտորինգ և ստացիոնար ուսումնասիրություններ:
- 2. Կրծողներ** - Ազգային պարկի և դրա պահպանական գոտու տարածքներում հայտնի են 17 տեսակի կրծողներ: Լայն տարածում ունեն սովորական, հասարակական և ձյան դաշտամկների (*Microtus arvalis*, *M. socialis* և *M. nivalis*) պոպուլյացիաները, որոնք հայտնաբերվել են պարկի հյուսիսային և հյուսիս-արևելյան շրջաններում: Այս հատվածում զգալիորեն նվազել է մացառախոզի (*Hystrix leucura*) քանակությունը: Նույնը նկատվում է նաև պարսկական սկյուռի (*Sciurus persicus*), մեծ և անտառային քնամկների (*Glis glis*, *Dryomys nitedula*) պոպուլյացիաների դեպքում: Գորշ նապաստակը (*Lepus europaeus*) հանդիպում է պարկի և դրա պահպանական գոտու բոլոր բիոտոպներում՝ բացառությամբ բնակավայրերի:
- 3. Չեռքաթևավորներ** - Հայաստանում գրանցված 28 ձեռքաթևավորների տեսակներից միայն 7-ն են հանդիպում ազգային պարկի և դրա պահպանական գոտու տարածքներում: Հիմնականում հանդես են գալիս սակավաթիվ պոպուլյացիաներով, միայն գաճաճ փոքրաչղջիկի (*Pipistrellus pigmaeus*) գաղութներն են, որ երբեմն կազմված են լինում 250-400 անհատներից:
- 4. Գիշատիչներ** - Այստեղ հայտնաբերվել են գիշատիչների 12 տեսակներ: 2005 թվ. ապրիլ-սեպտեմբեր ժամանակահատվածում կատարված ուսումնասիրությունների տվյալներով անհնար է տալ գիշատիչների էկոլոգիայի, վարքագծի, բեղունության և քանակության վերաբերյալ վերջնական տեղեկություն: Դրա համար անհրաժեշտ է առնվազն երկու տարի՝ ուսումնասիրություններում ընդգրկելով տարվա բոլոր սեզոնները:
- 5. Կճղակավորներ** - Ուսումնասիրությունների ընթացքում հաջողվել է գրանցել ազնվացեղ եղջերուի (*Cervus elaphus*) 3 անհատ, որոնք ամենայն հավանականությամբ չեն ապրում պարկի տարածքում, այլ միգրացվել էին հարևան անտառային տարածքներից: Կճղակավորների պոպուլյացիաների իրական կարգավիճակը պարզելու նպատակով անհրաժեշտ է իրականացնել դրանց համար սնունդ ծառայող բուսատեսակների երկարաժամկետ հետազոտություն:

«Դիլիջան» ազգային պարկի և դրա պահպանական գոտու տարածքներում հանդիպող կենդանիներից երկարականջ (ականջեղ) ոզնին, Եվրոպական լայնականջ ծալքաշուրթը, հնդկական վայրենակերպը կամ մացառախոզը, խայտաքիսը, ջրսամույրը, գորշ արջը և վայրի կատուն գրանցված են Հայաստանի Կարմիր գրքում (Քարտեզ 6) և ներկայումս դեռևս պահպանում են իրենց հազվագյուտ լինելու կարգավիճակը: Մյուս կողմից, ևս 13 տեսակներ, որոնք գրանցված չեն Կարմիր գրքում, սակայն, ինչպես պարզվել է ուսումնասիրությունների ընթացքում, նույնպես հազվադեպ են հանդիպում: Դրանցից առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում սովորական կուտորան

(Neomys fodiens), փոքր սպիտակատամը (Crocideura sueveolens), մեծ քնամուկը (Glis glis), քարակզաքիսը (Martes foina) և այլն: Որոշ տեսակների գոյությունը ազգային պարկի տարածքում, ինչպիսիք են խայտաքիսը (Vormela peregusna), քարակզաքիսը (Martes.), ազնվացեղ եղջերուն (Fiona Cervus elaphus) ու անտառային գիշերաչղջիկը, պետք է հաստատվեն լրացուցիչ հետազոտությունների արդյունքում: 1991 թ. հաշվառման տվյալների հետ համեմատելիս կարելի է հանգել այն եզրակացության, որ «Դիլիջան» ազգային պարկի և դրա պահպանական գոտու տարածքներում կաթնասունների տեսակային կազմը, դրանց ապրելավայրերը, բեղունությունը, կերաբաժինը, ինչպես նաև որոշ տեսակների քանակը (մացառախոզ, սկյուռ, քնամուկ) անտառահատումների, որսագողության, հրդեհների, ապօրինի շինարարությունների, չկարգավորվող խոտհունձի և ընտանի կենդանիների արածեցման հետևանքով խիստ կրճատվել են և ավելացել են առնետների ու դաշտամկների թվաքանակը:

7.3.4. «Դիլիջան» ազգային պարկի կենդանական կենսաբազմազանության կառավարման բարելավման գործողություններ

«Դիլիջան» ազգային պարկի կենդանական կենսաբազմազանության կառավարման բարելավման գործողությունները հիմնականում ընդգրկում են մոնիտորինգային հետազոտություններ, որոնց իրականացումը պայմանավորված է սույն կառավարման պլանի Բաժին 9-ում ներկայացված «Դիլիջան» ազգային պարկում կենսաբազմազանության մոնիտորինգի համակարգի ներդրմամբ:

7.4. «Դիլիջան» ազգային պարկի անտառգույքագրում

«Դիլիջան» ազգային պարկի տարածքում անտառների գույքագրման և հաշվառման աշխատանքներն առաջին անգամ իրականացվել են 1927 թվականին ՀՍՍՀ Հողային Ժողկոմի կողմից, այնուհետև պարբերաբար՝ 1939, 1955, 1965, 1975 և 1985 թվականներին՝ Անդրկովկասի անտառշինական «Անտառնախագիծ» ինստիտուտի կողմից: Ընդ որում՝ 1975 և 1985 թվականներին իրականացվել է 1-ին կարգի անտառշինություն: Բնական պաշարների կառավարման և չքավորության նվազեցման ծրագրով ազգային պարկի կառավարման պլանի մշակման շրջանակներում 2005 թվականի հունիս-նոյեմբեր ամիսներին իրականացվել են անտառների գույքագրման աշխատանքներ, որոնց արդյունքները ներկայացվում են ստորև:

7.4.1. Անտառային տարածքների դինամիկան ըստ հողատեսքերի

Նախորդ անտառշինության տվյալներով «Դիլիջան» ազգային պարկի (1985 թվ. այն ուներ պետական արգելոցի կարգավիճակ) ընդհանուր տարածքը կազմում էր 24232 հա, ներկա անտառգույքագրման տվյալներով ազգային պարկի միայն անտառային տարածքը կազմում է 28059.8 հա (աղյուսակ 11):

Աղյուսակ 11. Ազգային պարկի տեղամասերի տարածքների փոփոխությունների դինամիկան և կառուցվածքը

h/h	Տեղամասերը	Մակերեսը, հա		
		1985 թ. անտառշինություն	2005 թ. անտառշինություն	Տարբերություն
1	Դիլիջանի	4773	5089.5	+316,5
2	Շամախյանի	5381	6097.7	+716,7
3	Հաղարծինի	5451	6408.9	+957.9
4	Գոշի	8627	10463.7	+1836,7
	Ընդամենը	24232	28059,8	+3827.8

«Գիլիջան» ազգային պարկի անտառային տարածքների ավելացումը 3827.8 հեկտարով բացատրվում է.

- +3656.8 հա - ազգային պարկին նախկին կոլխոզ-սովխոզային տնօրինության անտառների միացումով.
- +171 հեկտար - երկրատեղեկատվական համակարգի կիրառմամբ տարածքների ճշտումով:

Հարկ է նշել, որ ազգային պարկի տարածքում առկա կոլխոզ-սովխոզային անտառների հաշվառման, գույքագրման և քարտեզագրման գործողություններ իրականացվել են միայն 1978 թվականին Վրաստանի «Անտառնախագիծ» ինստիտուտի կողմից: Առկա փաստաթղթերի ուսումնասիրություններից պարզվել է, որ իրականացվել է 1-ին կարգի անտառշինություն, սակայն առանց աերոլուսանկարների օգտագործման: Գույքագրումը կատարվել է բացառապես աչքաչափային մեթոդով: Պաշարը ևս որոշվել է աչքաչափային մեթոդով՝ օգտագործելով գործող ստանդարտ ծավալային աղյուսակները: Կոլխոզ-սովխոզային տնօրինության անտառների պահպանությունը, պաշտպանությունը, վերարտադրությունը և օգտագործումը բարելավելու նպատակով ՀՀ Կառավարության 21.06.1991թ. թիվ 421 որոշմամբ՝ 3766 հա անտառներ միացվել են «Գիլիջան» պետական արգելոցին (աղյուսակ 12):

Աղյուսակ 12. «Գիլիջան» ազգային պարկին միացված անտառները՝ ըստ համայնքների

h/h	Համայնքներ	Անտառների մակերեսը, հա	
		Անտառշինություն՝ 1978 թ.	Անտառշինություն՝ 2005 թ.
1	Գոշ	592	701.5
2	Աղավնավանք	727	717.9
3	Խաչարձան	434	427.5
4	Հաղարծին	1470	1332.1
5	Շամախյան	543	477.8
Ընդամենը		3766	3656.8

Գոշի, Խաչարձանի և Աղավնավանքի կոլխոզ-սովխոզային անտառների տարածքների մակերեսների տարբերությունը բացատրվում է արբանյակային պատկերների և երկրատեղեկատվական համակարգի միջոցով ճշգրտմամբ, իսկ Հաղարծինինը և Շամախյանինը պայմանավորված է համայնքների կողմից այդ տարածքների յուրացմամբ, որոնք օգտագործվում են գյուղատնտեսական նպատակներով: Ինչպես արդեն նշվել է, «Գիլիջան» ազգային պարկի անտառային տարածքները կազմում են 28059.8 հա, որում անտառային հողերը զբաղեցնում են 26719,3 հա կամ ընդհանուր տարածքի 95.2 %-ը, ոչ անտառային հողերը զբաղեցնում են 1340.7 հա - 4.8 %-ը: Անտառային հողերում անտառածածկը 24679.1 հա է կամ ընդհանուր տարածքի 87.9 %-ը, ոչ անտառածածկ հողերը՝ 2034.5 հա - 7.3 %: Աղյուսակ 13-ում բերված տվյալներից ակնհայտ է դառնում, որ «Գիլիջան» ազգային պարկի անտառային տարածքները ավելացել են 99 հեկտարով, որը բացատրվում է արբանյակային պատկերների վերլուծության և դաշտային ուսումնասիրությունների արդյունքում տարածքների ճշգրտմամբ: Անտառածածկի մակերեսը նվազել է 1051.9 հեկտարով, որը բացատրվում է 608.3 հա-ով մարդածին նոսրուտների տարածքի ավելացմամբ: Ճշտվել է նաև կենսաբանական նոսրուտների ընդհանուր տարածքը, որն ավելացել է 51.8 հեկտարով: Անտառնշակույթների (ներառյալ չմիակցվածների) ճշգրտման արդյունքում պարզվեց, որ դրանցից 322.9 հա-ը բացատրվում են: Ոչ անտառային հողերի մակերեսների նվազումը 37.3 հեկտարով բացատրվում է որոշ արոտավայրերի տարածքների ճշգրտմամբ, ջրային մակերեսների և ճանապարհների 53 հեկտար տարածքի դուրս բերմամբ (նախորդ անտառշինության ժամանակ այդ մակերեսները ավելացվում էին՝ քառակուսիների մակերեսները ամբողջական կլորացված թվերով ներկայացնելու համար):

Աղյուսակ 13. Ազգային պարկի անտառային ֆոնդի դինամիկան ըստ հողատեսքերի

h/h	Հողատեսքեր	1985թ. հիմնական անտառային ֆոնդ + սովխոզ-կոլխոզային անտառներ		2005 թ.		Տարբերություն
		հա	%	հա	%	
1.	Ազգային պարկի անտառային ֆոնդի ընդհանուր մակերեսը	27998		28059.8		+61.7
2.	Անտառային հողեր, ընդամենը	26620	95.1%	26719	95.2%	+99
2.1.	Անտառածածկ, ընդամենը	25731	91.9%	24679.1	87.9%	-1051.9
2.1.1.	Այդ թվում անտառնշակույթներ	797	3.1%	570.8	2.3%	- 226.2
2.2.	Զմիակցված սաղարթով անտառնշակույթներ	100	0.39%	3.3	0.013%	-96.7
2.3.	Անտառային տնկարան	3	0.01%	2.1	0.008%	- 0.9
2.4	Ոչ անտառածածկ, ընդամենը այդ թվում՝	786	2.8%	2034.5	7.2%	+1248.5
2.4.1	Չորացած ծառուտներ	-	-	-	-	-
2.4.2	Նոսրուտներ	435	55.3%	486.8	23.9%	+51.8
	• կենսաբանական	-	-	608.3	29.9%	+608.3
	• մարդածին					
2.4.3	Հատված տարածքներ	-	-	-	-	-
2.4.4	Բացատներ	351	44.7%	939.4	46.2%	+588.4
3.	Ոչ անտառային հողեր, ընդամենը այդ թվում՝	1378	4.9%	1340.7	4.8%	- 37.3
3.1	Հողահանդակներ	623	45.2%	617.8	46.1%	- 5.2
3.1.2	Վարելահող	5	0.8%	4.5	0.7%	-0.5
3.1.2	Խոտհարք	262	42.1%	265.8	43%	+3.8
3.1.3	Արոտավայր	355	57%	347.3	56.2%	- 7.7
3.1.4	Այգի	1	0.1%	0.2	0.1%	-0.8
3.2.	Ժամանակավոր օգտագործվող տարածքներ, էլեկտրահաղորդման գծեր և այլն	72	5.2%	69.2	5.1%	-2.8
3.3.	Ճանապարհներ	24	1.8%	21.9	1.6%	- 2.1
3.4.	Ջրային մակերես	54	3.9%	3.1	0.3%	- 50.9
3.5.	Ժայռեր, քարացրոններ, սողանքներ և այլ հողեր	605	43.9%	628.7	46.9%	+23.7

7.4.2. Ազգային պարկի անտառների գնահատում

7.4.2.1. Ազգային պարկի անտառների բաշխվածությունն ըստ գերակշռող ծառատեսակների.

Ազգային պարկի հիմնական անտառկազմող ծառատեսակներն են՝ արևելյան հաճարին, որի համակեցությունները զբաղեցնում են 7396 հեկտար՝ 1435775 մ³ ընդհանուր պաշարով (անտառածածկ տարածքի մոտ 30 %-ը և ընդհանուր պաշարի 40 %-ը). վրացական և խոշորառէջ կաղնու սերմնային ծագումով համակեցությունները զբաղեցնում են 12391.7 հա՝ 1585569 մ³ պաշարով (անտառածածկ տարածքի 50.2 %-ը և պաշարի 44.2 %-ը). կովկասյան բոխու սերմնային ծագումով ծառուտները զբաղեցնում են 2571.5 հա՝ 350171 մ³ ընդհանուր պաշարով (անտառածածկի 10.4 %-ը և պաշարի 9.8 %-ը). կոճղաշիվային ծագումով բոխուտները կազմում են 615.3 հա՝ 69931 մ³ պաշարով

(համապատասխանաբար 2.5 % և 1.9 %): Մնացած ծառատեսակների ծառուտները միասին կազմում են անտառածածկ տարածքի 6.9 %-ը և պաշարի 4.1 %-ը (Քարտեզ 10):

7.4.2.2. Անտառածածկ տարածքի և պաշարի բաշխվածությունը ըստ ծովի մակարդակից բարձրության, կողմնադրության և լանջի թերության.

Ազգային պարկի 24679.1 հա անտառածածկ տարածքները տեղաբաշխված են ծովի մակարդակից հետևյալ բարձրությունների վրա - մինչև 900-1200 մ բարձրության վրա տեղաբաշխված է անտառածածկ տարածքի 5 %-ը, 1201-1500 մ բարձրությունների վրա՝ 5306 հա (21.5 %), 1501-1700 մ - 5799.6 հա (23.5 %), 1701-2000 մ – 11130.3 հա (45.1 %) և 2001 մ-ից բարձր՝ 1209.3 հա (4.9 %): Անտառածածկի 12083.8 հա տարածքը տեղաբաշխված է հյուսիսային կողմնադրությունների վրա՝ անտառածածկ տարածքի 49%-ը, հարավային կողմնադրությունների վրա տեղաբաշխված են 9273.4 հա անտառներ (37.6 %-ը), մնացած 13.4 %-ը տեղաբաշխված է արևելյան և արևմտյան կողմնադրությունների վրա (աղյուսակ 14):

Աղյուսակ 14. Անտառածածկ տարածքի տեղաբաշխվածությունը ըստ կողմնադրությունների

Գլխավոր ծառատեսակ	Կողմնադրություններ հա/ մ ³								Ընդամենը հա/ մ ³
	հս	հս-արլ	հս-արմ	հվ	հվ-արլ	հվ-արմ	արլ.	արմ.	
Հաճարենի	1939.7	1957.5	1876.7	133.3	391.8	609.1	235.8	252.1	7396
	388510	386075	358689	27341	75502	117081	39208	43369	1435775
Կաղնի սերմնային	964.1	1521.6	1506.3	1628.8	2498.7	2258.3	1279.6	734.3	12391.7
	136860	220663	229974	180084	288411	273932	155982	99663	1585569
Բոխի սերմնային	217.3	505.4	661.7	44.7	347.3	318.6	301.6	174.9	2571.5
	33373	72524	101321	5687	41108	35951	35166	25041	350171
Բոխի կոճղաշիվային	94	124.6	129.1	11	61.6	57.6	98.4	39	615.3
	10964	13348	16925	1349	6344	5650	9373	5978	69931
Ղաժի		9.2	39.5	113.2	64.8	280.8	30.1	38.9	576.5
		1010	1120	3889	2636	8892	1070	1215	19832
Հացենի	61.9	62.2	32.5	19.5	11.7	34.9	15	5.8	243.5
	4960	6105	3719	981	772	1813	553	406	19309
Թխկի	26.6	60.4	39.2	5.7	12.6		10.5		155
	5248	8478	5488	684	1638		1542		23078
Սոճի	14.7	27.3	44.4	51.8	38	110.8	33.5	53.1	373.6
	1901	4101	5473	4462	4653	13596	4761	7218	46165
Ընկուզենի	1901	4101	5473	4462	4653	13596	4761	7218	46165
	9.1	10.9	5.2	3.3	6.4	21.4	1.7		58
- 3. Հողասահքեր** - ազգային պարկի տարածքում ներկայումս գրանցված են 242 փոքր և միջին հողասահքեր և փլվածքներ, որոնք զբաղեցնում են 2850.7 հա տարածք: Դրանք հիմնականում տարածված են ազգային պարկի կենտրոնական մասերում և տարածվում են հարավ-արևմուտքից դեպի հյուսիս-արևելք: Այժմ այդ քանակից ակտիվ են միայն 142-ը (58.6 %) 571.7 հա ընդհանուր մակերեսով, 72-ը (29.8 %) համարվում են ոչ ակտիվ և զբաղեցնում են 1 640.5 հա տարածք, իսկ 28-ը (11.6 %) ժամանակավորապես հսկվում են և զբաղեցնում են 638.4 հա: Հիմնական ակտիվ հողասահքերի գոտիները գտնվում են Դիլիջան քաղաքի, Թեղուտ, Հաղարծին, Գոշ և Խաչարձան գյուղերի տարածքներում: Ազգային պարկի նման վտանգավոր տարածքներում գրանցված են 40 հուշարձան (15.6 %): Հողասահքերը հանգեցնում են մշակութային հուշարձանների, ճանապարհների և անտառային արահետների քայքայմանը: Դրանց նպաստող գործոններից են ապօրինի ծառահատումները, արածեցումը և անասունների չկարգավորված տեղափոխումը անառային արոտավայրեր:

8.6. «Դիլիջան» ազգային պարկի և դրա պահպանական գոտու տարածքներում տուրիզմի և ռեկրեացիոն գործունեության կանոնակարգման գործողություններ

Տուրիզմի և ռեկրեացիայի բնագավառում «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կարողությունները հզորացնելու համար անհրաժեշտ է դրա կառուցվածքում ստեղծել տուրիզմի և ռեկրեացիայի պլանավորման բաժին, բաղկացած 3 աշխատակցից, որոնցից մեկը պետք է տիրապետի անգլերեն լեզվին և ունենա համակարգչով աշխատելու հմտություններ (տես նաև՝ սույն կառավարման պլանի Բաժին 5-ը): Տուրիզմով և ռեկրեացիայով զբաղվող անձնակազմը պետք է ունենա գործողությունների լայն շրջանակ՝ տիրապետելով հետևյալ կարողություններին՝ հասկանա այցելուների կարիքներն ու ցանկությունները, մատուցի բարձրակարգ ծառայություններ՝ բացատրելու,

մեկնաբանելու և ինտերպրետացիայի առումով, ունենա մարկետինգի և գովազդի ունակություններ, օժտված լինի տուրիզմի և ռեկրեացիայի կառավարման ու էկոնոմիկայի գիտելիքներով: Ազգային պարկի կառուցվածքում կարևոր տեղ պետք է հատկացվի Այցելուների կենտրոնին (տես նաև՝ սույն կառավարման պլանի Բաժին 5-ը): Այս նպատակով «Դիլիջան» ազգային պարկի կենտրոնական գրասենյակի շենքի հարևանությամբ Բնական պաշարների կառավարման և չքավորության նվազեցման ծրագրի շրջանակներում կառուցվել է համապատասխան շենք: Այցելուների կենտրոնը պետք է համատեղի տեղեկատվական և ինտերպրետիվ գործառնություններ: Դրա համար կենտրոնը պետք է համալրվի համապատասխան նյութատեխնիկական բազայով: Պետք է ստեղծել սպասարկման ծառայություններին վերաբերող տվյալների բազա:

«Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կողմից տուրիզմի և ռեկրեացիայի շրջակա միջավայրի վրա և սոցիալական ազդեցության գնահատման համար անհրաժեշտ է մշակել մոնիտորինգային ծրագիր (Հավելված 1): Պահպանվող տարածքներում գոյություն ունեն տուրիզմի և ռեկրեացիայի մոնիտորինգի երկու հիմնական ասպեկտներ.

- այցելուների ազդեցության մոնիտորինգ,
- սպասարկման որակի մոնիտորինգ:

Հարկ է նշել, որ այցելուների և նրանց տեղաբաշխման գրանցումը ազգային պարկի տարածքում կարևոր ցուցանիշներ են շրջակա միջավայրի վրա այցելուների բացասական ազդեցությունը նվազագույնի հասցնելու համար:

Կարևոր է ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված միջոցառումների իրականացումը, ինչպիսիք են՝

- դեպի տուրիստական և ռեկրեացիոն նշանակության տարածքներ տանող ճանապարհների բարեկարգումը.
- տուրիստական և ռեկրեացիոն նշանակության տարածքներում ավտոկայանատեղերի կազմակերպումը.
- լքված և ավերված կառույցների ապամոնտաժումը և հեռացումը.
- տուրիստական և ռեկրեացիոն նշանակության տարածքներում կենցաղային աղբի հավաքմեն կետերի տեղադրումը, աղբահանության կազմակերպումը.
- տուրիստական և ռեկրեացիոն նշանակության տարածքներ տանող ճանապարհներին բազմալեզու ցուցանակների և ուղեցույցների, ինչպես նաև այդ տարածքներում այցելուների վարքագիծը բացատրող բազմալեզու ցուցանակների տեղադրումը և այլն:

Տուրիզմի և ռեկրեացիայի զարգացման տեսանկյունից «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ը պետք է կազմակերպի ազգային պարկի կենսաբազմազանության, լանդշաֆտի և բնության ու մշակութային ժառանգության բացահայտմանն ու ընթրմանը նվիրված ուսուցողական/դիտողական տուրեր: Որպեսզի «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ը կարողանա այցելուներ ընդունել, առաջարկվում է դրա նախապատրաստման համար կիրառել հաղորդակցության ինտերպրետացիոն միջոցը (ՀԻՄ): Դրա կիրառումը հնարավորություն է տալիս այցելուներին ստանդարտիզացված տեղեկատվական համակարգի միջոցով անմիջապես տեղում ծանոթանալ ազգային պարկի բնական և մշակութային ժառանգությանը՝ նշագրված կամ ազատ երթուղիների, բույլետների, նկարների կամ պատկերների միջոցով: Հարմարավետ տեղադրված ցուցանակների և պիկտոգրամաների օգնությամբ կարելի է այցելուներին տեղեկացնել ազգային պարկում վարքագծի կանոններին, նախազգուշացնել վտանգի մասին և այլն:

Տուրիզմի և ռեկրեացիայի զարգացմանը նպաստող կարևոր գործոններից է «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կողմից գովազդային և մարկետինգային գործունեության իրականացումը: Այս բնագավառում շահավետ է սերտ համագործակցել մասնավոր տուրիստական սեկտորի հետ: Մարկետինգային ռազմավարությունը պետք է ընդգրկի հետևյալ բաղադրիչները՝

- այցելուների նպատակային խմբերի բացահայտում.

- գովազդային նյութերի ստեղծում և տարածում, այդ թվում՝ ինտերնետի միջոցով (Բնական պաշարների կառավարման և չքավորության նվազեցման ծրագրի շրջանակներում «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի համար ստեղծվել է վեբկայք)։
- մասնակցություն տուրիստական միջոցառումներին.
- հարցումների և դիմումների սպասարկում:

Տուրիզմի և ռեկրեացիայի զարգացմանը նպաստող կարևոր խնդիրներից է նաև տեղեկատվական նյութերի պատրաստումը և տպագրությունը (Հավելված 1): Ընդ որում՝ դրանք պետք է լայնորեն լուսաբանեն «Դիլիջան» ազգային պարկի և դրա պահպանական գոտու տարածքների բնական և մշակութային ժառանգությունը, «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի գործառույթները, պարկի արգելոցային ու ռեկրեացիոն գոտիները, հազվագյուտ և Կարմիր գրքում գրանցված բուսական ու կենդանական տեսակները: Տեղեկատվական նյութերը պետք է լինեն գունավոր տպագրությամբ և բազմալեզու:

Բ Ա Ժ Ի Ն 9. «Դիլիջան» ազգային պարկում կենսաբազմազանության մոնիտորինգի համակարգի ներդրման և իրականացման գործողությունների պլանը

«Դիլիջան» ազգային պարկում կենսաբազմազանության մոնիտորինգի համակարգի ներդրման հիմնական նպատակն է կանխատեսել բնական ու մարդածին ազդեցությունների հետևանքով առաջ եկած գործնթացների զարգացումը և կառավարման անհրաժեշտ միջամտությունների միջոցով նպաստել լանդշաֆտների, բնական միջավայրերի և տեսակների պահպանության բարելավմանը: Ընդ որում՝ էկոհամակարգերի վիճակի փոփոխման կանխատեսման հիմնական մեթոդը պետք է լինի դրանց վիճակի մշտական և պարբերական դիտարկումների տվյալների մշակումը: Տեղավայրի կտրուկ փոփոխման դեպքում (անտառահատում, հողային և շինարարական աշխատանքների անցկացում, հողերի վարում և այլն) կանխատեսումը բարդանում է հնարավոր հետևանքների բազմատարբերակությամբ, սակայն միանգամայն պարզ է, որ նման գործողությունների հիմնական արդյունքը կլինի բնական էկոհամակարգերի դեգրադացիան: Հիմնավոր կանխատեսում կազմելու համար անհրաժեշտ է տվյալներ ստանալ մշտական փորձնական հրապարակներից և տրանսեկտներից: Մարդածին գործոնի ընդհանուր ազդեցության գնահատման համար փորձնական հրապարակները (դրանց չափսերը որոշվում են ստանդարտ մեթոդիկայի համաձայն՝ անտառային էկոհամակարգերում 400 մ² ոչ պակաս, տափաստանային և մարգագետնային էկոհամակարգերում 100 մ²) պետք է վերցվեն էտալոնային տարածքներում և առավել խոցելի հատվածներում: Ընդ որում՝ ցանկալի է ընդգրկել միկրոէկոլոգիական պայմանների հնարավորին չափով մեծ բազմազանություն: Տրանսեկտները պետք է դրվեն բարենպաստ պայմաններում (հաշվի առնելով այս մեթոդի մեծ աշխատատարությունը՝ այն կարելի է կիրառել ազգային պարկի հնարավորություններից ելնելով) հիմնականում կլիմայի փոփոխությունների բնական էկոհամակարգերի վրա ազդեցության գնահատման համար: Ռեկրեացիոն տրոբման ազդեցության, ինչպես նաև արածեցման և ինվազիվ ու էքսպանսիվ խտտաբույսերի պոպուլյացիաների խտության փոփոխման գնահատման համար փորձնական հրապարակները կարող են ունենալ 1 մ² չափս: Ինվազիվ և էքսպանսիվ ծառատեսակների դեպքում փորձնական հրապարակների տարածքը պետք է լինի 100 մ² –ից ոչ պակաս: Միայն բազմամյա պարբերական դիտարկումների արդյունքում կարելի է ճշգրտության և հավանականության բարձր աստիճանով կանխատեսումներ անել էկոհամակարգերի փոփոխման վերաբերյալ:

«Դիլիջան» ազգային պարկում կենսաբազմազանության մոնիտորինգի խնդիրներն են.

- բացահայտել կենսաբանական բազմազանության տեսակային կազմի, տարածվածության, քանակական ցուցանիշների, բնակության վայրերի, կենդանիների միգրացիոն ուղիների առկա վիճակը.
- բացահայտել յուրաքանչյուր էկոհամակարգի և դրա բաղադրիչների վրա մարդածին գործոնների ազդեցությունը.
- գնահատել և կանխատեսել էկոհամակարգերի բաղադրիչների քանակական և որակական փոփոխությունների ընթացքը.
- ապահովել ազգային պարկի ղեկավարությանը անհրաժեշտ տեղեկատվությամբ՝ կառավարչական որոշումների կայացման համար.
- նպաստել կենսապաշարների օգտագործման նորմավորման հիմնավորմանը՝ ըստ ծավալների և ժամկետների.
- նպաստել պարկի վերաբերյալ տեղեկատվական բազայի ստեղծմանը և տեղեկատվական համակարգի անխափան աշխատանքին:

Պարկում կենսաբազմազանության մոնիտորինգի օբյեկտներն են.

1. բուսական ու կենդանական տեսակները (այդ թվում՝ էնդեմիկներ, ռելիկտներ, Կարմիր գրքում ընդգրկված, հազվագյուտ և անհետացող, ինչպես նաև տնտեսապես արժեքավոր տեսակներ և այլն) և դրանց պոպուլյացիաներն ու համակեցությունները, ինչպես նաև համակեցությունների գերիշխող (դոմինանտ) տեսակները.
2. բուսական և կենդանական տեսակների աճելավայրերը, բնադրավայրերը, միգրացիոն ուղիները, տեսակների գոյության համար առանձնահատուկ դեր խաղացող էկոհամակարգերը:

Հաշվի առնելով, որ բնական միջավայրի մոնիտորինգի արդյունքների օգտագործումը թույլ է տալիս ընդունել անմիջական կառավարչական որոշումներ, կենսաբազմազանության մոնիտորինգի համակարգի ներդրումը ազգային պարկում կնպաստի պարկի կառավարման արդյունավետության բարձրացմանը, կենսաբազմազանության վիճակի բարելավմանը, ինչպես նաև Հայաստանի բնության մասին գիտելիքների տարածմանը: «Դիլիջան» ազգային պարկում որպես մոնիտորինգի ինդիկատորներ ընտրվել են հետևյալ էկոհամակարգերը և բույսերի ու կենդանիների առանձին տեսակները (էնդեմիկ, հազվագյուտ, ինվազիվ և էքսպանսիվ):

1. Էկոհամակարգեր.

- հաճարենու անտառներ (Հաղարծին գետի ավազանում).
- կաղնու անտառներ (Խաչարձան).
- կենու պուրակ (Աղավնավանք).
- խառը անտառներ.
- սոճու անտառ (Արեգունու և Փամբակի լեռնաշղթաների լանջերին).
- մերձալպյան մարգագետիններ և բարձրախոտեր.
- ջրածահճային և լճային մերձափնյա էկոհամակարգեր (Գոշալիճ, Պարզլիճ):

2. Բուսական օբյեկտներ

- էնդեմիկ տեսակներ՝ եզնակող Կոզո-Պոլյանսկու (*Bupleurum koso-poljanskyi*), կտավախոտ զանգեզուրի (*Linaria zangezura*) և ձնծաղիկ Միրզոևայի (*Merendera mirzoevae*).
- հազվագյուտ և Կարմիր գրքում գրանցված տեսակներ՝ մահամորմ (*Atropa belladonna*), արքայածաղիկ բլրակային (*Fritillaria collina*), վարդակակաչ գորտնուկանման (*Anemone ranunculoides*), կծկծուկ պարսկական (*Epipactis persica*), գետնամուշկ (*Lycopodium selago*), ջրահավաք օլիմպիական (*Aquilegia olympica*).
- էքսպանսիվ տեսակներ՝ սպիտակածաղիկ սովորական (*Leucanthemum vulgare*), կեղծ դանձլամեր սպիտակ (*Veratrum album*), իշակաթնուկ Սեգիերի (*Euphorbia seguieriana*), մատիտեղ լեռնային (*Polygonum alpinum*).
- ինվազիվ տեսակներ՝ տատասկ ալեհեր (*Cirsium incanum*), տատասկ դաշտային (*Cirsium arvense*), դառնուկ իտալական (*Xanthium italicum*), կոտեմ վայրի (*Cardaria draba*):

3. Կենդանական օբյեկտներ.

- փոռցաշերտի և հողի մակերեսին ապրող անողնաշարավորներ (միջատներ, բազմոտանիներ).
- ցերեկային թիթեռներ.
- ճպուռներ (Գոշալիճ, Պարզ լիճ).
- երկկենցաղներ (ծառագորտ, լճագորտ).
- սողուններ (Ժայռային մողեսներ).
- խոշոր և միջին չափի կաթնասուններ (այծյամ, վարազ, գայլ, լուսան, արջ).
- թռչուններ:

Մոնիտորինգի համակարգը պետք է ընդգրկի ազգային պարկի բոլոր գոտիները՝ արգելոցային, ռելիկտացիոն, տնտեսական, ինչպես նաև պահպանական գոտին: Մեթոդոլոգիական սկզբուքները ազգային պարկի տարբեր գոտիների համար տարբեր են:

«Մևան» և «Դիլիջան» ազգային պարկերում կենսաբազմազանության մոնիտորինգի համակարգի ներդրում» Ծրագրում ներկայացված են մոնիտորինգի իրականացման հիմնական սկզբունքները և մեթոդական ցուցումները, որոնց կիրառումն ապահովելու, ինչպես նաև կենսաբազմազանության մոնիտորինգի իրականացման և ելակետային տվյալների ստացման ու նախնական վերլուծության նպատակով պետք է իրականացվեն հետևյալ գործողությունները (տես նաև՝ Հավելված 1)։

1. ազգային պարկի կառուցվածքում անհրաժեշտ է ստեղծել կենսաբազմազանության մոնիտորինգի իրականացման բաժին, որն անհրաժեշտ է համալրել հետևյալ մասնագետներով. բուսաբաններ (2 հաստիք), կենդանաբաններ (2 հաստիք), հիդրոկենսաբան (1 հաստիք), տվյալների բազաների ստեղծման և վարման ունակություններ ունեցող մեկ մասնագետ: Հեռանկարային պետք է համարել նույն հաստիքային միավորների առկայությունը «Դիլիջան» ազգային պարկի տեղամասերում.
2. համապատասխան կադրերի պատրաստում և վերապատրաստում, որը հնարավորություն կստեղծի տիրապետելու բուսական, կենդանական աշխարհի և ջրային էկոհամակարգերի հետազոտությունների անցկացման մեթոդիկաներին, ճանաչելու պարկում տարածված և Կարմիր գրքերում գրանցված տեսակներին: Այս նպատակով գիտական բաժնի աշխատակիցների մասնակցությամբ դաշտային պայմաններում պետք է փորձարկվի կենսաբազմազանության մոնիտորինգի իրականացման կարճաժամկետ ծրագիրը (Հավելված 3), որը կնպաստի մոնիտորինգի մասին տեսական և գործնական գիտելիքների ամրապնդմանը, հատկապես փորձահրապարակների ընտրման, մոնիտորինգային արձանագրությունների և դաշտային ձևերի կիրառմանն ուղղությամբ.
3. կենսաբազմազանության մոնիտորինգի իրականացման ընթացքում ձեռք բերված տվյալների գրանցման, վերլուծության և համապատասխան տեղեկատվության ապահովման նպատակով անհրաժեշտ է ստեղծել համակարգչային ծրագրային համակարգ.
4. կենսաբազմազանության մոնիտորինգի ելակետային տվյալների ստացման համար շահագրգիռ կողմերի ներգրավում՝ հատկապես բարձր դասարանների աշակերտներին, ուսուցիչներին, ֆերմերներին, որսորդներին և այլն. ազգային պարկի և դրա էկոհամակարգերի վերաբերյալ հասարակայնության իրազեկության բարձրացում: «Դիլիջան» ազգային պարկին հարակից համայնքերում անհրաժեշտ է տարածել կենսաբազմազանության մոնիտորինգի նպատակների և իրականացման ընթացակարգերի, կենսաբազմազանության նշանակության մասին գիտահանրամատչելի տեղեկատվություն՝ բուկլետների, տեղեկատվական թերթիկների, տեսաֆիլմերի, ՉԼՄ-ների միջոցով:

Հարկ է նշել, որ մոնիտորինգային ուսումնասիրությունների և դիտարկումների կատարման համար համապատասխան նյութատեխնիկական բազան ստեղծված է: Բնական պաշարների կառավարման և չքավորության նվազեցման (ԲՊԿՉՆ) Ծրագրի շրջանակներում «Դիլիջան» ազգային պարկին հատկացվել են համակարգիչներ, տպիչներ, սկաներ, պատճենահանող սարքեր, ֆոտո- և տեսախցիկներ, ձեռքի GPS-ներ, դաշտային և լաբորատոր սարքավորումներ, տրանսպորտային միջոցներ: Բացի այդ, մոնիտորինգի արդյունքների հիման վրա կենսաբազմազանության տվյալների բազայի ստեղծման և վարման, ելակետային և վերլուծված տեղեկատվության թվայնացման նպատակով ԲՊԿՉՆ Ծրագրի շրջանակներում պարկի երկու աշխատակիցների համար իրականացվել է երկրատեղեկատվական համակարգի (GIS) ուսուցում՝ համապատասխան GIS-ծրագրային և սարքավորումների ապահովմամբ: Այս ամենը վկայում են, որ «Դիլիջան» ազգային պարկի նոր, կենսաբազմազանության մոնիտորինգի իրականացման բաժնի, կառուցվածքային միավորի ստեղծումը անհրաժեշտ է և իրատեսական:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 1.

«Դիլիջան» ազգային պարկի և «Դիլիջան» ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպության կառավարման բարելավման գործողությունների պլան

h/h	Գործողություն	Կատարման ժամկետ	Կատարող	Ֆինանսավորման աղբյուր
1.	Իրավական ակտերի նախագծերի մշակում			
1.	Համայնքների վարչական սահմաններում գտնվող պետական սեփականության անտառների կառավարման բարելավման, ինչպես նաև գյուղատնտեսական կենդանիներին դեպի ամառային արտավայրեր ազգային պարկի տարածքով տարանցիկ տեղափոխման նպատակով՝ «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի և համայնքների միջև համագործակցության պայմանագրերի տեքստերի նախագծերի մշակում:	2007 թ.	ԲՊԿՉՆ ԾԻԳ	ԲՊԿՉՆ ծրագրի դրամաշնորհային միջոցներ
2.	«Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի և համայնքների միջև համագործակցության պայմանագրերի ստորագրում և պայմանագրային պարտավորությունների իրականացում:	2007-2011 թթ.	«Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ. Համայնքներ	«Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի սեփական միջոցներ. Համայնքային բյուջե
3.	«Դիլիջան» ազգային պարկի տարածքա-գործառնական գոտիների կանոնակարգերի նախագծերի մշակում և արգելոցային գոտիների մուտքավճարների սահմանման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում:	2007 թ.	ԲՊԿՉՆ ԾԻԳ	ԲՊԿՉՆ ծրագրի դրամաշնորհային միջոցներ
4.	«Դիլիջան» ազգային պարկի տարածքա-գործառնական գոտիների կանոնակարգերի նախագծերի հաստատում և դրանց իրականացում, արգելոցային գոտիների մուտքավճարների սահմանում և կիրառում:	2007 թ., կիրառումը 2008 թ.-ից	Բնապահպանության նախարարություն. «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ	Պետ. բյուջե. «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի սեփական միջոցներ
5.	«Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի հսկողական գործառնություններ իրականացնող անձնակազմի թվաքանակի հաշվարկման նորմաների, ամբողջ անձնակազմի ծառայողական պարտականությունների և ներկայացվող պահանջների սահմանման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում:	2007 թ.	ԲՊԿՉՆ ԾԻԳ	ԲՊԿՉՆ ծրագրի դրամաշնորհային միջոցներ
6.	Հսկողական գործառնություններ իրականացնող անձնակազմի թվաքանակի հաշվարկման նորմաների, ամբողջ անձնակազմի ծառայողական պարտականությունների և ներկայացվող պահանջների սահմանում:	2007 թ.	Բնապահպանության նախարարություն. «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ	Պետ. բյուջե. «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի սեփական միջոցներ
7.	«Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի հսկողական գործառնություններ իրականացնող անձնակազմի աշխատավարձերի վերանայման, խրախուսման համակարգի ստեղծման և շուրջօրյա հսկողության համակարգի ներդրման վերաբերյալ միջնաժամկետ ծրագրի նախագծի մշակում:	2007 թ.	ԲՊԿՉՆ ԾԻԳ	ԲՊԿՉՆ ծրագրի դրամաշնորհային միջոցներ
8.	«Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի հսկողական գործառնություններ իրականացնող անձնակազմի աշխատավարձերի վերանայման, խրախուսման համակարգի ստեղծման և շուրջօրյա հսկողության համակարգի ներդրման վերաբերյալ միջնաժամկետ ծրագրի իրականացում:	2008-2011 թթ.	Բնապահպանության նախարարություն. «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ	Պետ. բյուջե. «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի սեփական միջոցներ
9.	Անտառային ճանապարհների, հակահրդեհային հանքայնացված շերտերի կառուցման, վերանորոգման և խնամքի աշխատանքների իրականացման միավոր գնային արժեքների որոշման վերաբերյալ առաջարկությունների մշակում:	2007	ԲՊԿՉՆ ԾԻԳ	ԲՊԿՉՆ ծրագրի դրամաշնորհային միջոցներ

10.	Անտառային ճանապարհների, հակահրդեհային հանքայնացված շերտերի կառուցման, վերանորոգման և խնամքի աշխատանքների իրականացման միավոր գնային արժեքների հաստատում և կիրառում:	2007 թ., կիրառումը 2008 թ.-ից	Բնապահպանության նախարարություն. «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ	Պետ. բյուջե. «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի սեփական միջոցներ
11.	«Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի գիտահետազոտական աշխատանքների թեմատիկ պլանավորման, թեմաների մշակման և դրանց հաստատման կարգի նախագծի մշակում:	2007 թ.	ԲՊԿՉՆ ԾԻԳ.	ԲՊԿՉՆ ծրագրի դրամաշնորհային միջոցներ
12.	Գիտահետազոտական աշխատանքների թեմատիկ պլանավորման, թեմաների մշակման և դրանց հաստատման կարգի սահմանում:	2007 թ., կիրառումը 2008 թ.-ից	Բնապահպանության նախարարություն	Պետ. բյուջե
2.	«Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կառուցվածքային բարեփոխումներ			
1.	«Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի նոր կառուցվածքի, այդ թվում՝ կենսաբազմազանության մոնիտորինգի իրականացման և տուրիզմի ու ռեկրեացիայի կառավարման բաժնիների ստեղծման, դրանից բխող աշխատողների նոր թվաքանակի վերաբերյալ առաջարկությունների մշակում:	2007 թ.	ԲՊԿՉՆ ԾԻԳ.	ԲՊԿՉՆ ծրագրի դրամաշնորհային միջոցներ
2.	«Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի նոր կառուցվածքի և դրանից բխող աշխատողների թվաքանակի հաստատում:	2007 թ., կիրառումը 2008 թ.-ից	Բնապահպանության նախարարություն. «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ	Պետ. բյուջե
3.	«Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ում խորհրդատվական մարմնի ստեղծում:	2007 թ.	«Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ	«Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի սեփական միջոցներ
4.	«Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ում այցելուների կենտրոնի ստեղծման, դրա կանոնադրության նախագծի և աշխատողների թվաքանակի վերաբերյալ առաջարկությունների մշակում:	2007 թ.	ԲՊԿՉՆ ԾԻԳ.	ԲՊԿՉՆ ծրագրի դրամաշնորհային միջոցներ
5.	Այցելուների կենտրոնի ստեղծում, կանոնադրության հաստատում և աշխատողների թվաքանակի սահմանում:	2007 թ., կիրառումը 2008 թ.-ից	Բնապահպանության նախարարություն. «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ	Պետ. բյուջե. «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի սեփական միջոցներ
6.	«Դիլիջան» ազգային պարկի Գ-ոչ տեղամասի կարգավիճակի վերանայում, Աղավնավանք և Խաչարձան տեղամասերի ստեղծման, ներառյալ դրանց տեղադրության և աշխատողների թվաքանակի վերաբերյալ առաջարկությունների մշակում:	2007	ԲՊԿՉՆ ԾԻԳ.	ԲՊԿՉՆ ծրագրի դրամաշնորհային միջոցներ
7.	Աղավնավանք և Խաչարձան տեղամասերի ստեղծում և աշխատողների թվաքանակի սահմանում:	2007 թ., կիրառումը 2008 թ.-ից	Բնապահպանության նախարարություն. «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ	Պետ. բյուջե. «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի սեփական միջոցներ
3.	Քարտեզագրական աշխատանքներ			
1.	Գեոդեզիական հանույթի միջոցով «Դիլիջան» ազգային պարկին հարակից համայնքների վարչական սահմաններում գտնվող պետական սեփականության անտառային հողերի սահմանների ճշգրտում, քարտեզագրում և դրանց կատեգորիայի փոփոխության վերաբերյալ առաջարկության ներկայացում.	2007 թ.	ԲՊԿՉՆ ԾԻԳ.	ԲՊԿՉՆ ծրագրի դրամաշնորհային միջոցներ
2.	«Դիլիջան» ազգային պարկին հարակից համայնքների վարչական սահմաններում գտնվող պետական սեփականության անտառային հողերի սահմանների հաստատում և դրանց կատեգորիայի փոփոխության իրականացում:	2007-2008 թթ.	ՀՀ Կառավարություն. Բնապահպանության նախարարություն	Պետ. բյուջե

4. Կադրերի մասնագիտական որակավորման բարձրացում			
1.	GIS համակարգում տվյալների բազաների շահագործման ուսուցում:	2007	ԲՊԿՉՆ ԾԻԳ ԲՊԿՉՆ ծրագրի դրամաշնորհային միջոցներ
2.	Կադրերի վերապատրաստման կարճաժամկետ և երկարաժամկետ ծրագրերի նախագծերի մշակում:	2007 թ.	ԲՊԿՉՆ ԾԻԳ ԲՊԿՉՆ ծրագրի դրամաշնորհային միջոցներ
3.	Կադրերի վերապատրաստման կարճաժամկետ և երկարաժամկետ ծրագրերի հաստատում և իրականացում:	2007 թ., կիրառումը 2008 թ.-ից	Բնապահպանության նախարարություն Պետ.բյուջե
4.	Կենսաբազմազանության մոնիտորինգի իրականացման նպատակով կադրերի վերապատրաստում (ըստ Հավելված 3-ում ներկայացված ծրագրի):	2007 թ.	ԲՊԿՉՆ ԾԻԳ ԲՊԿՉՆ ծրագրի դրամաշնորհային միջոցներ
5. «Դիվիզան» ազգային պարկի անտառային տարածքների կառավարման բարելավում			
1.	Ազգային պարկի տեղամասերի անտառային տվյալների բանկի, անտառզննահատման հատվածային նկարագրման թեմատիկ քարտեզների, գրքերի պատրաստում, տպագրում և տրամադրում «Դիվիզան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ին:	2007	ԲՊԿՉՆ ԾԻԳ ԲՊԿՉՆ ծրագրի դրամաշնորհային միջոցներ
2.	Անտառվերականգնման միջոցառումների նախագծերի պատրաստում, շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության իրականացում և ՀՀ Բնապահպանության նախարարության հաստատման ներկայացում:	2007	ԲՊԿՉՆ ԾԻԳ ԲՊԿՉՆ ծրագրի դրամաշնորհային միջոցներ
3.	Անտառվերականգնման միջոցառումների իրականացում:	2008-2011	«Դիվիզան» ազգային պարկ» ՊՈԱԿ Պետ. բյուջե. «Դիվիզան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի սեփական միջոցներ
4.	Համաձայն սույն կառավարման պլանի՝ անտառպահպանական միջոցառումների իրականացում:	2007-2011	«Դիվիզան» ազգային պարկ» ՊՈԱԿ Պետ. բյուջե. «Դիվիզան» ազգային պարկ» ՊՈԱԿ
5.	Շամախյան տեղամասի 33 քառակուսու 20-րդ հատվածում 1 հա տնկարանի հիմնում:	2007	ԲՊԿՉՆ ԾԻԳ ԲՊԿՉՆ ծրագրի դրամաշնորհային միջոցներ
6. Տուրիզմի և ռեկրեացիայի զարգացում			
1.	Ազգային պարկի և դրա պահպանական գոտու տարածքներում տուրիզմի և ռեկրեացիայի, այդ թվում՝ տուրիստական և ռեկրեացիոն ենթակառուցվածքների զարգացման ծրագրի մշակում:	2007-2008 թթ.	ԲՊԿՉՆ ԾԻԳ ԲՊԿՉՆ ծրագրի դրամաշնորհային միջոցներ
2.	Ազգային պարկի և դրա պահպանական գոտու տարածքներում տուրիզմի և ռեկրեացիայի զարգացման ծրագրի իրականացում:	2008-2011 թթ.	«Դիվիզան» ազգային պարկ» ՊՈԱԿ. հարակից համայնքներ, համապատասխան կազմակերպություններ (համաձայնությամբ) «Դիվիզան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի, հարակից համայնքների, համապատասխան կազմակերպությունների սեփական միջոցներ
3.	Տուրիզմի և ռեկրեացիայի շրջակա միջավայրի վրա և սոցիալական ազդեցության գնահատման մոնիտորինգային ծրագրի մշակում:	2007 թ.	ԲՊԿՉՆ ԾԻԳ ԲՊԿՉՆ ծրագրի դրամաշնորհային միջոցներ
4.	Տուրիզմի և ռեկրեացիայի շրջակա միջավայրի վրա և սոցիալական ազդեցության գնահատման մոնիտորինգային ծրագրի հաստատում և իրականացում:	2007 թ., կիրառումը 2008 թ.-ից	«Դիվիզան» ազգային պարկ» ՊՈԱԿ Պետ. բյուջե. «Դիվիզան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի սեփական միջոցներ
5.	«Դիվիզան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ում արբանյակային ինտերնետային կապի և համակարգչային ներքին ցանցի տեղադրում	2007 թ.	ԲՊԿՉՆ ԾԻԳ ԲՊԿՉՆ ծրագրի դրամաշնորհային միջոցներ

7. Կենսաբազմազանության մոնիտորինգի համակարգի ներդրում				
1.	Կենսաբազմազանության մոնիտորինգի համակարգչային ծրագրային համակարգի ստեղծում և տեղադրում:	2007թ.	ԲՊԿՉՆ ԾԻԳ	ԲՊԿՉՆ ծրագրի դրամաշնորհային միջոցներ
2.	Մոնիտորինգի արդյունքների հիման վրա կենսաբազմազանության տվյալների բազայի ստեղծում:	2008-2011 թթ.	Բնապահպանության նախարարություն. «Գիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ	Պետ.բյուջե «Գիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի սեփական միջոցներ
3.	Կենսաբազմազանության մոնիտորինգի գործընթացին համայնքների ներկայացուցիչների ներգրավման ծրագրի մշակում:	2007 թ.	ԲՊԿՉՆ ԾԻԳ	ԲՊԿՉՆ ծրագրի դրամաշնորհային միջոցներ
4.	Կենսաբազմազանության մոնիտորինգի գործընթացին համայնքների ներկայացուցիչների ներգրավման ծրագրի իրականացում:	2008-2011 թթ.	«Գիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ	«Գիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի սեփական միջոցներ
8. Ազգաբնակչության իրազեկության բարձրացում				
1.	«Գիլիջան» ազգային պարկի, այդ թվում՝ կենսաբազմազանության մոնիտորինգի գործընթացի վերաբերյալ ազգաբնակչության իրազեկության բարձրացման, կարճաժամկետ և երկարաժամկետ ծրագրերի նախագծերի մշակում:	2007 թ.	ԲՊԿՉՆ ԾԻԳ	ԲՊԿՉՆ ծրագրի դրամաշնորհային միջոցներ
2.	Ազգաբնակչության իրազեկության բարձրացման կարճաժամկետ և երկարաժամկետ ծրագրերի իրականացում:	2008-2011 թթ.	«Գիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ	Պետ.բյուջե «Գիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի սեփական միջոցներ
3.	Ազգային պարկի տարածքով գյուղատնտեսական կենդանիներին դեպի ամառային արոտավայրեր տարանցիկ տեղափոխման երթուղիների վերաբերյալ բնակչության իրազեկում:	2007 թ.	«Գիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ	«Գիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի սեփական միջոցներ
4.	Ազգային պարկում տուրիզմին և ռեկրեացիային վերաբերող տեղեկատվական նյութերի մշակում, հրատարակում և «Գիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ին տրամադրում:	2007	ԲՊԿՉՆ ԾԻԳ	ԲՊԿՉՆ ծրագրի դրամաշնորհային միջոցներ
9. Շինարարական աշխատանքներ				
1.	Գոշ, Հաղարծին և Շամախյան տեղամասերում արգելոցային գոտիներում ցանկապատման նախագծման և տեղադրման աշխատանքներ:	2007 - 2008 թ.	ԲՊԿՉՆ ԾԻԳ	ԲՊԿՉՆ ծրագրի դրամաշնորհային միջոցներ
2.	«Գիլիջան» ԱՊ- ում արգելափակոցների նախագծում և տեղադրում:	2007 - 2008 թ.	ԲՊԿՉՆ ԾԻԳ	ԲՊԿՉՆ ծրագրի դրամաշնորհային միջոցներ
3.	Գյուղատնտեսական կենդանիների տարանցիկ տեղափոխման երթուղիների դժվարանցանելի հատվածների մասնակի վերանորոգման աշխատանքների նախագծում:	2007 թ.	ԲՊԿՉՆ ԾԻԳ	ԲՊԿՉՆ ծրագրի դրամաշնորհային միջոցներ
4.	Գյուղատնտեսական կենդանիների տարանցիկ տեղափոխման երթուղիների դժվարանցանելի հատվածների մասնակի վերանորոգման աշխատանքների իրականացում:	2008 թ.	Համայնքներ. «Գիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ	Համայնքների բյուջե. «Գիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի սեփական միջոցներ
5.	Ամառային արոտավայրերում ջրաբքիացման կետերի կառուցման նախագծում:	2007 թ.	ԲՊԿՉՆ ԾԻԳ	ԲՊԿՉՆ ծրագրի դրամաշնորհային միջոցներ
6.	Ամառային արոտավայրերում ջրաբքիացման կետերի կառուցում	2008 թ.	Համայնքներ. «Գիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ	Համայնքների բյուջե. «Գիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի սեփական միջոցներ

ՀԱՎԵԼՎԱԾ 2.

Գույքագրում անցած բնական և մշակութային հուշարձանները, դրանց կարգավիճակը և տուրիզմի զարգացման առաջարկությունները

Հուշարձանի անվանումը	Վայրը / հասանելիությունը	Հուշարձանի կարգավիճակը (1- Լավ / 2-Միջին /3-Վատ)	Պահպանման/բարելավման միջոցառումներ	Հուշարձանի կարևորությունը տուրիզմի տեսանկյունից (1-Բարձր / 2-Միջին / 3-Ցածր)
Պարզ լիճ	գտնվում է Գիլիջանից 9 կմ դեպի հյուսիս-արևելք՝ 1340 մ ծովի մակարդակից բարձր, Արեգունի լեռների հյուսիսային թեքության վրա/ հեշտ հասանելի	1 լիճը գտնվում է լավ վիճակում, իսկ մերձակա տարածքները մաքուր են աղբից	դեպի լիճ տանող ճանապարհը պահանջում է հակասողանքային միջոցառումների իրականացում	1 լիճը՝ հարմար դիրքի շնորհիվ, կարող է ընդգրկվել Հաղարծին տանող տուրիստական երթուղիներում
Գ-ոշալիճ	գտնվում է Գ-ոշ գյուղից 1.5 կմ հեռավորության վրա, դեպի հարավ-արևմուտք՝ 1190 մետր բարձրության վրա / հեշտ հասանելի	1 լիճը գտնվում է լավ վիճակում, իսկ մերձակա տարածքները մաքուր են աղբից	դեպի լիճ տանող ճանապարհը անհրաժեշտ է վերանորոգել	1 լիճը՝ հարմար դիրքի շնորհիվ, կարող է ընդգրկվել Գ-ոշավանք տանող տուրիստական երթուղիներում
Քարաբլիթներ	գտնվում են Ներքին Գ-ոշ գյուղից 0.2 կմ դեպի հարավ-արևմուտք՝ դեպի Գ-ոշավանք տանող ճանապարհի աջ կողմում և անմիջապես երևում է Ներքին Գ-ոշ գյուղն անցնելուց հետո թեքվելով դեպի վանք/ հեշտ հասանելի	1 հուշարձանը գտնվում է լավ վիճակում, իսկ մերձակա տարածքները մաքուր են աղբից:	Չկա	1 բնական հուշարձանը՝ հարմար դիրքի շնորհիվ, կարող է ընդգրկվել Գ-ոշավանք տանող տուրիստական երթուղիներում
Ակոսված քարեր	գտնվում է Հովք գյուղից 6 կմ դեպի հյուսիս-արևմուտք՝ Իջևանի լեռնաշղթայի Հովք լեռան արևելյան մասում: Այն հասանելի է Հովք և Հաղարծին գյուղերից լեռնային ճանապարհներով, որոնք անցանելի չեն մեքենաների համար / դժվար հասանելի է, քանի որ գտնվում է մոտ 10 կմ հեռավորության վրա Իջևանի ավտոմայրուղուց: Խորհուրդ է տրվում այցելել տեղական ուղեկցողի հետ:	2 ընդհանուր առմամբ հուշարձանը բարվոք վիճակում է, իսկ տարածքը՝ մաքուր	Չկա	1 խորհուրդ է տրվում ներառել այս հուշարձանը տուրիստական երթուղիներում՝ տուրիստների ընձեռնելով տարածքով քայլելու, բնությանը հիանալու և պատմական հուշարձանների հետ ծանոթանալու հնարավորություն
ՀՈՎԶ-1 քարանձավներ	գտնվում է Հովք և Հաղարծին գյուղերից 6-8 կմ դեպի հյուսիս-արևմուտք՝ 2 050 մետր ծովի մակարդակից բարձր: Կարելի է հասնել լեռնային ճանապարհներով՝ Հովք և Հաղարծին գյուղերից/ դժվար հասանելի է, քանի որ գտնվում է մոտ 10 կմ հեռավորության վրա Իջևանի ավտոմայրուղուց: Խորհուրդ է տրվում այցելել տեղական ուղեկցողի հետ:	1 ընդհանուր առմամբ հուշարձանը բարվոք վիճակում է, իսկ տարածքը՝ մաքուր	Չկա	1 խորհուրդ է տրվում ներառել այս հուշարձանը հնագիտական տուրիզմի բնագավառում

<p>Հաղարծինի Սբ. Սարգիս եկեղեցի</p>	<p>գտնվում է սարի լանջին՝ Հաղարծին գյուղի հյուսիսային հատվածի վերևում: Հասանելի է Գիլիջան-Իջևան մայրուղուց գյուղական ճանապարհով 600 մ դեպի ձախ մինչև սարի գագաթը և թեքվելով հողային ճանապարհով դեպի Իջևանի լեռնաշղթա/ հեշտ հասանելի</p>	<p>3 հուշարձանը գտնվում է լավ վիճակում, իսկ տարածքը՝ մաքուր:</p>	<p>Չկա</p>	<p>3 մատուռը չի դասավում կարևորագույն պատմամշակութային հուշարձանների շարքին, սակայն ներառված է տուրիստական երթուղիներում: Այստեղից բացվում է Աղստև գետի հովտի հիանալի պատկերը՝ Գիլիջանից մինչև Իջևան</p>
<p>Աղավնավանքի Սբ. Աստվածածին Անապատ եկեղեցի</p>	<p>գտնվում է Աղավնավանք գյուղից 2.5 կմ դեպի հյուսիս-արևելք՝ կենու պուրակում, Աղավնավանք գետակի աջ ափին / հասանելի է հողային ճանապարհով, որը սկսվում է գյուղի եզրից: Անձրևային եղանակներին ճանապարհը տրանսպորտով անանցանելի է</p>	<p>2 չնայած իր հնությանը, հուշարձանը կանգուն է և համեմատաբար լավ պահպանված: Վնասվել են միայն քիվի գեղագարդարված, վեղարի և տանիքի սրբատաշ քարերը</p>	<p>պահանջվում է հիմնովին վերանորոգում</p>	<p>2 շնորհիվ իր ներդաշնակությանը բնության հետ՝ խորհուրդ է տրվում ներառել հուշարձանը պատմամշակութային տուրիստական երթուղիների ցանկում</p>
<p>Ջուխտակ վանք</p>	<p>գտնվում է Գիլիջանի հյուսիս-արևմուտքում, նախկին Շամախյան գյուղից 2.1 կմ դեպի հյուսիս-արևմուտք, Բլրան գետի ձախ ափին, Խալ Խալլու սարի հարավային լանջին/ հեշտ հասանելի է: Կարելի է օգտագործել թե արևմտյան, թե արևելյան ճանապարհները անտառի միջով, որոնք շրջապատում են հիմնական ճանապարհի դժվարին հատվածները</p>	<p>2 հուշարձանի տարածքը մաքուր է, սակայն եկեղեցին և ճանապարհը գտնվում են Գիլիջանի ակտիվ հողասահքերի գոտում, որի շնորհիվ ճանապարհի որոշ հատվածներ ոչնչացվել են: Առավել վտանգավոր է հարավային ճանապարհը, որը կտրուկ կտրվում է և հատում խորը անդունդին: Խորհուրդ է տրվում տեղակայել ցուցանակներ ճանապարհների երկարությամբ</p>	<p>անհրաժեշտ է ուսումնասիրել տարածքի ինժինեռա-երկրաբանական վիճակը՝ բացահայտելու համար այն բնական և տեխնիկական պայմանները, որոնք նպաստում են հողասահքերի ակտիվացմանը, ինչպես նաև մշակել և իրականացնել պահպանման գործողություններ</p>	<p>2 հուշարձանի դիրքը հարմար է ներառելու այն Հաղարծին և Գ-ոշավանք տանող տուրիստական երթուղիներում</p>
<p>Մաթոսավանք</p>	<p>գտնվում է Գիլիջանի արևմուտքում՝ նախկին Շամախյան գյուղից 2.5 կմ դեպի արևմուտք, Բլրան գետի անտառածածկ աջ ափին՝ Ջուխտակ վանքի դիմաց և Մաթոսի բնակավայրի տարածքում/ հեշտ հասանելի է անցնելով գետի աջ ափը՝ Հանքային ջրերի գործարանի մոտով: Մուտքը մեքենաներով ցանկալի չէ՝ հատկապես խոնավ եղանակին</p>	<p>2 տարածքը մաքուր է, սակայն պարբերաբար ենթարկվում է ոսկեգողերի հարձակումներին: Ինտենսիվ անտառահատումները փչացրել են տարածքի գեղատեսիլ պատկերը: Հուշարձանը գտնվում է ակտիվ հողասահքերի գոտում, որը դեռևս չի սպառնում շինություններին, բայց վտանգը կա</p>	<p>հուշարձանը պահանջում է հիմնովին վերանորոգում, ինչպես նաև նախընտրելի է վերանորոգել դեպի հուշարձան տանող ճանապարհը</p>	<p>2 հուշարձանի դիրքը հարմար է ներառելու այն Հաղարծին և Գ-ոշավանք տանող տուրիստական երթուղիներում</p>

<p>Հաղարծին վանք</p>	<p>գտնվում է Թեղուտ գյուղից 6 կմ դեպի հյուսիս-արևմուտք՝ Իջևանի լեռնաշղթայի հարավ-արևմտյան մասերում, Հաղարծին գետի գեղատեսիլ կիրճում, Հաղարծին և Մեծ Աղբյուր գետերի հարթավայրի կենտրոնական մասում/ հեշտ հասանելի է ասֆալտապատ ճանապարհով՝ Թեղուտ գյուղի և անտառի միջով:</p>	<p>1 հուշարձանը լավ պահպանված է, տարածքը՝ մաքուր: Մբ. Աստվածածին եկեղեցին գործող է: Գեպի վանք տանող ճանապարհը անցնում է Հաղարծին գետի խորը կիրճի ու միջնադարյան բնակավայրի միջով, որի հետքերը պահպանվել են առ այսօր</p>	<p>անհրաժեշտ է վերանորոգել հողասահքերից վնասված ճանապարհի հատվածները: Պետք է վերացնել Սեղանատան մետաղական ծածկը, որը չի համապատասխանում հուշարձանի պատմական տեսքին</p>	<p>1 ընդհանուր առմամբ, Հաղարծինի հուշարձանը ընգրկված է Հայաստանի կարևորագույն մշակութային հուշարձանների ցանկում: Նոր Գետիկի կամ Գոշավանքի հետ միասին այն կազմում է «Դիլիջան» ազգային պարկի ամենատարածված տուրիստական վայրերից մեկը</p>
<p>Նոր Գետիկ վանք կամ Գոշավանք</p>	<p>գտնվում է Ներքին Գոշ գյուղի հյուսիսային մասում՝ անտառածածկ լանջերով շրջապատված փոքր հարթավայրի վրա, Գոշ գետի ձախ լանջին, որը միանում է Գետիկ գետին: Գեպի հուշարձան տանող ճանապարհները վերանորոգվել են և գտնվում են բարվոք վիճակում: Հուշարձանը գտնվում է Դիլիջանից մոտ 20 կմ հեռավորության վրա/ հեշտ հասանելի է:</p>	<p>1 1955-1968 և 1978 թվականներին հուշարձանը վերանորոգվել է: 1971 թվականին ստեղծվել է փոքր թանգարան: Ընդհանուր առմամբ հուշարձանի տարածքը լավ պահպանված է</p>	<p>գոյություն ունեն ավտոկանգառ և զուգարան, սակայն դրանք հեռու են միջազգային չափանիշներից: Ցանկալի կլինեք մաքրել հուշարձանի տարածքը անցանկալի իրերից և քարերից, ինչպես նաև համարել գրադարանը նոր նմուշներով և ավելի բարեկարգել այն</p>	<p>1 Հաղարծինի հետ միասին Նոր Գետիկ հուշարձանը կազմում է ոչ միայն «Դիլիջան» ազգային պարկի, այլև Հայաստանի ամենաայցելվող վայրերից մեկը: Այն ազգային պարկի հիմնական տուրիստական կենտրոններից մեկն է</p>
<p>Աղավնավանքի մետաղաձուլական համալիր</p>	<p>գտնվում է Աղավնավանք գյուղից 300-400 մ հյուսիս՝, Գետիկի վտակներից մեկի աջ ափին և մատչելի է գյուղամիջյան ճանապարհով / հեշտ հասանելի</p>	<p>3 ընդհանուր առմամբ համալիրը գտնվում է բարվոք վիճակում, սակայն ենթարկվում է մարդածին գործոնների ազդեցությանը</p>	<p>անհրաժեշտ է պաշտպանել տարածքը ժամանակակից մարդածին գործոնների ազդեցությունից</p>	<p>3 հուշարձանը, հանդիսանալով մի ինքնատիպ ու գիտա-ճանաչողական կարևոր նշանակություն ունեցող նմուշ, Հյուսիսային Հայաստանի միջնադարյան արտադրական համալիրների շարքում կարող է ուսումնասիրվել և պեղվել հնագիտական տուրիզմ կազմակերպելու նպատակով</p>
<p>Աղավնավանքի կամուրջ</p>	<p>գտնվում է Աղավնավանք գյուղի հարավային եզրին, Գոշ-Ճամբարակ ավտոխճուղուց անմիջապես աջ՝ Գետիկ գետի վրա կառուցված նոր կամրջի անմիջական հարևանությամբ/ հեշտ հասանելի է</p>	<p>3 գտնվում է ոչ այնքան լավ վիճակում, քանի որ մասամբ ավերված է</p>	<p>Անհրաժեշտ է հուշարձանի լիարժեք վերականգնում</p>	<p>2 հուշարձանը կարելի է ընդգրկել Գետիկի հովտի հուշարձաններին ծանոթացնելու նպատակով նախատեսված երթուղիներում՝ պատմա-մշակութային տուրիզմ կազմակերպելիս, որպես միջնադարյան ինժեներա-կոմունիկացիոն մտածելակերպի մի համեստ նմուշ</p>

Կենսաբազմազանության մոնիտորինգի համակարգը և դրա ներդրումը «Դիլիջան» ազգային պարկում

Ուսումնական ծրագիր

Դասընթացի նպատակը

Մասնակիցներին տալ տեսական և գործնական գիտելիքներ կենսաբազմազանության մոնիտորինգի համակարգի, դրա անհրաժեշտության, կարևորության և ընթացքի վերաբերյալ, որպեսզի հնարավորություն ստեղծվի ներդնել և իրականացնել կենսաբազմազանության մոնիտորինգը ազգային պարկի տարածքում՝ կենսաբազմազանության կառավարման արդյունավետությունը, պահպանությունը և կայուն օգտագործումը բարելավելու համար:

Ակնկալվող արդյունքները

Մասնակիցները հնարավորություն կստանան.

- Հավաքագրել ելակետային տվյալներ ազգային պարկի կենսաբազմազանության վիճակի վերաբերյալ;
- մուտքագրել, մշակել և վերլուծել տվյալները ազգային պարկի կենսաբազմազանության մոնիտորինգի տեղեկատվական համակարգում;
- գնահատել և բացահայտել ֆլորայի ու ֆաունայի փոփոխությունները, դրանց վիճակի և զարգացման ընթացքի բարելավման նպատակով՝ համապատասխան կառավարչական որոշումներ ընդունելու և տեղեկատվությունը տարածելու համար:

Դասընթացի տևողությունը՝ 5 օր

Անցկացման վայրը

Դիլիջան ազգային պարկի կենտրոնական գրասենյակ (դասախոսություններ), Պարզ լիճ և շրջակայքի անտառային տարածք (դաշտային գործնական աշխատանք) և սոճու անտառ Դիլիջան - Վանաձոր մայրուղու 10-րդ կմ (դաշտային գործնական աշխատանք):

Մասնակիցներ

Ազգային պարկի գիտական բաժնի անձնակազմ:

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԹԵՄԱՆԵՐԸ ԸՍՏ ՕՐԵՐԻ ԵՎ ԺԱՄԵՐԻ

Օր, ժամ	Թեմա
Օր I	
10.00-13.00	<p>Թեմա 1. Ծանոթացում Էկոլոգիական մոնիտորինգի համակարգին</p> <ul style="list-style-type: none"> • Մոնիտորինգը որպես դիտարկումների, գնահատման և կանխատեսման համակարգ; • Ծանոթացում կենսաբազմազանության մոնիտորինգի հետ; • Կենսաբանական բազմազանության մասին կոնվենցիայի պահանջները կենսաբազմազանության մոնիտորինգի վերաբերյալ; • Միջազգային փորձը կենսաբազմազանության մոնիտորինգի վերաբերյալ:
13.00-14.00	Ընդմիջում
14.00-17.30	<p>Թեմա 2. Կենսաբազմազանության մոնիտորինգի համակարգի հիմնադրման և իրականացման անհրաժեշտությունը</p> <ul style="list-style-type: none"> • Հայաստանի բնության հատուկ պահպանվող տարածքների համակարգը; • «Դիլիջան» ազգային պարկի կենսաբազմազանությանը սպառնացող բնական և մարդածին ազդեցությունները; • Կենսաբազմազանության մոնիտորինգի կարևորությունը «Դիլիջան» ազգային պարկի համար:

Օր II	
10.00-13.00	<p>Թեմա 3. «Դիլիջան» ազգային պարկի Ֆլորայի և Ֆաունայի առկա տվյալների վերլուծություն</p> <ul style="list-style-type: none"> • Պարկի ֆունկցիոնալ գոտիավորում; • Ազգային պարկի կենսաբանական բազմազանությունը; • Էնդեմիկ, ռելիկտային, հազվագյուտ և Կարմիր գրքում գրանցված տեսակներ; • Ազգային պարկի հիմնական էկոհամակարգերը
13.00-14.00	Ընդմիջում
14.00-17.30	<p>Թեմա 4. Կենսաբազմազանության մոնիտորինգի առանձնահատկությունները և ներդրման մեխանիզմները ազգային պարկում</p> <ul style="list-style-type: none"> • Կենսաբազմազանության մոնիտորինգի առանձնահատկությունները; • Կենսաբազմազանության մոնիտորինգի ընդհանուր մեխանիզմները; • Օրենսդրական դաշտ և ինստիտուցիոնալ կառուցվածք:
Օր III	
10.00-13.00	<p>Թեմա 5. Կենսաբազմազանության մոնիտորինգի համակարգի ներդրման մեթոդաբանությունը</p> <ul style="list-style-type: none"> • Կենսաբազմազանության մոնիտորինգի մեթոդաբանության ընդհանուր սկզբունքները; • Կենսաբազմազանության մոնիտորինգի օբյեկտները ազգային պարկում; • Ինդիկատորներ
13.00-14.00	Ընդմիջում
ժամ 14.00-17.30	<p>Թեմա 6. Կենսաբազմազանության մոնիտորինգի արձանագրություններ և դաշտային ձևեր</p> <ul style="list-style-type: none"> • Մոնիտորինգի արձանագրություններ; • Դաշտային ձևեր; • Կենսաբազմազանության մոնիտորինգի մոդելի օրինակի փորձարկում
Օր IV	
10.00-18.00	<p>Թեմա 7. Կենսաբազմազանության մոնիտորինգի մոդելի փորձարկում դաշտում</p> <ul style="list-style-type: none"> • Դաշտային գործնական աշխատանք. Պարզ լիճ և շրջակա անտառ; • Զննարկում
Օր V	
10.00-13.00	<p>Թեմա 7. Կենսաբազմազանության մոնիտորինգի մոդելի փորձարկում դաշտում</p> <ul style="list-style-type: none"> • Դաշտային գործնական աշխատանք. սոճու անտառ Դիլիջանի շրջակայքում; • Զննարկում
13.00-14.00	Ընդմիջում
ժամ 14.00-17.00	Դասընթացի ամփոփում

Քարտեզ 1. Ռեկոնֆի

Քարտեզ 2. Չրագրությունը

Քարտեզ 3. Կարմիր գրքում գրանցված առավել ուշադրության արժանի և էնդեմիկ բուսատեսակների բաշխվածությունը

Քարտեզ 4. Դեղաբույսերի բաշխվածությունը

Քարտեզ 5. Ուտեղի բույսերի բաշխվածությունը

Քարտեզ 6. Կարմիր գրքում գրանցված կենդանիների տեսակների բաշխվածությունը

Քարտեզ 7. Ազգային պարկի և դրա պահպանական գոտու սահմանները

Քարտեզ 8. Ազգային պարկի տարածքա-գործառնական գոտիները

Քարտեզ 9. Դեպի ամառային արտավայրեր գյուղատնտեսական կենդանիների տարանցիկ տեղափոխման երթուղիներ

Քարտեզ 10. Անտառների բաշխվածությունն ըստ գերակշռող ծառատեսակների և հասակային փուլերի

Քարտեզ 11. Անտառների բաշխվածությունն ըստ բոնիտետային դասերի

Քարտեզ 12. Անտառների բաշխվածությունն ըստ լրիվության

Քարտեզ 13. Բնական և մշակութային հուշարձանների բաշխվածությունը

Քարտեզ 14. Տուրիստական հիմնական երթուղիները